



Բ. ԲԱՇԵԱՆ

ՀԱՅԿԱՐԱՆ

Ե- ԳԻՐՔ

(Բարեփոխում)



ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ ՎԱԿԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

420.21
P19.1
ԲԶ
1975
ՕՐ

Բ. Թ Ա Շ Ե Ա Ն

ՀԱՅԿԱՐԱՆ


Ե. ԳԻՐԳ

Ե. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍՈՐԲ ԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԿԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՊԵՅՐՈՒԹ

1975


 ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ



ՊԵՏԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ



1. ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
 Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
 Միասին բազմած,
 Մի շրջան կազմած,
 Քեֆ էին անում
 Եւ ուրախանում
 Մեր հրակայ պապերն ու մեր հայրերը՝
 Գիւլի տէրերը:

Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
 Երեք դասընկեր,
 Նրանց առաջին գրվածքաց կանգնած,
 Ձեռներըս խոնարհ սրբաներիս դրած,
 Զի՛լ, ուժեղ ձայնով նրբանց ըսպատում
 Տալ էինք ասում:

Երբ զըւարթաւայն մեր երգը լրտեց,
Մըռայլ քամադան պիտեբն ոլորեց,
Նըրա հետ վերցըրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. «Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք...»:

Ժամանակ անցաւ, նըրանք էլ անցան,
Զըւարթ երգերըս վըշտալի դարձան:
Ու ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչո՞ւ ասացին. «Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք...»:

Խաղաղութի՛ւն ձեզ, մեր անբա՛խտ պապեր,
Ձեզ տանջող ցար մեզ էլ է պատել:
Այժըմ, տխրութեան թէ քեֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում. «Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք...»:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Վիքթորիա.— *Սխառ մեծ, հսկայ:*
- Մալպատակ.— *Մալպատակ, սուքերը ծալած:*
- Ժիր.— *Աշխոյժ, երանգուն, աչքաբաց:*
- Գեղզուկ.— *Գիւղացի:*
- Զիլ.— *Բարձր եւ սուր (ձայն):*

Սպաս.— *Սպասարութիւն, ծառայութիւն, կոչունք, կե-
րութիւն: «Սպաս»ը չլիտթել սպասել բային հետ: Սպաս՝ կը
նշանակէ նաև ամէն տեսակ կազմաններ, անօթներ, զարդեր:*

Տաղ.— *Երգ, քերթուած, ստանաւոր: Այս բառէն կազմուած
են տաղասաց, տաղերգու, տաղարան, տաղնչափ, տաղաչափու-
թիւն:*

Թամադա.— *Կերութեամբ սեղանի վարիչ, սեղանապետ:*

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (1869-1923).— Մեծ եւ ուսած
է Լոռի գաւառի Դսեղ գիւղը. յաճախած է նաև Թիֆլիսի Ներ-
սիսեան վարժարանը: Գրած է մասնաւորաբար հեփիաքներ,
պատմութեան եւ քերթուածներ: Գլխաւոր երկերն են «Անուշ»,
«Սասունցի Դաւիթ», «Քաջն Նազար», «Գիփոք» եւն: Կատարած
է նաև քարգմանութիւններ ուսերէնէ: Իր ամբողջական երկե-
րը քանի մը անգամ հրատարակուած են Հայաստանի մէջ: Հա-
նելի պատմող է: Լեզուն՝ պարզ եւ յստակ. գիւղական բառերով
ու բացատրութիւններով խոսում:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ինչո՞ւ հեղինակը «Հին
օրհնութիւն» կը կոչէ իր այս քերթուածը: Ի՞նչ զգա-
ցումներ կ'արտայայտէ իր պապերուն ու հայրերուն
հանդէպ: Կա՞յ տարբերութիւն հին եւ նոր սերունդնե-
րուն միջեւ:— Ի՞նչ է այս քերթուածին մէջ տիրող
գլխաւոր գգացումը:— Ի՞նչպէս կը գտնէք Թումանեա-
նի լեզուն. ի՞նչ յատկանիշներ ունի ան, ի՞նչ թերու-
թիւններ եւ ի՞նչ առաւելութիւններ: Իր գործերէն ո՞րը
կարդացած էք:

Փորձեցէք դուք ալ կարն ոտանաւոր մը գրել, նի-
քը առնելով ձեր առօրեայ կեանքէն: Ոտանաւոր գրե-
լու համար կան որոշ կանոններ (չափ, յանգ եւն.):

2. ՀԵՐՈՍԻՆ ՄԱՀԸ

1

Բուզայի զինուորները կը հեռապնդէին խուժեցի ղորավարը՝ Յովնան, որ, տանիքէ տանիք ցատկելով, ի յնալով ելլելով վերջապէս հասաւ անհիւսնի տան կտուրը: Հոն, իր նիզակին կռթնելով, իջաւ փողոց, ուր

հեծեալ զինուորներու խումբ մը դիմաւորեց զինք: Յովնան ստիպուեցաւ փողոցին հակառակ կողմը դառնալ, բայց հազիւ քանի մը քայլ առած էր, երբ խառնիճաղաւսն մը ելաւ դիմացը:

Յանկարծ մէկը սոսկումով ետ քաշուեցաւ եւ աղաղակեց.

— Ահա՛ թշնամեաց գլուխը:

Վայրկենարար հարիւրաւոր սուրեր մերկացան, եւ ամբողջ շրջապատեց «թշնամեաց գլուխը», որ նոյնպէս սուրը մերկացնելով յարձակեցաւ՝ ճամբայ բանալու համար իրեն: Մէկ կողմէ կը պաշտպանուէր վահանով, իսկ միւս կողմէ սուրի հարուածներ կ'իջեցնէր աջ ու ձախ եւ կը յառաջանար անվեհեր:

Բայց այդ պահուն սուրը կտարեցաւ, եւ թշնամիներու խումբին պետը, որ մինչ այդ խոհեմութեամբ



հեռուն կեցեր էր, առաջ անցաւ եւ Յովնանի գլխուն իջեցուց մուրճի հարուած մը, որ սաղաւարտը ջախջախեց եւ դետին գլորեց խուժեցի ղորավարը:

2

Հարուածի պատճառած թմրութենէն հազիւ սթափած, զինուորները առին Յովնանը իրենց ուսերուն վրայ եւ տարին ոստիկանին պալատը: Ու երբ Բուզայի առջեւ հանեցին զինք, այս վերջինը իր մանր ու սուր աչքերը ուղղեց այս մարդուն վրայ, որուն «թշնամեաց գլուխ» անունը կու տային:

— Ո՞վ ես դուն, ի՞նչ է անունդ, — հարցուց ոստիկանը:

— Յովնան է իմ անունս, — պատասխանեց խուժեցիին անխռով:

— Դո՞ւն ես Յովնան Խուժեցիին:

— Այո՛, ես ինքս եմ:

— Եւ ի՞նչպէս կը համարձակիս դուն, անհաւատ չուն, այս քաղաքը մտնել: չե՞ս գիտեր, որ ես՝ Բուզա՛ հոս կը նստիմ, ես՝ ամենակարող փոխանորդը ամիրապետին:

Յովնան գլուխը վերցուց եւ, իրրեւ պատասխան այս նախատական խօսքերուն, բաւական համարեց արհամարհոտ նայուածք մը նետել ոստիկանին վրայ:

— Ի՞նչ, ինձի պատասխան չե՞ս տար. դուն չե՞ս գիտեր ուրեմն, թէ մինչեւ ո՞ր կը հասնի իմ կարողութիւնս:

Այս խօսքերը ըսելու պահուն ատամները կը կրճտէր եւ թունալից աչքերը յառած կը պահէր իր խօսակցին վրայ, բայց ի վերջոյ ստիպուեցաւ խոնարհիլ Յովնանի անխռով նայուածքին առջեւ ու լռեց:

Այն ատեն Յովնան ըսաւ հանդարտ ձայնով .

— Իմ համարձակութիւնս պարզ ապացոյց է, որ վատութիւնը շատ հեռու է ինձմէ : Եթէ դուն լաւ յիշողութիւն ունենայիր, պէտք է յիշէիր, թէ այդ Խուլթեցի Յովնանն էր, որ քու նախորդ՝ Ապուսէթի որդի Եուսուֆը իր զօրքերով բնաջինջ ըրաւ Մուշի մէջ : Նոյն Յովնանն էր, որ քու յիսուն հազար հողինոց բանակը ջարդեց ու փախցուց Բռնաչէնի մէջ : Նոյն Յովնանն էր դարձեալ, որ փոքր դունդով հարուածեց քու Ժիրակի զօրավարը : Միշտ նոյն Յովնանն էր, որ Դուրինի դրան մօտ, քու աչքերուդ առջեւ, իր ազգին դաւաճաններն ու մատնիչները կախազան հանեց եւ երկու հարիւր հողով Ծիրակի, Արտահանի եւ Արտանուշի մօտ դարկաւ ու կորակոր հալածեց քու հազարաւոր զինուորներդ : Հիմա, երբ Աստուած այդ Յովնանը քու ձեռքդ է տրուել, քու եւ քեզի նման դազաններու գործն է տանջել ու մեղցնել զայն, բայց նախատե՛լ . . . այդ կը նշանակէ միայն ցոյց տալ սրտիդ անարդութիւնը եւ մտքիդ տկարութիւնը :

— Այդ վիճակիդ մէջ դուն դեռ զիս նախատե՞լ կը համարձակիս եւ չե՞ս հասկնար, թէ ես ինչ կրնամ ընել : Քեզի պէս անօրէնին ես կրնամ ներել, սրայմանով միայն, որ ուրանաս հաւատքդ, ընդունիս ճշմարիտ կրօնքը, ճանչնաս Աստուծոյ կարողութիւնը հոն, ուր կայ զօրութիւն, փառք, պատիւ եւ մեծութիւն : Տե՛ս, թէ ուրկէ ո՛ւր կը տարածուի մեր իշխանութիւնը : ամէն դիմադրութիւն անապատի խոր է անոր առջեւ : Մտիկ ըրէ իմ խօսքերս, զղջա՛ եւ ես կը ներեմ՝ քեզի ու կը շնորհեմ ո՛չ միայն կեանքդ, այլեւ մեծութիւն : Ապստամբին պատիժը մահ է, մինչ ես կեանքդ քեզի կը շնորհեմ :

Հեղնական ժպիտով մը միայն պատասխանեց Յովնան այս խօսքերուն . բայց երբ Բուզա, շփոթած ու

շուարած, կը ջանար մեծ-մեծ բանալ իր փոքրիկ աչքերը, Յովնան դարձաւ անոր ու ըսաւ .

— Դուն, Բուզա՛ . կը համարձակիս աւազա՞կ անուանել զիս, որ ելեր եմ պաշտպանելու հայրերուս երկիրը, իմ ազգիս ու կրօնքիս սրբութիւնը, որոնց համար ո՛չ թէ մէկ, այլ հազար անգամ մեռնիլ շատոնց աչք առած եմ ես : Հրամայէ՛, թող դան դահիճները, այս մարմինը քուկդ է, բայց մինչեւ հոն կը հասնի քու իշխանութիւնդ : Չկայ տանջանք մը, որ զիս վախցնէ :

Յովնանի աչքերը անբան բոցավառ էին ու շանթածիւղ, որ Բուզա ալամայ սարսռաց եւ հրամայեց հեռացնել այս մարդը, բանտ տանիլ եւ կրկին շղթաներով շղթայել :

Երկրորդ օրը հանեցին Յովնանը բանտէն եւ, զինուորներու ու դահիճներու ուղեկցութեամբ, տարին գլխատման վայրը :

Անխոտ ու անսասան, Յովնան վերցուց շղթայալիպ թեւերը, աղօթեց եւ վիզը երկնցուց դահիճին : Փայլատակեց սուրը եւ գլուխը ինկաւ վար :

Սմբատ սպարապետ զնաց բռնաւորէն ինդրելու, որ նահատակին մարմինը իրեն յանձնուի : Իր խնդրանքը ընդունուեցաւ :

Յովնանի մարմինը զրուեցաւ Սմբատաւանի Մայր Եկեղեցին, ուր ամէն յարգանք ընծայուեցաւ անոր, ինչպէս վայել էր մարտիրոսի մը եւ ազատարարի մը : Ժողովուրդը երկար ատեն կը յիշէր սասունցիներու այս քաջ ու անվախ զօրավարը, որ վտանգի օրերուն միշտ օգնութեան հասած էր իրեն :

Տարի մը ետք, մայր իշխանուհին փոքրիկ վկայա-
րան մը շինել տուաւ եւ հոն փոխադրեց Յովնանի
ածիւնները: Սեղանին առջեւ մարմարէ կախարիչ մը
դրուեցաւ, որուն վրայ փորագրուած էր.

«Աստ հանգչի Յովնան Ունթեցի, նահատակեալ ի
վերայ հաւատոյ Քրիստոսի, Աստուծոյ եւ բաղմաշար-
չար ազգիս հայոց»:

ԾԵՐՆՆՅ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կտուր.— Երդիք, տանիք:

Խառնիքազանն.— Խառն, անկարգ բողբոջիւն, ամբոխ:

Անվեհեր.— Առանց վախի, անվախ:

Սաղաւարտ.— Գլուխը պաշտպանելու համար մետաղէ դըւ-
խարկ:

Սքափիլ.— Արթննալ, խելքը դըւխը գալ:

Ոստիկան.— Արարներու տիրապետութեան ատեն այս անու-
նով կը կոչուէր այն բարձրաստիճան պաշտօնեան (կուսակալ կամ
մարզպան), որուն ամիրապետը կը յանձնէր Հայաստանի կա-
ռավարչութիւնը: Այս տեսակ ոստիկաններ էին Ափշին, Նուսուֆ,
Բուդա:

Անխտով.— Առանց չիւթելու, անվրդով, հանդարտ:

Դուիմ.— Հին Հայաստանի մայրաքաղաքներէն մէկը, որ ա-
ւերակ է հիմա:

Անարգուքիւն.— Նուաստութիւն, ցածութիւն:

Խոխ.— Չորցած փայտի կտորուանք, ցախ, որ դիւրաւ կը
վառի:

Շանթաճիգ.— Շանթի արձակող, փայլատակող:

Անասան.— Չաստանող, չգողացող, չվախցող:

Սմբատ.— Սպարապետ, ընդհանուր հրամանատար հայոց,
Բաղրատունեաց տոհմէն, դերի տարուեցաւ Պաղտատ եւ քանտին
մէջ մեռաւ 856ին:

Մարտիրոս.— Նահատակ:

Ամիրապետ.— Այսպէս կը կոչուէին Պաղտատի իշխանները,
իշխանապետ:

Ասամ.— Աղայ:

Կորակոր.— Կորակուրիս, ամօթահար, գլխիկոր:

Վկայարամ.— Մատուռ, ուր մարտիրոսներու մասունքները
կը դրուին: Վկայ՝ կը նշանակէ նահատակ:

Անիւն.— Մոխիր, մնացորդ (մարմնի):

Աստ հանգչի.— Գրաբար բացատրութիւն մը՝ հոս կը հանգչի:

ԾԵՐՆՆՅ (1822-1888).— Տոքթ. Յովսէփ Շիշմանեան, ծնած
է Պոլիս եւ մեռած Թիֆլիս: Ուսումը ստացած է Վենետիկ, Միխ-
րաբեան վարժարանը, ապա Փարիզի բժշկական համալսարանը,
ուրկէ վկայուած է իրրեւ բժիշկ: Պոլսոյ եւ Թիֆլիսի մէջ վա-
րած է ուսուցչական եւ այլ հանրային պաշտօններ: Բաֆֆիի պէս
մասնաւորաբար մշակած է պատմական վէպը: Իր գործերն են
«Թորոս Լեւոնի», «Երկունք Թ. դարու» եւ «Թեոդորոս Ռշտու-
նի»: Բոլորն ալ գրուած պարզ ու գրաւիչ լեզուով եւ հայրենա-
սիրական տափ շունչով:

ԹԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ վեր
հանել գործող անձերուն նկարագրին գլխաւոր գիծերը:
Իրարու հակադրել Յովնանը եւ Մերուժանը: — Ծերեւ-
ցի ո՞ր գործէն առնուած է այս կտորը: Կարդալ ամ-
բողջ վէպը, բաղդատել Բաֆֆիի վէպերուն հետ, նըշ-
դելով երկուքին առաւելութիւններն ու բերութիւննե-
րը: — Խօսիլ արարական տիրապետութեան, ամիրապե-

տին փոխանորդներուն՝ ոստիկաններու գործունեութեան մասին Հայաստանի մէջ: Լայն բացատրութիւններ տալ Սմբատ սպարապետի, Բագրատունիներու եւ Դուիւնի մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ը գիրք բառերու մէջ կը հնչուի, բայց չի գրուիր. օրինակ՝ բժիշկ, գտնել, բարձր: Ը կը դրուի սակայն բառին սկիզբը՝ մ եւ ն գիրերէն առաջ. օրինակ՝ ընտանիք, ըմբոստ, ընկեր: Ը կը դրուի նոյնպէս պտըտիլ, անցընել, ընդ, ըստ, ըսել, ըլլալ բառերուն եւ կը մասնիկին, ինչպէս նաեւ այն բարդ բառերուն մէջ, որոնց երկրորդ բառը ըով կը սկսի. օրինակ՝ դասընկեր, գերբնտիր, սրբնբաց, խոչընդոտ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.— 1. Հայ նշանաւոր գորավարներ, 2. Պարզ վէպը եւ պատմական վէպը, 3. Բափփի եւ Ծերենց:

3. «Ի Հ Ե Ռ Ա Ս Տ Ա Ն Է»

1

Օրթագլուղի հոռմէական հայոց վարժարանը շնորհայի բան մը ունէր իր վրայ:

Ո՛չ, մերիւններուն չէր նմաներ այս դպրոցը. իր նոր ձերմակ ներկուած երեսովը, երկաթէ մաքուր կանաչ փեղկերովը, սղտիկ չափին ու շնորհալի ձեւին մէջ, շալէի մը կը նմանէր:

Ակամայ կը բաղդատէի այս նորաչէն յարկին վայելուչ ճարտարապետութիւնն ու զուարթ երեսը մեր աղջային վարժարանին խարխուլ երեսովին, տարապոյժման տարածութեանը հետ:

Այս խորհրդածութիւնները չըրինք այն ատեն, երբ, թարգմանչաց վարժարանին խանդարեալ վիճակէն յուսաբեկ, հարկադրուեցանք հոռմէական դպրոցը դիմել:

Կը սիրէինք այն կիսափուլ շէնքը, որուն հրաժեշտ կու տայինք. ծոած, կտորած գրասեղանները, որոնց վրայ արմուկնիս մաշեցուցած էինք. սեղանատունը, ոչ շատ մաքուր, կերակուրի հոտերով ծանրացած: Մեր վարժութիւնները, մեր ծանօթները կը ձգէինք հոն, անտեսէն մինչեւ կառավարիչը, ու վերջին պահուն կը մոռնայինք դանդաղի մեր բոլոր պատճառները, ի դէպս



ու յանդէպս արուած պատիժներուն դառնութիւնը, երբ կը պատրաստուէինք ահա ոտքերնիս դնել նոր վարժարանի սեմին վրայ:

Ո՞վ պիտի դռնէինք այս շէնքին մէջ. ի՞նչ տեսակ մարդիկ էին ասոնք, որոնց կէս եւրոպացիի ձեւերուն առջեւ մեր ասիական կերպերն ու շարժումները ծիծաղելի պիտի թուէին:

Ու ծուղակի մը մէջ բռնուածի պէս, յօժարութեամբ ներս մտնելէ ետք, առջի քայլէն կը դըձայինք եկած ըլլալնու համար եւ կամայ մը, անձայն անշուշտ, նահանջելու փորձութիւնը կը դժայինք:

2

Տնօրէնը միջահասակ մէկն էր, հաստարուն ու կայծակնահար ծառի մը կոճղին տպաւորութիւնը կը թողուր զինք տեսնողին վրայ: Արեւակէզ ու թխաթոյր դէմքին խստութեանը տակ անուշութիւնը կը պահուէր, յիշեցնելով այն ամպամած երկինքը, որ ծիրանի դօտի մը կը պարզէ աչքիդ, չսպասուած վայրկեանի մը:

Իր ալեւորած մազերը կ'երկարէին, կը ծփային ուսին վրայ բանաստեղծի մը, արուեստագետի մը հողմածածան մազերուն պէս, ու ճերմկած մօրուքը, կուրծքին վրայ փռուած, վեհութեան շուքը կ'աւելցընէր իր պատկառելի դէմքին վրայ:

Ձայնը, խորունկէն եկող արձագանդի մը պէս, թաւ ու տրտում շեշտ մը ունէր:

Այս տնօրէնը տղթ. Եիշմանեանն էր:

Մենք, նորեկները իր դպրոցին մէջ, ամենէն աւելի իր հոգածութեանը առարկայ եղանք: Մայրենի լեզուն կը սիրէր եւ, իր բոլոր ջանքերուն հակառակ, անոր արժանաւոր տեղը չէր կրցած տալ իր վարժարանին մէջ. եւ ահա իրենց լեզուն սիրող ու դիտցող պա-

տանիներու ամբողջ խումբ մը մէկէն կու դար իր քովը, իր ձեռքին տակ:

Կը յիշեմ, որ օր մը, Եղիշէի մէկ հատուածը կարդացնելով հոռոտական աշակերտի մը, հարցուց անոր, թէ աշխարհիս ո՞ր մասին մէջ կը դռնուէր «ի հեռատանէ» կոչուած երկիրը, որ այդ հատուածին մէջ կը յիշուէր:

Հեռատան. աշակերտը մտածեց: Մեր կարդին յառաջադէմներէն մէկն էր ամէն դասի մէջ, բացի իր մայրենի լեզուի դասէն: Եփոթած կը մտածէր քաղաքական աշխարհագրութեան իր բոլոր յիշատակները ամփոփելով. Պելուճխատան, Աֆղանխատան, Հնդկաստան, Պարսկաստան... Հեռատան:

Ապահովաբար Ասիոյ մէջ ըլլալու էր այս երկիրը. «ստան» վերջաւորած անունները ուրիշ որեւէ տեղ չէին կրնար դռնուիլ. ու համարձակութեամբ դարձաւ տնօրէնին.

— Ասիոյ մէջ:

Ահազին քրքիջով մը ողջունեցինք այս ասուց պատասխանը: Ամբողջ սրահը թնդաց մեր քահքահէն: Թարգմանչաց վարժարանը կը ծիծաղէր իր կորսնցուցած աշակերտներուն վրէժը լուծելով:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ի հեռատանէ».— Այս բառը դորձածուած է Եղիշէի պատմաբանի վերջին գլուխին մէջ, ուր կը խօսուի այն նախարարներու մասին, որոնք «Քրիստոսի սիրոյն համար իրենց անձերը աքսորի կապանքներուն յանձնեցին»: Բառական իմաստով «ի հեռատանէ» կը նշանակէ հեռու տեղէ, օտար երկրէ, օտարութենէ:

Հոռմեական.— Կաթողիկէ, կաթոլիկ:

Շալէ.— Ֆրանսերէն բառ. կը նշանակէ ամարանոց: Այս անու- նով կը հոչուին մասնաւորաբար զուիցերիացի զիւղացիներու տուները:

Տարապայման.— Չափէ դուրս, չափազանց:

Ի դէպս եւ յանդէպս.— Գրարար բացատրութեան ձեւ մը. կը նշանակէ տեղի — անտեղի, յարմար թէ անյարմար:

Արեւակէզ.— Արեւէն այրած:

Թխաքոյր.— Թուխ եւ թոյր բառերէն կազմուած է. թուխ, մութ դոյն ունեցող:

Ծիրանի գօտի.— Ծիրածան, օղերեւոյթ՝ զոյնդդոյն կամարի ձեւով. ծիրանի գօտին եօթը դոյն ունի:

Ալեւորած.— ձերմկած:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ.— (1861—1915).— Ծնած է Պոլսոյ արուար- ձաններէն Պէշիկթաշի մէջ, ուր ստացած է իր նախնական կրթու- քիւնը: Ապա Օրթագիւղի հայ կաթողիկէ վարժարանին մէջ աշա- կեցուած է տոհմ. Շիշմանեանի (Ծերեմոց): Աւարտած է Պոլսոյ երկրաչափական վարժարանը եւ հետեւած իրաւաբանական հա- մալսարանին, ուր պատժական օրէնագիտութեան դասախօս նշա- նակուած է հետագային: Արհեստով փաստաբան էր: Ունեցած է գրական եւ հանրային բեղուն գործունէութիւն: Իր գործերէն հատորով հրատարակուած են «Անհետացած սերունդ մը», «Երդն- մտանքի ձայներ», «Կեանքը ինչպէս որ է», «Լուս ցաւեր», «Էջեր ուղեւորի մը օրագրէն»: Գրած է նաեւ օրէնագիտական կարգ մը գործեր, բուրքերէն եւ ֆրանսերէն: Մեր մէջ նորավէպի անգե- րազանցելի վարպետն է: Նահատակուած է 1915ին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ի՞նչ զգացում կը տա- ծէ հեղինակը իր յանախած հին եւ նոր վարժարաննե- րուն, իր հին եւ նոր տնօրէններուն, ուսուցիչներուն հանդէպ: Ի՞նչ կը կարդային այդ շրջանի աշակերտնե- րը դպրոցին մէջ, հայերէնի դասին: Ո՞վ է Եղիշէ: —

Ահա այն նախադասութիւնը, ուր գործածուած է «ի հեռաստանէ» բառը. «Բնագրօք յիշատակեցան նո- քա, եւ ոչ մի տօնի տարեկանաց ոչ ածին զնոսա ի հե- ռաստանէ»: Թարգմանութիւնը. «Անոնք յիշուեցան միայն գրուած յիշատակարաններով, եւ ոչ մէկ տարե- կան տօնի զանոնք տուն չքերաւ հեռու օտարութենէ»:

4. ԳԻՒՂԻՍ ՀԱՄԲԱՆ

Կեանքի նաւակն հետք չըքողուց իր ետին,
Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան.
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նըման:

Հոգիս սակայն կը յիշէ ինչ,
Դո՛ւն, ծաղկաւէտ գիւղիս նամբան,
Ուր փալէինք, գառնուկս ու ես,
Գէպի պուրակն ու բուրաստան,
Անմեղութեան երազին պէս:

Ու ֆովիկէդ, դողդողագին,
Մահէր աղուոր, վրճիտ առուն,
Մերք կամուրջին ու մերք մարգին
Տակ պահուելով կ'երթար հեռուն,
Ամաշութեան իբրեւ ոգին:

Բարակ, նիհար ֆանի մը ճիւղ
Կը գառուէին վրտիտ բունէդ,
Մին կը դիմէր դէպ անշուք գիւղ,
Կը տարածուէր, կ'ըլլար անհետ,
Բալոբելով իրնիքն ու հիւղ:



Մին մագրւցէր բլուրն ի վեր,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար,
Ուր ուռենին կու տար ըստուեր,
Ու սրբինգն իր երգը կու լար,
Զոր կրկնէին գարնան հովեր:

Զմրան ալ, երբ ձիւնն ըսպիտակ
Կը գտնէր մեզ շուրջը թռնրին,
Անհետ կ'ընէր իր ծալքին տակ
Մեր հին գիւղին վըտիտ ուղին,
Ինչպէս մարգերն ու մանիշակ:

Կեանքի նաւակն հետք չըբողոց իր ետին,
Մոռացումը անաւ ինձմէ ամէն բան:
Հին երագներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:

ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քալէիմք.— Փոխանակ ըսելու «կը քալէինք», զեղչուած է կը-ն, վանկ մը շահելու համար: Նոյն ձևով զեղչուած են կը-երը նաեւ սահէր, մաղլըէր, կրկնէին բայերուն սուջեւ: Այս տեսակ զեղչումներ ներքի էին հին ատեն, բայց ներքի չեն հիմա:

Պուրակ.— Փոքր անտառ:

Բուրաստան.— Ծաղիկներու պարտէզ:

Մարգ.— Կանաչ խոտերով ու ծաղիկներով ծածկուած ջրար-բի գետին. մարգագետին:

Վտիտ.— Նիհար, բարակ:

Թռնիր.— Հողին մէջ փորուած կրակարան, որ կը դործած-ուէր հին ատեն, գիւղերու մէջ:

ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ (1874 - 1931).— Ծնած է Մալաթիա, ուսումը ստացած է ծննդավայրին ազգային վարժարանին եւ «Եփ-րատ» գոլէմին մէջ: Եղած է նախ ուսուցիչ, ապա մտած է առե-տրական ասպարէզը եւ երկար տարիներ ապրած է ձիաուրի (ե-քովպիա): Գրել սկսած է կանուխ, 1906-ին: Կեղծանունն է Ռ. Ալիբեան: Իր հրատարակուած գործերն են «Յիշատակաց ծա-ղիկներ», «Ծփանքներ» եւ «Ովասիս»: Ազգուած է անգլ. գրակա-նութեան, մասնաւորաբար Լորտ Պայրընէն: Իր երբքուածներուն մէջ տիրապետող գիծն է քախիծը:

ԹԵԼԱՂՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— «Կեանքի նաւակ» քա-ցատրութիւնը ի՞նչ իմաստով գործածուած է այս երբ-քուածին մէջ: Առհասարակ ի՞նչ զգացումներ կ'արտա-յայտէ հեղինակը: Ի՞նչ ըսել է «անմեղութեան երագ», «ամաշուքեան ոգի», «կեանքի նաւակն հետք չըբո-ղուց»:— Մասնանշեցէք լեզուի առաւելութիւններն ու թերութիւնները այս երբքուածին մէջ: Հանեցէք ընդ-հանուր եզրակացութիւն մը, որ հեղինակին խառնր-ւածքը յատկանշէ:

5. ՄԱՆՈՒԿ ԱՂԱՅԻՆ ՊԱՏՄԱԾԸ

1

Այն խուցը, որուն մէջ Արխտղոմ աղան սպաշխարանք քաշած էր, ունէր իր դէմ սենեակ մը, որ խոհանոցին քովն էր եւ ճաշի յասկացուած էր: Այս սենեակը մտաւ Արխտղոմ աղան, առաջնորդութեամբ տիկնոջը, որ սեղանը պատրաստած էր վերջապէս:



— Մանկ հրամեցէք, Արխտղոմ աղա, — ըսաւ Մանուկ աղա սեղանին վերի կողմը ցոյց տալով իր հիւրին:

— Հրամանքնիդ նրասեցէք, ես ալ կը նստիմ, — պատասխանեց հիւրը ցոյց տրուած տեղը նստելով:

— Տիկինը մինչևս որ կերակուրները տաքցնէ եւ բերէ, մենք կրնանք խօսիլ եւ ժամանակ անցրնել, այնպէս չէ՞, Արխտղոմ աղա:

— Այո՛, — պատասխանեց հիւրը այնպիսի եղանակով մը, որ կը հասկցնէր, թէ աւելի լաւ է նախ կերակուր ուտել եւ ապա խօսիլ:

— Մտիկ ըրէք ուրեմն այսօր մեր ղլխուն եկածները: Բանի մը չարաթէ ի վեր թաղականի մը ընտրութեան ետեւէ ինկած ենք: Գուք հիմա ձեր մտքէն պիտի ըսէք, թէ մտրդ Ատաուճայ, թաղականը քու ինչուդ պէտք: Անանկ չէ, Արխտղոմ աղա. աղջկն դործը ես չնայիմ, դստն չնայիս, ան չնայի, ո՞վ նայի ուրեմն.

«ինչուս պէտք»ը շատ պէշ բան է, — անով ամէն մարդ մտքի կը քաշուի եւ աղջկն դործերն ալ երեսի վրայ քաշուածս իմ դիտցածս՝ ամէն մարդ ձեռքէն եկածին չէր աղջկն դործերուն ալ աշխատելու է: Օղի մը կը ինկէր, Արխտղոմ աղա, ախորժակ կը բանայ:

— Ետա լաւ:

Երկու բարեկամները մէյ մէկ դաւաթ օղի խմեցին իրարու կենդանութեանը, եւ Մանուկ աղա սկսաւ իր ատենաբանութեան:

— Այս ատու, — ըսաւ, — մեր թաղին աղագլին դրօսարանը պացած ժամանակս, ձեզմէ աղէկ չըլլայ, մեր բարեկամներէն Մելքոն աղային հանդիպեցայ: Այս Մելքոն աղան քանի մը տարի շատ հանդիստ կեանք վարեց, բայց վերջէն բախտը դարձաւ, ձախորդութիւն ձախորդութեան վրայ եկաւ եւ ունեցած-չունեցածը բոլորովին կորսնցուց: Օր մը ստնեմ գինք հոս բերեմ եւ տեսէք, թէ ինչ բարի մարդ է: Եղբայր մըն ալ ունի, որ վարպետ ժամադործ է, ատենօք Պէօյիւք Տէրէ կը նստէր, վերջը քանի մը տարի ալ Սիլւատար նստաւ, ետքէն Գուճ Գարու դնաց, բայց հոն ալ չկրցաւ նստիլ եւ հիմա չեմ գիտեր ո՛ւր կը նստի: Շատ վարպետ ժամադործ է: Թորոս աղան, որ ոչ մէկ ժամադործի կը յանձնէ իր ժամացոյցը, անոր կուտայ, որ մաքրէ: Այս Թորոս աղան կը ճանչնա՞ք, ուրիշ տեսակ մարդ է: Անոր մէկ պատմութիւնը ընեմ քեզի եւ մտիկ ըրէ՛, որ տեսնես, թէ աշխարհի վրայ ասանկ մարդ մը կը դրուուե՞ր՞ եղեր...:

— Բերե՞մ պաւերը, — հարցուց տիկինը սենեակին դուռնէն ներս երկնցնելով ղլուխը:

— Քիչ մը համբերէ, տիկին, — խօսքս լմնցնեմ՝ վերջը բեր, այնպէս չէ՞, Արխտղոմ աղա, խօսք պէտք է ես՝: Եթէ մտիկ ընելու ժամանակ չունիք եւ ղլուխնիդ կը ցուցնեմ կոր, ըսէ՛ք:

— Ատ ի՞նչ խօսք է...

Արխտողոմ աղա չկրցաւ շարունակել իր խօսքը, զոր ընդմիջեց Մանուկ աղա՝ Թորոս աղային պատմութիւնը սկսելով:

2

— Այս Թորոս աղան, — շարունակեց իր խօսքը Մանուկ աղա, — մուշտակագործ է, ականջը խօսի, եւ իր ընտանիքով հանգիստ կեանք մը կը վարէ: Իր տան պէտք եղած պարէնը, կարասիներն ու հանդերձեղէնը իր ձեռքովը կ'առնէ եւ իրմէ զատ ոչ մէկուն կը վստահի, ականջը խօսի: Մասվաճառէն միս կ'առնէ, տուն երթալուն պէս կը կռօէ եւ անպատճառ քանի մը տրամ պակաս կը գտնէ. մասվաճառին կ'երթայ, հետը կռիւի կը բռնուի եւ քանի մը տրամ պակաս տրուած միսը կ'առնէ տուն կը դառնայ: Ասանկ տարօրինակ մարդ մըն է, ականջը խօսի:

«Օր մը, այս Թորոս աղան, ականջը խօսի, ժամացոյցին փոշինները մաքրել տալու համար ժամագործի մը կ'երթայ եւ հետը սակարկութեան սկսելով վերջապէս տասնհինգ դահեկան կը հաւանի տալ, այն պայմանաւ, որ ժամագործը իր առջեւ մաքրէ ժամացոյցը, վասն զի կը վախնար, որ ժամացոյցին մէջէն բան մը կը գողցուի: Ժամագործը իր պատուին դէմ անարգանք մը կը համարէ Թորոս աղային առաջարկը եւ կը բարկանայ. եթէ դուն ըլլայիր ժամագործին տեղը, չէի՞ր բարկանար:

— Կը բարկանայի, — պատասխանեց Արխտողոմ աղա, որուն խելքը-միտքը ապուրին վրայ էր եւ բնաւ ականջ չէր կախեր Մանուկ աղայի ըրած պատմութեան:

— Թորոս աղան, ականջը խօսի, կրակ կը կտրի

ժամագործին բարկանալուն վրայ եւ քանի մը ծանր խօսքեր կ'ընէ, որ ընելու չէր, այնպէս չէ՞:

— Այնպէս է, — պատասխանեց դարձեալ Արխտողոմ աղա մեքենաբար, միշտ հաւանութեան պատասխաններ տալով իրեն եղած հարցումներուն, որպէս զի խօսքը չերկարի եւ կերակուրը բերեն:

— Ժամագործը կը վստահ Թորոս աղան, ականջը խօսի: Թորոս աղան ալ, ականջը խօսի, խանութէն դուրս ելլել չ'ուզեր՝ վստուելը իրեն պզտիկութիւն համարելով: դուն ալ ըլլաս չես ելլեր ա՛:

— Ձեմ ելլեր ա՛, — պատասխանեց Արխտողոմ աղա, որ չէր դիտեր, թէ ուրիշ չէր ելլեր եւ ինչո՛ւ չէր ելլեր, վասն զի, ինչպէս ըսինք, Թորոս աղային ըրած պատմութեան ե՛ւ ոչ մէկ բառը ականջը մտած էր:

— Մեծկրուրը կը սկսի. ժամագործը ապտակ մը կը զարնէ Թորոս աղային, ականջը խօսի. Թորոս աղան ալ, ականջը խօսի, կից մը կուտայ ժամագործին: Կարծեմ ո՞վ ալ ըլլար Թորոս աղային տեղը, ուրիշ կերպով պիտի չկրնար պատասխանել ժամագործին ապտակին: Ոտքը պաղնեմ, Արխտողոմ աղա, ըսէ՛, այնպէս չէ՞:

— Դուք ալ հոս թոմաթէսով կը շինէք, — հարցուց մէկէն ի մէկ Արխտողոմ աղա:

— Թոմաթէսով...

— Այո՛, ուրիշ տեղեր թոմաթէսով կը շինեն եղեր:

— Ժամացոյցը:

— Ո՞ր ժամացոյցը:

— Թորոս աղային ժամացոյցը:

— Թորոս աղան ո՞վ է:

— Մտիկ չըրի՞ր ուրեմն ըրած պատմութիւնս:

— Ըրի, կատարեալ մտիկ ըրի, — ըսաւ Արխտողոմ աղա, որ բնաւ մտիկ չէր ըրած Մանուկ աղային պատմածը:

Արխտոզոմ ազան շատ իրաւունք ունէր իր տանտիրոջ երկարածիդ ճառը մտիկ չընելու, մահաւանդ անօթի փորով:

Ոյլ ալ ըլլար, մտիկ չէր ընէր ա'...

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արխտոզոմ ազա.— Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ» անուն գործին գլխաւոր հերոսը:

Ապաշխարանք.— Յանգանք մը կամ մեղք մը քուէլու համար արուած պատիժ. զջնում. զուր նեղութեան ենթարկուիլ:

Հրամանգնիդ.— Հին ատեն այս բառը կը գործածէին «զուք» ըսելու տեղ: Հիմա ալ կը գործածուի, բայց հեղինակն իմաստով միայն:

Ատենարանութիւն.— Բառական իմաստով՝ ատենին առջև խօսիլ. ճտտախօսութիւն, բանախօսութիւն:

Պարէն.— Մնունդի նիւթ, ուտեստեղէն. ուտելիքի պաշար:

Հանդերձեղէն.— Զգեստեղէն, հագուստեղէն:

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ (1842 - 1891).— Ծնած է Ադրիանուպոլիս (Էտիքնէ): Նախնական ուսումը ստացած է ծննդավայրին մէջ. մէկ տարի ալ յաճախած է յունական վարժարան: 1863ին հաստատուած է Պոլիս, ուր վարած է ուսուցիչի եւ հաշուակալի պաշտոն: Եղած է խմբագիր «Նփրատ», «Մեղու» եւ «Թատրոն» երգի-ճաքերը: Իր գլխաւոր երկերն են «Հոսիոսի ճեռատերը», «Քաղաքավարութեան վնասները», «Մեծապատիւ մուրացկաններ», «Պոտլոս մը Պոլսոյ քաղերուն մէջ», «Ծիծաղ», «Ազգային ջոջեր» ինչպէս նաեւ «Արիւնիւնի ստամբարոյժը», «Պաղտասար աղբար» եւ «Շաղոբորքը» կտակերգութիւնները: Մեր մեծագոյն երգիծարանն է: Մեռած է Պոլիս, բշուտ վիճակի մէջ, 1891 Մայիս 27ին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պարոնեան միշտ ծագած է մարդոց քերութիւնները, տկարութիւնները եւ յոռի բարբերը. ի՞նչ քերութիւն կ'ուզէ ծաղրելի դարձնել այս գրուածքին մէջ: Քանի մը բառով ներկայացնել Մանուկ աղայի նկարագրին գլխաւոր գիծերը: — Պարոնեանի ո՞ր գործէն առնուած է այս կտորը. ո՞րիչ ի՞նչ դէմքեր սրուած են այդ գործին մէջ: — Մեր գրողներէն որո՞նք մշակած են երգիծական սեռը: Դժուար քէ գիտիմ սեռ մըն է երգիծանքը եւ ի՞նչ է իր հետապնդած նպատակը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ո՛ր եւ ը գիրերով բառ չի սկսիր հայերէնի մէջ, ընդհանրապէս չգիրը կը դրուի անոնց առջեւ. օրինակ՝ հրաւէր, հոնտար: Ռազմ, ռուսք, ըսպէ, բաբունի օտար բառեր են:

Ո՛ր գիրէն ետք ն-էն գառ բաղաձայն չի գար. օրինակ՝ բուռն, դառն, ոսնալ: Բացառութիւն են հոչակ, ուռկան, յուրքի, ուռնանալ, խոչակ, խոպոտ, վառվրոռն:

6. Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ը

1

Այն երեկոյ Հայրս տուն դարձաւ այգուց, փոքրիկ հորթին քարշ տալով յետեւից եւ կանաչ, թարմ խոտի մի խուրձ թեւին տակ:

— Հորթը կապի՛ր, — պատուիրեց ինձ խստութեամբ, առանց անունս տալու:

Ապա ցած դրեց խոտը, մօտեցաւ սրահի թումբին, նստեց, փայտն ու գլխարկը դնելով կողքին: Մայրըս կողկիթն էր լուանում՝ սպասելով կովերին, կիթելու համար: Ես աչքս չէի հեռացնում հօրիցս. նա անհանդիստ էր, մի քանի անգամ, ճակատը սրբեց ու դարձաւ մեծ քրոջս:



— Աղջի՛, էն անիծածը էս առաւօտ կովերը ո՞ր կողմով դաշտ տարաւ, այգիի՞ մօտից թէ նախրի ճամբով:

«Անիծածը» ինձնից ութ տարով մեծ եղբայրս էր, Թորոսը:

— Չգիտեմ, հայրիկ, առաւօտը նա մեզնից առաջ անցաւ, գիւղից դուրս եկաւ, մենք նրան չտեսանք, — պատասխանեց մեծ քոյրս:

— Այգիի կողմից, ի հարկէ, նա միշտ այն կողմից է տանում, — բացազանչեցի ես, առանց մտածելու, թէ իմ ասածը որեւէ բանի կարող է ծառայել:

— Նա է. ուրիշ ո՞վ կարող է լինել. նղովի՛ց արմատ, միշտ նա, — մրմոսց հայրս ու լռեց:

Թորոսը իմ խորթ եղբայրս էր, հօրս առաջին ամուսնութիւնից մնացած միակ տղան: Նա միշտ լռակեաց էր, մռայլ, մտածկոտ ու յամառ: Նա չէր սիրում մեզ եւ մենք էլ չէինք սիրում նրան: Նա արդէն տասնընթեթը-տասնըութ տարեկան էր, բայց դարձեալ թախճոտ ու լռակեաց:

Հայրս, սակայն, նրանից դժգոհելու այլ պատճառներ ունէր: «Կախ գլուխ տղայ է, մանկութիւնից էսպէս էր», ասում էր նա ցաւով, աւելացնելով որ կախ գլուխ մարդը կասկածելի է:

Եւ մենք բոլորս աննկատելի կերպով նրան քաւութեան նոխազ էինք դարձրել: Տանը թէ դուրսը կատարուած ամէն մի անկարգութիւն կամ մեղք նրա վրայ էր նետուած: Մասնաւորաբար ես ու քոյրերս անողորմ էինք, անգիտակից ու անգութ: Նա երբեք չէր բողոքում, երբեք չէր արդարանում: Լուռ էր...

Թորոսը ամբողջ օրը դաշտումն էր, մեր անասունների յետեւից: Երբ երեկոյեան տուն էր գալիս եւ հայրըս սկսում էր նրան յանդիմանել որեւէ յանցանքի համար, որի հեղինակը սովորաբար կա՛մ ես էի, կա՛մ քոյրերիցս մէկն ու մէկը, նա առանց ուշք դարձնելու մօտենում էր հացի տաշտին, մի հաց վերցնում, փաթաթում, թեւի տակ դնում լուութեամբ ու դուրս էր դնում, թողնելով որ հայրս շարունակէ իր անէծքն ու դանդատը:

2

Կովերը դաշտից վերադարձան, Թորոսն էլ նրանց յետեւից ներս մտաւ, գլուխը կախ, դէմքը արեւառ ու մռայլ, ինչպէ՛ս միշտ: Կովերը ներս քշեց գոմը, թող-

նելով բակը նրա'նց, որոնք պիտի կթուէին: Աստ ձեռ-
նափայտը դրեց մի անկիւն, նստեց իր սովորական աե-
ղը, սրահի մի հատիկ աստիճանի վրայ, թիկունքը դէ-
պի մեղ, եւ սկսեց տրեխներէ միջկց թափ տալ աւապի
հատիկները եւ դուլպաների վրայ շարուած փուշերը:

Մայրս, քոյրերիս օգնութեամբ, կոփերն էր կթում:

— Այս առաւ տաւարը ո՞ր կողմով տարար դաշտ,
— դարձաւ հայրս դէպի թորսը:

Հօրս ձայնը դողում էր, նա վրդովմունքից խեղ-
դրւում էր, ես նրան երբեք այս աստիճան բարկացած
չէի տեսել: Վախեցայ ու կծկուեցի:

Թորսը լուռ էր:

— Լեզուդ պապանձուի, խօսիր է՛, այգի մտե՞լ ես:

Թորսը շարունակում էր լուռ թափ տալ տրեխ-
ները:

— Ա՛յ տղայ, — դարձաւ ինձ հայրս, — դնա՛ կն
իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր կտանդ:

Ես մօտեցայ, խոտը բաց արի եւ միջկց հանեցի
խաղողի որթի մի մեծ, թարմ սոս կիսահաս ողկոյց-
ներով: Քարացայ տեղումս: Այն ե՛ս էի կտորել. ող-
կոյցը քաջքեցի, ճիւղը կտորուեցաւ ու ես փոխայ:

Թորսը աչքի տակով նայեց իմ ձեռքի ճիւղին,
նայեց ինձ, դուրսը կախեց ու էլի մնաց լուռ: Ես էլ,
արձանացած իմ տեղում, դուրս վեր բարձրացնել չեմ
համարձակուում. իմ դատաստանն էր կատարւում, ոչ
թէ թորսի:

— Ասա՛, — շարունակեց հայրս աւելի եւ աւելի
տաքացած, — Աստուած նզովէ քեզ, ո՞վ է տեսել, որ
հայ քրիստոնեան Աստուածածնից երկու շարաթ ուսջ
խաղող ուտի. մեղք է, չէ՞. նայե՛ր, ի՞նչ ես արել,
թող ձեռքդ կտորուէր դրա փոխարէն:

Ես գոզում էի ամբողջ մարմնով եւ խաղողի սոսը
ձեռքիս ցնցում էր: Հօրս իւրաքանչիւր խօսքը նետի

պէս սիրամ էր միւսում: Քաջութիւն չունէի տակու, թէ
եւ էի կտորել եւ ոչ թէ թորսը:

Մայրս մէջը քնկաւ:

— Ի՞նչ ես կը քան դայրոցել, տնաչնի՛ մարդ.
դէ՛, բան է, պտտահել է, դուցէ դոզ է մտել այգին:

— Խեղեցի ի՞նչ ասեմ, կնիկ ես է՛. դողը ո՞րտե-
ղից պիտէր այդ շուտ հասած խաղողի տեղը. տանու
դոզ է, ասում եմ, տանու դո՛ղ. ա՛յ, էս նզովուածն է:

— Ա՛յ սրղի, — դարձաւ մայրս թորսին, — ինչի՞
ես լռել. տեսնում ես՝ հայրդ բարկացած է, դէ՛, ասա
որ դուն չես արել, հօ բերանդ չի էրուի:

Թորսը դարձեալ լուռ էր:

Աչքի տակով նայեց ինձ, արհամարհոտ ու վշտոտ:
Ես քիչ մնաց հուլում ու պեխինն անցնեմ: Նա երեւի
չատ լու պիտէր, սր ես եմ յանցաւորը եւ դո՛հ էր, սր
մի դարձանալի դիպուածով հայրս հենց իմ ձեռքն էր
դրել յանցանքիս նշանը, այս դժոխային սոսը, սր այ-
լում, վառում էր իմ մաաները:

Ես նայում էի նրան, այդ հպարտ ու յամառ տղա-
յին, նրա թուխ ու թախծոտ աչքերին, իրար սեղմուած
չբթունքներին, որոնք այնքան կամք էին արտայայ-
տում, նրա արեւառ ու խոհուն դէմքին, այդ սեւացած,
ճաքճքած ձեռներին, եւ այդ ամբողջ պատկերն ինձ
թւում էր նոր:

Կրկիչ արեւի տակ, փշերի ու քարերի միջկց ո՞ր-
քան էր վաղվիկ խեղճ տղան օրեր, շարաթներ, ամիս-
ներ ու տարիներ, եւ դրա հետ միասին քանի՞ քանի
տնգամ ենթարկուել էր ճիւղ այսպիսի դառնութիւննե-
րի իմ ու քոյրերիս երեսից:

Ահա նա վեր կացաւ եւ, առանց նոյնիսկ իր սովորական հացը վերցնելու տաշտից, շարժուեց դէպի բակի դուռը:

Պիտի անցնէր հօրս առաջից, որ լուռ հետեւում էր նրա շարժումներին: Հօրս հայեացքի մէջ կայծակ էր փայլատակում: Նա գունատ էր, եւ ձեռնափայտը դողում էր ձեռքին: Նա երբեք այդպէս սարսափելի, այդպէս անողորմ տեսք չէր ունեցել:

Եւ ես տեսայ, որ նա բարձրացաւ, այն դարհուրելի փայտը բարձրացաւ հօրս գլխից վեր, ճօճուեց օդի մէջ:

— Հա՛յրիկ, հա՛յրիկ, մի՛, մի՛... .

Բառերը խեղդուեցին իմ կոկորդում. ես նետուեցի հօրս ու Թորոսի արանքը, բայց անօգուտ. ես շատ էի փոքր ու անզօր:

Ձեռնափայտը թափով իջաւ Թորոսի թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ նոյնպէս թափով, նոյնպէս անողորմ: Թորոսը չչարժուեց, մնաց կանգնած իր տեղում, դարձեալ լուռ, առանց բողբոջի, նայեց հօրս անհուն տրտմութեամբ, աջ ձեռքով շօշափեց թիկունքի ցաւած տեղը, ու երկու կաթիլ արցունք կախուեցին նրա մուշկ, մթազնած աչքերից, իջա՛ն, իջա՛ն ու այտերի վրայ մնացին քարացած:

Ես խորտակուած էի:

— Ե՛ս եմ, հա՛յրիկ, է՛ս եմ կոտորել ճիւղը... . Է՛ս եմ գողացել... . Թորոսը մեղք չունի, — ճչացի ես:

Ամէնքը չճմեցին. ասես՝ երկինքը յանկարծ փուլ եկաւ գլխներին: Մայրս, չուարած, կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ կոտորուեց, եւ կաթը հոսեց դետնին:

Հայրս գլուխը բարձրացրեց, ինձ նայեց ապշած

աչքերով ու յետ-յետ գնաց, կարծես թունաւոր օձ տեսնէր: Քիչ յետոյ նա մօտեցաւ եղբօրս, ձեռքը դրեց նրա թիկունքին ու դրկեց:

— Ձեռքս կոտորուէր, ո՛րդի, ձեռքս թուլանար, — ասաց նա հեծկտալով. — իսկ դո՞ւ... — դարձաւ նա ինձ, — թող Աստուած քեզ... . ես ի՞նչ ասեմ, դու իմ հոգին կորցրիր, թող Աստուած... . օ՛օֆ... .

Նա շարունակել չկարողացաւ, չուզեց անիծել ինձ, արցունքը թափուեց աչքերից հեղեղի պէս:

— Էլ չեմ անի, հա՛յրիկ, էլ չեմ անի, երբեք, երբեք... .

Եղբայրս թեւով սրբեց աչքերը, նստեց թումբին, գլուխը ձեռքերի մէջ առաւ ու դարձեալ մնաց լուռ:

Այն դիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում. արթուն էի եւ ես, այրում էի, եւ վերմակը գլխիս քաշած՝ երկա՛ր-երկա՛ր լաց եղայ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թոււր.— Հողէ բարձրութիւն, հողէ պատնէշ. նստելու համար բարձր տեղ:

Կովկիթ.— Կուէ կամ փայտէ լայնաբերան աման, որուն մէջ կաթը կը կթեն:

Նախիր.— Եղներու, կովերու եւ գոմէշներու խումբ:

Նգովից արմատ.— Նգովել՝ անիծել. անիծեալ. անիծելու ձև մը:

Թախծոտ.— Տխուր, տրտմ:

Քաւուր-թաւն հոխազ.— Ուրիշի՝ մեղքը քաւելու համար անմեղ զոհ: Նոխազ՝ արու այծ:

Արեւա.— Արեւէն այրած:

- Տաւար.— Նախիր, հղջիւրաւոր անասուններու խումբ:
- Կիսահաւ.— Կէս հասած, դեռ բոլորովին չհասունցած, խակ:
- Տանու.— Տունէն, տնեցի:
- Ճախնաւ.— Ճեղքուած, պատուած, ձեռքին վրայ ձեղքուածքներ առաջ եկած:
- Կիզիչ.— Այրող, մրկող:
- Անողոք.— Շատ խիստ, խստասիրտ:
- Արանք.— Մէջտեղը:

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ (1866-1948).— Ծնած է Արարտեան դաշտի Կոտիքաւա գիւղը, ուր ստացած է իր նախակրթութիւնը. ապա յանախած է Էջմիածնի Գեորգեան ձեռնարանը եւ հետեւած բարձրագոյն ուսման՝ Լոզանի եւ Փարիզի մէջ: Վարած է կրթական, հանրային եւ պետական պաշտօններ Թիֆլիսի եւ Հայաստանի մէջ: 1934-էն մինչեւ իր մահը, ապրած է կաթնուածահար վիճակի մէջ: Գլխաւոր գործերն են «Ազատութեան նմանապարհին», «Իտալիայում», «Լուսիւրներ», «Շվեյցարական գիւղը», «Հայրենիքիս համար», «Ճամբորդը», «Կարօտ հայրենի», «Իմ գիրքը» (2 հատոր), «Արցունքի հովիտը» եւն.: Ահարոնեան ներկայացուցած է բշուառներու կեանքը: Ունի խոր զգայնութիւն, գեղեցիկ եւ պատկերաւոր լեզու: Մեռած է Մարտէշլի եւ քաղուած Փարիզ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմելի նիւթը, ներկայացնելով գործող անձներուն բնաւորութեան զլխաւոր գիծերը: Անոնցմէ ո՛վ աւելի կը գրաւէ ձեր համակրութիւնը: — Բացատրեցէք հօրը բարկութեան պատճառը, ապա՝ զգացած ցաւը անարդար պատիժին համար եւ զղջումը: — Ի՞նչ բանի կը վերագրէք Թորոսի տխուր, քախծոտ ու լռակեաց բնաւորութիւնը: — Շեշտել աւանդապահ գիծը մեր հին բարբերուն մէջ: — Ի՞նչ բանի վախճում կը գտնէք հիմա այդ բարբերէն:

ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ.— Ու գիրին չի հնչիւն տալու համար չ կ'աւելցուի, եթէ չովը ուրիշ ձայնաւոր գիր չկայ: օրինակ՝ պահուրտիլ, կոուրտիլ, հաշուրիլ:

Ա ձայնաւորով բառ չի վերջանար, քովը պէտք է դնել յ. օրինակ՝ ապագայ, կու գայ, քահանայ: Բացառութիւն են ապա, ահա, սա, ասիկա, ատիկա, անիկա: Յ չեն առներ նաեւ կարգ մը օտար բառեր, օրինակ՝ ակադեմիա, Մայտա, Ասիա, Եւրոպա: Յ չեն առներ նոյնպէս երրորդ լծորդութեան պատկանող բայերուն հրամայականները, կարգա՛, խնդա՛, յուսա՛:

ՇԱՐԱԿՐՈՒԹԻՒՆ.— 1. Ներկայացնել փառասէր եւ ինքնագով մարդու տիպար մը, 2. Շատախօսը, 3. Բացատրել «լուսիւրներ ոսկի է» տառծին իմաստը:



7. ԿԱՐՕՏԻ ՆԱՄԱԿ

Կը գըրէ մայրս — «Ո՛վ իմ որդեակըս պանդուխտ,
Դեռ մինչեւ ե՞րբ պիտի օտար լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչեւ ե՞րբ հէզ գըրուխդ
Ես չըսեղմեմ լանջքիս տաք:

Հերի՛ք օտար սանդուխներէն ելլեն վեր
Ոտքերդ, գոր օր մ'ափերուս մէջ տաքցուցի.
Հերի՛ք ալ սիրտդ, ուր իմ գորովս եմ պարպեր,
Գատարկ սրբտես դուրս հիւծի:

Ջահրակիս տակ քեւերս աշխատ յոգներ եմ:
Կ'հիւսեմ պատանձաւ ալ ծամերովս ըսպիտակ:
Ա՛խ; քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ:

Դըրանս առջեւ կը նստիմ միշտ տըխրալիք.
Լուր կ'ուզեմ վրադ ամէն կոռունկէ, որ կ'անցնի.
Այն նիւզն ուռի՛. գոր բու ձեռքով տընկեցիր,
Վըրաս կ'ընէ հովանի:

Իրկուներն ի գո՛ւր դարձիդ կը սպասեմ.
Կու գան կ'անցնին գիւղին քաջերը համակ.
Մշակը կ'անցնի, կ'անցնի կովարձը վըսեմ —
Կը մնամ լուսնին հետ միմա՛կ:

Աւերակ տան մէջ անտէրունչ եմ քողուած,
Մերք շիրիմիս, միշտ օճախիս ծարաւի —
Կրայի մը պէս, որուն աղիքն իր կտորած
Պատեանին դեռ կը կցուի:

Եկո՛ւր, ո՛րդեակ, հայրենի տունըդ շէնցո՛ւր . . .
Դուռն են կտորեր, մատաններն ողջ դատարկեր.
Կը մըտնեն ներս լուսամուտէն ջարդուփշուր
Գարնան ամբողջ ծիծառներ:

Այն բազմաքիւ հօտէն, գամբն մէջ, եկո՛ւկ,
Մընացեր է յոյ մը միայն քաջարի,
Որուն մայրը, յիշէ՛, ո՛րդեակ, քեզ գամուկ,
Կերաւ ափիդ մէջ գարի:

Թեփով բրբնճի եւ առուոյտով պատուական
 Սընունդ կու տամ, արդ, անոր պերն դըմակին.
 Տօսախ սանարով կը սանտրեմ բուրդն աղուական.
 Ան գոհ մըն է քանկագին:

Դարձիդ պըննած վարդերով գուլսն իր համակ՝
 Պիտի մոքքեմ կեանքիդ համար ծաղկատի.
 Իր արեան մէջ պիտի լրւամ, քաղցր որդեակ,
 Ոտքերդ յոգնած պանդուխտի»:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ջահրակ.— Անուանոր գործիք մը, որով բուրդ կամ բամբակ կը մանեն. ճախարակ:
- Ծամ.— Մաղ:
- Հովանի.— Շուք:
- Համակ.— Բոլոր:
- Անտրունչ.— Անտէր, տէր չունեցող:
- Կրայ.— Կրիայ:
- Եզուկ.— Աւաճ, ախոս:
- Խոյ.— Արու ոչխար:
- Կտուր.— Եւտի տեսակ մը, որ երեք կտրակ տերեւներ կընէ եւ որ կը ծանուկ կարգ մը կենդանիներու իրը կեր:
- Տօսախ.— Աշտարակայ Բաւի մը կարծի ու գեղեկ փայտով:
- Արուական.— Զեք, փոփոկ:
- Գննի.— Ջարդար:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ (1884-1915).— Բուն անունն է Դանիէլ Զպուֆեարեան: Ծնած է Սեբաստիոյ Բրգնիք գիւղը, ուր հազիւ գրի կարդալ սորված՝ կը մեկնի Պոլիս եւ կը յաճախէ Մխիթարեան վարժարանը: Ապա ուսումը կը շարունակէ Վենետիկի Մուրատ-Պափայէլեան վարժարանին եւ Կանսի (Պեյճիք) համալսարանին մէջ: 1909ին Պոլիս կը վերադառնայ եւ կը գրադի ուսուցչուրեանք՝ Պոլսոյ եւ գաւառներուն մէջ: Իր հրատարակուած գործերն են «Սարսուռներ», «Յեղիմ սիրտը», «Հեքանոս երգեր» եւ «Հացին երգը», որ լոյս տեսաւ իր մահէն ետք, 1921ին: Նահատակուած է 1915ին: Վարուժան ունի շքեղ լեզու, ինքնատիպ պատկերներ, հզօր երեւակայութիւն: Իր ֆերբուածներուն կը տպակսի սակայն երաժշտականութիւնը:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ո՞րն է այս ֆերբուածին մէջ տիրող գգացումը: Գիւղացի՞ թէ քաղաքացի մայր մըն է կարօտի այս նամակը գրողը:— Լեզուական եւ տաղաչափական ի՞նչ բերութիւններ կը նկատէք այս ֆերբուածին մէջ:— Կրնա՞ք պատասխան մը տալ այս նամակին:

8. ՄԱՆԻՇԱԿԻ ԹԱՂԱՐԸ

1

Ամբողջ Վիեննան ձիւնի տակ թաղուած էր այն օրը: Փողոցներուն ստոն ու ձիւնը սալալատակին վրայէն վերցնելու համար հաւաքուած զօրձաւորներուն խումբը կ'աշխատէր միայն:

Տխուր էր տեսարանը: Այր ու կին, ամէնքն ու ազգատու թեմէն մզուած, փառայած ձեռքերով բրիչը անընդհատ կարծր գեանին կը զարնէին եւ, սառը փրցնելով, ահազին կոյտեր կը կաղմէին:

Հետզհետէ մութը կը կտիւէր:

Յանկարծ դրան դանդակը դարձուեցաւ: Չանդակին ձայնն առնելով տօքի ելայ: Ո՞վ կրնար ըլլալ հիւրը, ո՞վ կրնար այս օղին տունէն դուրս ելլել:

Կիսարաց դրան առջև սղտիկ տղայ մը տեսայ, որ կեցած երեսս կը նայէր:

— Այս սղտն ի՞նչ կ'ուզէ, — հարցուցի սպասուհիին, որ արդէն տղուն ձեռքէն բռնած խոհանոց կը տանէր:

Պրտիկին դեղին մազերը ճակտին փակած էին եւ իր ազգատիկ դիտաները, ձիւնին մէջ թաթխուած, սմբած ձեւ մը ունէին: Եւտ մը, եւ ախորժով, կարմիր ձեռքերը վառարանին մօտեցուցած, սկսաւ տաքնալ: Ձիւնը կաթիլ-կաթիլ կը հալէր, մինչդեռ ինք, իր կապոյտ աչուրներով, հետաքրքրութեամբ մեզի կը նայէր: Սպասուհիս քաղցրութեամբ հարցումներ կ'ուզէր անոր, — ուրկէ՞ կու գար, ի՞նչ կ'ուզէր:

Երբոր լաւ մը տաքցաւ.

— Մայրս, — կ'իմաց ամչնալով, — այս առտու սառ կտորած տոնը սահեցաւ եւ սրունքը կտորեցաւ:

Յետոյ, մատովը վառարանին վրայ եռացող կերակուրները ցուցնելով.

— Ես դպրոցն էի, — շարունակեց, — եւ այսօր դեռ բերանս բան մը չեմ դրած:

Այս որ լսեցի, խոհանոցէն դուրս ելայ ու նշան ըրի սպասուհիին, որ պէտք եղածը հողայ եւ ամէն օր պայն կերակրէ:

2

Չմեռը անցաւ եւ մենք ա'լ սղտիկ տղուն վրայ չէինք մտածեր: Բայց, Չատուան առաջին Կիրակին, առտուն կանուխ մեզի եկաւ կրկին: Մաղերը սանտրուած էին եւ լայն, սղտակ օձիքին տակ խոշոր կապոյտ փողկապը փռուած կը ծփար:

Չեւքը թաղար մը բռնած էր, ուր մանիչակի տունիկ մը կար: Թաղարը ինծի ներկայացուց եւ, աչքերը դետին խոնարհած.

— Ասիկա մայրս ձեզի դրկեց, — ըսաւ, — իբրեւ նշան իր երախտադիտութեան, որ այս ձմեռ անգամ մը ինծի կերակուր չնորհեցիք:

Ես զարմացած անոր կը նայէի:

— Գարնան առաջին մանիչակն է, տիկին, — կրկինեց, — մայրս ձեզի համար քաղեց:

Ու յետոյ, իբրեւ թէ հպարտութիւնը վերաւորուած ըլլար, արտասուալից ձայնով մը.

— Ուրիշ կերպով իր երախտադիտութիւնը չէր կրնար ցոյց տալ, — շնջեց:

Մոեցայ եւ, սիրուն տղուն ճակատը համբուրելով, առի նուէրը: Եւ երբոր անկէ զատուեցայ, սիրտս խանդաղատանքով լեցուած էր:

ՄԱՐԻ ՄՎԱՃԵԱՆ

վերցրել էր թանկագին դորդերից եւ զցել շոր գեանի վրայ :

Ես չունէի գոյութեան կռուի համար ո՛չ մի միջոց եւ ոչ մի պատրաստութիւն, բացի իմ սրտանի հասակից եւ պողպատեայ առողջութիւնից : Ես չունէի ո՛չ մի նպատակ, ո՛չ մի երազ, բացի օրուայ պարէնս վատակելուց եւ հօրս վրայ մի աւերաբլ քեռ չգառնալուց : Միակ փափաքս — շարունակել ուսումս — արդէն մեռել էր այն օրը, երբ հայրս ատոց. «Մըդի, ուսումը հարուստների որդիերանց համար է. քո հայրն այժմ ոչինչ չունի» :

Ազատուելով մօրս զրկից, ես սրբեցի երեսս նրա ջերմ արցունքներից եւ նստեցի կառք :

Կա՛ռք. դա մարտիանի մի մեծ ֆուրդոն էր՝ մինչև կամարածեւ ծածկոցը լի գանազան ապրանքներով : Ես բարձրացայ ահապին հակերի վրայ եւ ինձ համար ընտրեցի մի յարմար անկիւն : Բացի ինձանից, այնտեղ կային երեք ճամբորդներ, — մի գինեվաճառ, որ գնում էր Բագու գինեատուն բանալու, մի շատ պէր եւ շատ գեղեցիկ կին տեղական զրեատով եւ սրա պատանի որդին՝ իր նման գեղեցիկ :

Կառավար մարտիանը, իր տեղը յարմարցնելով, բարձրացրեց երկայն մտրակը եւ սուլեց : Նախ շարժուեց մէջտեղի ձին, ապա միւս երկուսը : Կառքը ճրճոաց եւ յետոյ արձակեց մի այնպիսի զզրդիւն, որ կարծես մի մեծ տուն էր փուլ դալիս :

Մենք հեռացել էինք բաւական, բայց ծնողներս դեռ կանգնած էին միեւնոյն տեղում : Մայրս շարունակ հեկեկում էր. այդ երեւում էր նրա ուսերի վեր ու վար

շարժումից : Հայրս բարձրացրեց իր ձեռքը գէպի երկինք եւ խոսոյն զցեց վայր : Արդեօք նա իմ ճանապարհըն էր օրհնում, թէ՞ իր բախտն անիծում : Բայց զգում էի, որ իմ ներկայութեամբ զսպուած արցունքը այժմ առատօրէն հեղեղում էր նրա հուժկու դէմքը :

Կուչ դալով ֆուրդոնի մի անկիւնում, գինու երկու տակառների միջև, ես ճիւղ արի զսպել արտասուքս՝ անսրգարօրէն պատժուած մանկան պէս : Ի դո՛ւր. շուտով իմ դառն հեծկլտանքը խառնուեց անիւների սուր զզրոցի եւ կառավարի սուլոցների հետ : Արեղակի վերջին շողերի հետ, կարծես իմ էութիւնից անջատուեց ինչ որ թանկագին մի կտոր, ընկաւ ապագայի մթութեան մէջ եւ մեռաւ : Չկայ այլևս մարդու համար անսպական երջանկութիւն այն օրից, երբ նա բաժանուած է ծնողների դուրգութեանը :

Արցունքներիս միջեց մի անգամ եւս նայեցի ես : Մութը արդէն կլանել էր կիսաւեր քաղաքի իր շրջակայ լեռներով ու ձորերով : Երկինքը զարդարուեց ասպելրով :

Մինչ իմ միտքը զբաղած էր իմ տասներօթնամեայ անցեալի յուշերով, լսեցի գեղեցիկ ուղեկցուհու փաղաքուշ ձայնը .

— Բալա՛ս, քիչ ֆիքր արա, ուրախ պահիր քեզ. մենք աւելի լաւ քաղաք ենք գնում, Բագու :

— Այնտեղ ծով կայ. գիտե՞ս, ծո՛վ, — աւերացրեց նրա պատանի որդին, ապա դառնալով գինեվաճառին՝ հարցրեց — այնպէս չէ՞, Բալասի՛ ապէր, Բագուն հրաշալի քաղաք է :

Բալասի ապէրը պատրաստուած էր ընթրիք անելու : Դա մի շատ նիհար եւ երկարահասակ մարդ էր մեծ քթով եւ շատ մեծ պիտերով, որոնք ծածկում էին նրա բերանը :

— Բազուն եւ հարցնում, բալա՛ս, — ասաց նա պե-
տերը սրբելով, — Բազուն քաղաք չէ, հրաչք է: Հնդրս-
տան, Չինուստին էլ որ պնաս, նրա նման քաղաք չես
դանի:

— Ծովը մե՛ծ է, — հարցրեց պատանին:

— Վերջ չունի:

— Բանի՞ կու՞ծ ջուր կը լինի նրա մէջ, — հետա-
քըքըրուեց պատանին:

Բալասի ապերը, մի բաժակ դինի կոնձելով, պե-
տերը նորէն սրբեց եւ պատասխանեց:

— Ի՛նչ ասեմ, բալամ, հազար ասեմ՝ քիչ է, տա-
սը հազար՝ էլի քիչ է, հաղարան հազարներից խօսիր:

Յետոյ շարունակեց նկարագրել նաւթային հանքե-
րը, գործարանները, ծուխը, փոշին, մոծակների բազ-
մութիւնը, մկների խոչորութիւնը եւ երկար կանդ
առաւ տների բարձրութեան, փողոցների՝ լայնութեան
եւ խանութների մեծութեան ու ճոխութեան վրայ:

Նա թէ՛ պատմում էր եւ թէ ուտում: Ուտելիս ու
խմելիս՝ Բալասի ապօր նիհար կոկորդի ցցուած ոսկորը
շարունակ ներս էր մտնում ու դուրս դալիս:

Վրոյ հասաւ դրերը: Մեր կողքը կանգ առաւ
առաջին կայանում: Գատարանը մեղ առաջնորդեց մի
մաշականի տուն, իսկ ինքը դուռը ձեռքը կերակրելու:

Չուրդունն այնպէս էր շարժուել ինձ, որ մարմնիս
բոլոր մասերը ցաւում էին: Պոստիկրով ասխտակէ մերկ
բազմոցի վրայ, անմիջապէս քնեցի: Ամբողջ գիշերը
երազումս տեսնում էի ջուր, կրակ, նաւթ, մոծակներ,
մկներ եւ Բալասի ապօր կոկորդի մեծ ոսկորը:

ՇԻՐՎԱՆՁԱԴԻ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հուժկու.— Զօրաւոր, կորովի:

Անակուրիւն.— Գործի ձախորդութեան հետեւանքով անկա-
րող դառնալ պարտեքը վճարելու. ունեցածը — չունեցածը կոր-
սրնցնել:

Որդկերանց.— Որդի բառին յոգնակին, որդիներուն:

Մալական.— Ռուս գիւղացիներ, որոնք առանձին աղանդի մը
կը պատկանին եւ կը բնակին Անդրկովկասի մէջ:

Յուրքան.— Մեծ քառանիւ կառք՝ բեռներ կրելու համար՝ երեք
կամ չորս ձիով:

Հակ.— Մեծ կապոց, կապուած բեռ, օբինակ՝ բամպակի հակ:

Հեղեղի.— Ծածկէլ (ջուրով կամ արցունքով), ողողել:

Կուչ գալ.— Կծկուել, սեղմուիլ:

Անջատուիլ.— Բաժնուել, զատուիլ:

Անապական.— Անարատ, մաքուր:

Բալա.— Բալա կամ բալամ գգուական կոչում մըն է, որդի,
որդեակ:

Ֆիքր անիլ.— Թուրքերէն բառ. կը նշանակէ մտածել:

Կուժ.— Սափոր:

Նաւթ.— Չգտուած քարիւղ:

Մոծակ.— Մժեղ:

ՇԻՐՎԱՆՁԱԴԻ (1858-1935).— Բուն անունն է Ալեքսանդր
Մովսէսեան: Ծնած է Անդրկովկասի Շամսիի կամ Շիրվան քաղա-
քը: Ուսումը ստացած է ազգային եւ ռուսական վարժարաններու
մէջ: Վարած է նախ հաշուապահի, ապա խմբագրի պաշտօն: Մշա-
կած է վիպական եւ քառերակն սեռերը: Գլխաւոր երկերն են
«Գործակատարի յիշատակարանից», «Նամուս», «Արսէն Դիմաբը-
եան», «Յաւագարը», «Գասոս», «Արսիսուը», «Պատուի համար»,
«Եւզիմէ», «Արմենուի», «Կործանուածը» եւն.: Իր գործերէն մէկ
ֆանիճ քարգմանուած են օտար լեզուներու: Շիրվանգաղէ ունի
պատմելու եւ նկարագրելու ձիրք:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ .— Հեղինակը ի՞նչ ընելու կ'երթար Բագու: Տեղեկութիւններ տալ այս քաղաքին մասին: Թուել գլխաւոր յատկանիշները Շամախիի եւ Բագուի: — Ներկայացնել այս գրուածքին մէջ գործող անձերուն բնաւորութեան հիմնական գիծերը . անոնցմէ ո՞վ ամենէն աւելի կը գրաւէ ձեր ուշադրութիւնը եւ ինչո՞ւ: — Ի՞նչ տեղեկութիւններ ունիք հեղինակի մասին . կարդացա՞՞՞ք էք իր գործերը . բեմի վրայ տեսա՞՞՞ք էք իր քատերախաղերը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ .— 2 եւ ր գիրերուն ընդհանրապէս կը յաջորդէ ջ եւ ոչ չ . օրինակ՝ աղջիկ, գոջալ, շուրջ, վերջ, լուրջ: Բացառութիւն է գեղջ բառը:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ .— 1. Բաժանում՝ ծնողքէ կամ քարեկամներէ: 2. Նոր վայրեր տեսնելու հանոյքը: 3. Նկարագրել մամրորութիւն մը շոգեհաւով, շոգեկառնով կամ օդանաւով:



10. Հ Ա Յ Լ Ե Զ Ո Ւ Ի Ն

Դո՛ւն, առաջին վանկ շրթունքիս, առաջին ձայն իմ հագւոյս, նախկին հնչիւն իմ մանկական լեզուիս հեզ, Որով լացի ու երգեցի միշտ յուզումներս, իղձս ու յոյսս, իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛յն հեզ:

Քու բառերդ՝ արեւէն վառ ու բիւրեղէն ալ վրե՛խ՝ իմ հագւոյս մէջ բոց մը կաթեց մըշտանկէզ, Հուր ծարար անհունութեան, բարւոյն, մեծին նշմարիս . Ո՛վ մանկութեանս ազնիւ լեզուն, կ'օրհնեմ հեզ:

Դո՛ւն, Մեսրոպին ու Մահակին շունչին քրթաուր
 ասկի,
 Որ հայրենի յուշերն անդուլ կ'եղերգես-
 Իր պաշտելի աւանդութեանց, նշխարներուն սուրբ
 ըսկիի,
 Ո՛վ աննըման չճնաղ լեզու, պաշտո՛ն քեզ:

Դուն քրթաօցիք Արմաւիրի սօսիներուն տակ ըստէպ,
 Հայ աշուղին քնարին պարծանքն եղար վէս-
 Հիմա կ'ողբաս զաւակներուդ ըստրուկ կեանքին
 երաշխէպ,
 Քերթողներու անմա՛հ բարբառ, քիւր փա՛նօք քեզ:

Օրհնեա՛լ ըլլան մեր հայրերը, որոնք, աւա՛ղ,
 ցիրուցան,
 Մեւ օրերուն՝ մոլորած չոր շիւղի պէս՝
 Մոռցան իրենց տունն ու տեղը, զաւակներնին
 ուրացան,
 Իրենց ա՛նձն ալ, բայց չըմոռցան երբեք քեզ:

Օրհնեա՛լ ըլլան մեր մայրերը, որոնք ըզքեզ սընուցին
 Իրենց շունչովն ու աղօթքով սըրտակէզ,
 Խարխուլ, փըլած կըտուրին տակ, կարօտ՝ պատառ
 մը հացին,
 Գուրգուրանքով պահպանեցին միշտ ըզքեզ:

Թող որ ես ալ, յետին զաւակն հայրենիքիս իմ
 քըշուառ,
 Սուրբ տանարիդ ոտքը բերեմ ողջակէզ՝
 Միշտ տառապած, երբեք շիջած սըրտէս կայծ մը
 խանդավառ,
 Հոգևով պաշտեմ ու քնարովս օրհնեմ քեզ:

ՍԻՊԻԼ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Իղձ.— Փափաք, բաղձանք:
 Հուր (ծարաւ).— Կրակի պէս այրող (ծարաւ):
 Մշտակէզ.— Մեշտ այրող. կիզել՝ այրել:
 Անդուլ.— Անդաղար, անընդհատ:
 Սկիի.— Պատարազի բաժակ, որուն մէջ գինի լեցուած կ'ըլ-
 լայ:
 Սօսի.— Բարտիի նման բարձր ծառ մը՝ գեղեցիկ տերեւնե-
 րով: Հին Արմաւիր քաղաքին մօտ կը գտնուէր Սօսեաց անտառը,
 որուն նուիրուած էր Արայի թոռ Անուշաւանը:
 Ստէպ.— Յաճախ, շատ անգամ:
 Երաշխէպ.— Վէրքի կամ հարուածի նշան, հետք:
 Ողջակէզ.— Չոհ, մատաղ: Բայժ՝ ողջակէզել, զոհել, մատաղ
 ընել:
 Շիջիլ.— Կամ շիջանիլ, մարել:
 ՍԻՊԻԼ (1863-1934).— Զապէլ (հաննեան, Տօնէլեան) Հ. Ասա-
 տուր: Ծնած է Պոլիս, ուր ստացած է իր ուսումը ազգային եւ
 ֆրանսական վարժարաններու մէջ: Վարած է ուսուցչական պաշ-
 տօններ, ունեցած է նաեւ համրային գործունէութիւն: Գլխաւոր
 երկերն են «Աղջկան մը սիրտը», «Ցուլներ», «Կնոջ հոգիներ», «Որ-
 բուհին», «Հարսը», վերջին երկուքը քատերախոյզի են: Կազմած
 է նաեւ ֆերականութեան եւ ընթերցանութեան դասագիրքեր, իր
 ամուսինին՝ Հրանտ Ասատուրի հետ: Ունի խնամուած եւ զարդա-
 րուն լեզու:

ԹԵԼԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Այս ֆերթուածին մէջ
 զգալի է հեղինակին անհուն սէրը մայրենի լեզուին
 հանդէպ: Նկատելի է նաեւ պերն ու շոգշողուն բառեր
 գործածելու իր հակումը: Քերթուածը գրուած է հայ
 տառերու զիւտին 1500ամեակին առիթով: — Կը յիշէ՞ք

հայ լեզուին նուիրուած ուրիշ քերթուածներ այ՝ անոնցմէ ո՞րը կը յուզէ ձեզ: — Խօսիլ Սահակի եւ Մեարոսի, Աստուածաշունչի քարգմանութեան եւ մեր Ոսկեդարի մասին: Յիշել այդ շրջանի մեր գլխաւոր պատմիչներուն անունները:

11. Ա Ր Ա Ր Ա Տ

(Ա. ՄԱՍ)

1

Արշաւուժ էին բարձրաձայն բարբարոսները:

Այրուծի սմբակները տրորում էին ցորեանի ոսկի արտերն ու մրգատատ այգիները, արիւն, ու աւեր բերում հայոց աշխարհին:

Այդ դաժան օրերին՝ ժողովրդեան վշտի, ցամաքն ու ծով արեան միջից ծնուեց բոցահեր ու բոցակն մի մանուկ, որին կաշեցին Արարատ: Հրաշք մանուկ էր նա, որ ածում էր ժամ առ ժամ: Մնում, կերակրում էին նրան հայոց աշխարհի բոլոր մայրերն ու այրերը, ամբողջ շինական ժողովուրդը:

Շուտով մի հսկայ դարձաւ մանուկը: Նրա վիթխարի հասակն ու լեռնակուտակ ուժը տեսնելով՝ ժողովուրդը մտաք տուեց Արեւ աստծուն, որ վերջապէս ամենազօր փրկիչ-պահպան էր պարզեւել իրեն:

Հսկայատիպ պատանուն ժողովուրդը նուիրեց նախնիներից ժառանգութիւն մնացած հայկական լայ-

նայիճ աղեղը, նեան ու թուրը: Վահանի կարիք չուներ, որովհետեւ ժողովուրդի ցասումից, վշտից եւ արիւնից ծնուած՝ անխոցելի էր:

Արարատի քաջ դորձերը տեսնելով՝ հայոց երկրի ալեւոր թաղաւորը կամեցաւ իր զօրաց սպարապետ կարգել նրան:

Թաղաւորի կամքը լսելով՝ քաջակորով պատանին ասաց.

— Երգւում եմ ծառայել Արեւ աստծուն ու արքային. միայն աղաչում եմ, տէ՛ր իմ արքայ, արձակի՛ր շինական զօրագունդերը բոլոր, արձակի՛ր բարուկներին, թող զնան խաղաղ աշխատեն ու ապրեն: Ինձ բաւական են երեսունինը քաջեր: Երգւում եմ բոլոր աստուածների անունով՝ անպատիժ չթողնել մաճկալի արտն ու արօրը տրորող ոչ մի բարբարոսի...

Ծերունի թաղաւորը լսեց Արարատին ու նրանով հպարտ եղաւ:

— Թող քո կամքը լինի, ո՛վ քաջագուն, եւ թող արեւը անպակաս լինի գլխիցդ, — ասաց նա: — Սրանից յետոյ զեղ եմ վստահում հայոց աշխարհի պաշտպանութիւնը:

Յայնժամ Արարատը հանեց իր թուրը եւ յուզուած դրեց թաղաւորի առաջ:

Արեւեր թաղաւորը երկիւղածութեամբ իր ձեռքն առաւ հայկեան թուրը, գլխից վեր բարձրացրեց եւ կրկին յանձնեց Արարատ սպարապետին:

2

Այդ օրերին հետաւոր Հասթից սուրհանդակներ ժամանեցին հայոց աշխարհը եւ թաղաւորին մատուցին մի հրովարտակ: Բարբարոսները արաւի էին ելել Հայաստանից՝ կայսրութեան գլխից եւ կայսերական

բանակն ի զօրու չէր կործանարար հեղեղի առաջն առնել: Աղերսում էր կայսրը, ի կատարումն երկու երկիրների հնօրեայ դաշինքին, հայոց այրուձին շտապ ուղարկել Հոովմ՝ միատեղ դիմադարձ լինելու բարբարոսներին:

Կարգալով աղերսապիրը՝ ծերունի թագաւորը ընկաւ խոր մտածումների մէջ: Ինչո՞վ զօրավիւզ լինել Հոովմին: Չէր ուզում դրժել հնաւանդ դաշինքը, երգմնազանց լինել. բայց այրուձիի դունդերը ցրուել էր ու քառասուն աղեղնաւոր միայն ունէր:

Ալեհեր թագաւորը խորհուրդի կանչեց իր սպարապետին:

— Թագաւորն ապրած կենայ, հրամայեցէք՝ երեսունինը քաջերի հետ դնամ օղնութեան, — խօսեց հայոց սպարապետը:

Թագաւորը խոժոռեց դէմքը. սրտովը չէր, որ սպարապետն անպաշտպան թողնի հայրենի երկիրը եւ գնայ Հոովմ: Յետոյ, առանց հայրենի հողից ուժ ստանալու, դժուար էր կռուել բարբարոս հորդանների դէմ, որոնք պարտութեան էին մատնում Հոովմի մեծահոշակ լեզէոններին:

— Հրամայեցէ՛ք, այսօր իսկ ճանապարհուեմ, տէ՛ր արքայ, — կրկնեց սպարապետը:

Երկար խորհեց ծերունի թագաւորը եւ վճռեց.

— Գնա՛, որդեակ իմ, գնա: Մեր նախնիների հրաշագործ թուրը եւ հայրենիքի սէրը քեզ ուժ ու զօրավիւզ: Գնա՛ ու միշտ յիշիր. հայոց ժողովուրդը քո քաջերի յաղթական դարձին է սպասում:

Քառասուն կտրիճները, հրեղէն ձիեր նստած, առաջ էին սլանում դաշտավայրով, թռչում էին ձիւ-

նագազաթ լեռների եւ անյատակ անդունդների վրայով. հողմը չէր հասնում նրանց յետեւից:

Անցան ցամաքներ ու ծովեր, անցան ամպրոպային Ձեւսի երկրից՝ Ողիմպոսի անմահ աստուածների մօտով, հասան Եռակտերի երկիրն ու ներկայացան կայսեր:

Հայոց քառասուն աղեղնաւորներին տեսնելով՝ կայսրը սաստիկ դայրացաւ:

— Դրուժա՛ն, — դռուց հայոց թագաւորի հասցէին:

Բարբարոսները մօտենում էին Հոովմին. բայց միթէ նրանց հեղեղի առաջ կարելի՞ էր պատնէշ կանգնել քառասուն այրուձիով: Հեզնանք էր դա, անարդանք էր կայսեր հանդէպ:

— Ետ դարձէք անյապաղ, քանի դեռ հրաման չեմ արձակել զլիստելու բոլորիւք եւ ձեր քառասուն դըլուխներն ուղարկելու նենգամիտ ծերունուն, — դռուաց կայսրը Արարատ սպարապետին երեսն ի վեր, — ե՛տ դարձէք եւ ասէք ուխտադրութիւն, որ նուազագոյն յիսուն հազար այրուձիու էի սպասում ես: Իմ սրբզան հողի վրայ չեմ ուզում թափել ձեր արիւնը: Բայց կը դամ ձեր երկիրը շուտով, եւ այն ժամանակ վա՛յ ձեր թագաւորին:

Սակայն Արարատ սպարապետը ետ չդարձաւ հայրենիք, այլ կայսրից թաղուն ընդառաջ գնաց Հոովմի վրայ արշաւող բարբարոսներին:

Երբ բարբարոսների առաջնորդը տեսաւ քառասուն աղեղնաւորներին, որոնք գալիս էին ձիերը խաղացնելով, հրամայեց հազար հոգի ուղարկել՝ նրանց հետ մարտի բռնուելու:

Կռիւր բորբոքուեց ու հազարն էլ ջարդուեցին: Այդ տեսնելով՝ բարբարոս զօրավարը երկու հազար հեծեալ ուղարկեց այրուձիի դէմ: Բայց իր բանակատե-

դից անօվ նկատեց, որ այդ երկու հազարն էլ բնա-
ջնջուեցին: Երրորդ անգամ ուղարկեց տասը հազար
ծիաւոր: Եւ անկղ մարտում սրանք էլ դիտապատ ըն-
կան ուղմադաշտի մէջ:

— Մ'ը հոգից են այս քառասուն քաջերը, ո՞րտե-
ղից են եկել, — կատաղութեամբ զոռաց բարբարոս-
ների ատաջնորդը:

— Հայոց այրուձին է: Հեռու-հեռուը աշխար-
հից են օգնութեան եկել Հոովմին, — պատասխանեց
սուրհանդակը, որ անցել էր քաջերի մօտով:

ՍՏ. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Բազմամբոխ.— Բազում եւ ամբոխ բաւերէն կազմուած բարդ
բոս. խիտ շատ, մեծաթիւ:
- Այրուձի.— Ձիւտը զօրք, հեծելաօր:
- Տարբի.— Կոխտակ, ստնակոխ ըննել:
- Յասում.— Ձայրոյթ, սաստիկ բարկութիւն:
- Բոցակեր.— Բոցի գոյնով մազ ունեցող. բոցակն՝ բոցի պէս
վառ ունեցող:
- Կայնալիք.— Այեղին երկու ծայրերը իրարմէ հեռու. լայն:
- Մանկալ.— Մ'ածը՝ արօրին կսթը բռնող, վար ու ցան ընող:
- Յայնժամ.— Այն ժամանակ, այն ատեն:
- Հրովարտակ.— Թաղաւորի պաշտօնական գրութիւն, հրաման:
- Ի գօրու չէր.— Չօրութիւն, ուժ չունէր, չէր կրնար:
- Հորգա.— Աւաղակներու, յարձակողներու խումբ:
- Լեզէոն.— Հոովմեան զօրազունը, որ կը բաղկանար 3-6000
զինուորներէ:
- Հրեղէն.— Բառացի՝ կրակէ. արագընթաց, արագվազ:

Ամպրոպային.— Ամպրոպ՝ սեւ ու մութ ամպ, անձրեւարեր
ամպ, փոթորիկ: Ամպրոպային՝ ամպրոպ յարուցանող (Ձեւտի
կամ Արամազդի արուած մակղիբ):

Ձեւ.— Արամազդ: Յունական դիցարանութեան մէջ Ձեւս
դերադոյն աստուածն էր, որ կ'արդէր Ողիմպոս լեռան վրայ
(Յունաստան): Կը նկատուէր հայր միւս աստուածներուն, աէր
եւ իշխան երկնքի ու երկրի: Ձեւտի լատիներէն անունն է Եուպի-
տեր: Եուպիտերի երկիր՝ փոխարեւարար կը նշանակէ Իտալիա,
Հում:

Գրուծան.— Խարդախ, խարերայ:

Անյապաղ.— Առանց յապաղելու, առանց դանդաղելու, իս-
կոյն, անմիջապէս:

Ուխտադրուծ.— Ուխտը դրժող:

Մարտ.— Կռիւ, մարտիկ՝ կռուող:

Գիտապաստ.— Իրբեւ դիակ զեւին տապալած, սպաննուած:

ՍՏԵՒԱՆ ԿՈՒՐՏԻԿԵԱՆ.— Գրագետ: Ծնած է Թուրքիա, այժմ
կ'ապրի Հայաստան եւ կը գրադի գրականութեամբ ու խմբագրու-
թեամբ: Առանձին հատորով հրատարակած է հեքիաթներ եւ ա-
ռասպելներ «Հայրենի լեզուներ» անունով: Իր հեքիաթներուն
միւրը ընդհանրապէս քաղուած է հայկական կեանքէ: Հանելի
պատմող է:

ԹԵԼԱՂՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Հին ատեն ո՞ր ժողո-
վուրդները կը կոչուէին բարբարոս: — Ներկայացնել
Արարատի անձն ու գործը: Տալ հայ սպարապետներու
անուններ (հին ու նոր): — Ի՞նչ գիտէք Հոովմի եւ Հա-
յաստանի յարաբերութիւններուն մասին: Հոովմի կայ-
սեր խնդրանքը՝ հայոց թագաւորէն: Ապա՝ դժգոհան-
քը: — Նկարագրել Արարատի եւ իր զինակիցներուն
կոխը բարբարոսներուն դէմ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ե գիրը բառերուն սկիզբը կը հնչուի եէ. օրինակ՝ երկու, երկար, եմքադրել: Բացառութիւն է եօթը, որուն սկզբնական (գրաբար) ձեւն էր եաւթը (աւ—օ): Բառերու մէջ *ե* գիրը կը հնչուի է. օրինակ՝ գեղեցիկ, արուեստ, գրել:

12. Ա Ր Ա Ր Ա Տ

(Բ. ՄԱՍ)

1

Բարբարոսների առաջնորդը, իր հարիւր հազարնոց զօրքի գլուխն անցած, իրբեւ սանձաղեղծ մրրիկ սլացաւ քառասուն աղեղնաւորների դէմ:

Հանգիստ ու անսասուն՝ իր քաջերի առաջն էր կանգնել Արարատ սպարապետը. յաղթալանջ կուրծքը թշնամուն դէմ արած՝ մնում էր անխոցելի:

Քառասուն քաջերը, նետերի տարափն արհամարհելով, ոչնչացնում էին թշնամուն:

Շուտով լիճ կապեց բարբարոսների արիւնը, իսկ նետահարուածների դիակները ծածկեցին ռազմադաշտը:

Վիրաւորների հառաչը լսելով՝ Արարատ սպարապետը սաստիկ յուզուեց, վճռեց վերջ տալ արիւնահեղութեանը: Երկինք պարզեց իր հայկեան թուրը, սլացաւ բարբարոսների առաջնորդի վրայ եւ մի հարուածով թոցրեց նրա գլուխը:

Սուճապ ընկաւ թշնամու շարքերը եւ անձնատուր եղան բարբարոսները:

Արարատը ազատ արձակեց գերիներին, որ խաղաղութեամբ գնան իրենց տները, իսկ բարբարոս առաջնորդի գլուխը վերցնելով՝ Հռովմ մտաւ յաղթական ու ներկայացաւ կայսեր:

Թշնամու չարաչար պարտութեան լուրը լսելով՝ անհուն ուրախութիւն ու անսահման երկիւղ զգաց կայսրը: Ուրախութիւն, որ թշնամին ոչնչացուած էր, Հռովմը՝ փրկուած: Երկիւղ՝ կայսրութեան վիճակից, եթէ պատերազմ ծագէր հայերի ու իր միջեւ:

Եւ այն ժամանակ կայսրը նենդութեան դիմեց:

2

Հռովմայեցիների կայսրը մեծ խնճոյք սարքեց ի պատիւ յաղթողների: Գիշերուայ կէսին ընկնում էին քաջերն իրար յետեւից՝ գիւնուց ու յաղթանակից պարտուած: Անհետացել էր կայսրը, որ մասնակցում էր կայսրութեան փրկիչների մեծ խորխոսանքին: Դաւադիր լուսթիւն էր տիրում մարմարակերտ դահլիճում...

Այդ ժամանակ սիւնաղարդ դահլիճ եկաւ պալատի նաժիշտներից մին, մօտեցաւ Արարատ սպարապետին եւ հրաւիրեց հետեւել իրեն՝ ասելով.

— Կարիք ունեմ քո օգնութեանը, ո՞վ մեծ սպարապետ:

Հաղիւ էին թողել դահլիճը եւ անհետացել մութ կամարների տակ, կայսեր դահլիճները ներս մտան եւ սրախողխող արին քնած քաջերին:

Արարատ սպարապետը իմացաւ այս մեծ դաւադրութիւնը, փոթորկուեց սաստիկ, անհորէն դայրացաւ, հեծաւ հրեղէն ձին եւ սլացաւ դէպի հայրենի երկիր:

Երբ իր քաջերի սիրանքի ու նենդ սպանութեան լուրը յայտնեց նա շինականներին, դառնակակիժ հառաչ անցաւ երկրով: Վիշաք ամպացաւ ու թուխալը պատեց հայոց երկնակամարը: Ալեկարդ թաղաւորի թաւ յօնքերը մռայլ ստուեր պցեցին աչքերին եւ նա ահեղաձայն սրտաաց:

— Ո՞վ պիտի լուծի հայոց վրէժը նենդաւոր կայսրից:

Արքայի ձայնը արձագանդեց լեռից լեռ ու ձորից ձոր եւ թունդ հանեց բոլոր սրտերը:

Այդ միջոցին, ինչպէս լեռնային ամպրոպ, թնդաց ահեղապոչ մի պատասխան.

— Ե՛ս...

Վրէժով ու արտասուքով լի հազար-հազար աչքեր սեւեռել էին Արարատ սպարապետին:

Վերստին հաւաքեց սպարապետը երեսունինը հաստաբազուկ մաճիկալ ու խաշնարած, թուրը կապեց մէջքին, ձեռքն առաւ հայկեան լաշնալիճ աղեղը ու քաջերի գլուխն անցած՝ փրփրաբաշ ձին աշտանակեց դէպի Հոռով:

Երեք օր, երեք գիշեր ամպրոպում էր երկինքը, օժաղալար փայլատակում էին կայծակները:

Չորրորդ օրը, լուսաբացին, խաղաղուեց երկինքը եւ, թեւաւոր ձիեր հեծած, գլուխները խրոխտ՝ երեւացին քաջերը:

... Արարատ սպարապետը կայսեր թրահար գլուխը դրեց հայոց թաղաւորի առաջ եւ յայտարարեց, որ ապատ է արձակել Հոռովի բոլոր սարուկներին:

Շինականները փառաբանում էին Արարատ քաջապետին ու նրա երեսունինը կտրիճներին:

Այնուհետեւ հաշտ ու խաղաղ էր ապրում շինական ժողովուրդը: Իսկ քաջերի համբաւը հայոց երկրից հեռու էր վանում բարբարոս ասպատակներին:

Անցաւ շատ ժամանակ. մի օր էլ հայոց սպարապետը բոլորեց իր հարիւր տարին: Թէեւ էլի յաղթ էին նրա բազուկները, խրոխտ՝ լաշնալանջ կուրծքը, վեթխարի՝ հասակը, բայց ձիւն էր նստել գլխին եւ փոքր ինչ մարել էր արծուենի հայեացքը:

Մի անգամ, երբ մենութեան մէջ փառաբանում էր նա Արեւ-աստծուն, խաղաղ մի ձայն լսուեց.

— Արարատ նահապետ, սպարապետ հայոց, կամ մօքն Արեւ-աստուծոյ, ժամն է թողնել հողը հայրենի, հայկեան աղեղը լաշնալիճ եւ թուրը հրաչաղործ: Այսօր իր վախճանին է հասնելու քո կեանքը երկրային: Հայցի՛ր Արեւ-աստուծոյ քո աղերսը վերջին:

Սպարապետը ծունկի եկաւ հայրենի հողի վրայ, համբուրեց սրտային կարօտով, իր հարիւրամեայ կեանքում առաջին անգամ արցունք թափեց, ապա վեր պարդեց բազուկները բազմալաղթ եւ աղերսեց.

— Տէ՛ր, լեռնացրու ինձ հայոց աշխարհում: Ու թող իմ քաջերն էլ լեռնանան...

Հազիւ էր արտասանել վերջին բառը, երբ արեղնափայլ դաշտավայրի կենտրոնում լեռնացաւ Արարատ, լեռնացա՛ւ ու բարձրացաւ կապոյտի մէջ: Նրա քաջերն էլ լեռնացան ու պաշտպանութեան շղթայով դըրկեցին հայոց ամբողջ դաշտավայրը: Եւ անխոցելի եղաւ այլեւս լեռնացած Արարատն իր ժայռեղէն կուրծքով:

Լաց եղաւ շինական ժողովուրդը սպարապետի համար, եւ նրա արցունքից դոյացաւ Մայր Արաքսը, որ սահեց առաջ՝ աշխարհին պատմելու փառքն ու յաւերժութիւնը ձիւնակատար հսկային: Ու ժողովրդեան կամքով լեռը կոչուեց Արարատ, իսկ երկիրը՝ աշխարհ Արարատեան:

ԲԱՌԻՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նամիշտ.— Կին սպասաւոր, աղախին: Հին ասնն այս անունը կու տային բարձրաստիճան ընտանիքներու մօտ ծառայող սպասուհիներուն:

Սխրանք.— Սքանչացում, հիացում. այստեղ կը նշանակէ սիրազործութիւն, հիացում պատճառող դործ, քաջազործութիւն:

Սրախողխող անել.— Սուբով սպաննել:

Թուխպ.— Մառախուղ, խիտ մշուշ, մէջ:

Աշտամակելի.— Ձի հեծնել, ձին առաջ քշել:

Ամպրոպելի.— Սեւ ու մութ ամպերով լեցուիլ:

Թրահար.— Թուբով, սուբով դարնուած:

Ապայտակ.— Ձիաւոր խումբ, որ յարձակում կը դործէ թաւանելու նպատակով: Աւազակ:

Հայցել.— Խնդրել:

Ադերս.— Խնդրանք, աղաչանք:

ԹԵԼԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ինչո՞վ եւ ի՞նչպէս վերջացաւ պատերազմը Արարատ սպարապետին եւ բարբարոսներուն միջեւ: — Ներկայացնել Հոռոմի կայսեր վախերը և նենգութիւնը. Արարատի փախուստը. սպա՛ վերադարձը Հոռոմ եւ կայսեր սպանութիւնը: — Սպարապետին ծերութիւնը, վերջին օրերը եւ խնդրանքը Աստուծոմէ: — Տեղեկութիւններ տալ Արարատ, Արագած եւ հայկական ուրիշ լեռներու մասին:



13. ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՂՁ ՄԸ

Ի՞նչպէս այս իդան էր ծըներ. կ'ուզէի սուրբ ըլլալ եւ Քայց նշմարիտ, իրական, սրբոց շարքին մէջ դասուած, Սուրբի կեանքով մը ապրած, նահատակուած սուրբի պէս, Սուրբ մը՝ գացող ու տեսնող Արքայութեան մէջ Աստուած...

Եւ կ'ըսէի, թէ միակ մեղք մ'արգիլէր պիտի գիտ Սուրբ ըլլալէ, եւ այդ մեղքն էի գործած ես գուցէ՛ Այն աստն ուր տարեկան... Ու գոցած ձեռքս երեսիս՝ Օր մը, դասի միջոցին, լացի՛ վախէ ու ցաւէ... Եւ ուրիշ օր մը միհնչեա կոյր մաւրացիկ մը՝ հացի Տապրակը կախ իր ուտն՝ մեր տան դիմացն էր կեցեր, Գացի շիտակ իր վըրայ, քաշեցի ձեռքն ու պագի...

Կ'աղօթէի հօրըս հետ ամէն առտու եւ գիշեր .
Կը խորհէի ամէն տեղ գալիք կեանքիս, մահուանս ալ .
Տըզայ էի, կ'ուզէի ես այն ատեն սուրբ ըլլալ . . .

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուցէ.— ԹԵՔԵՆԱՆ:

Պագնել.— Համբուրկ: Պագնել բարը գրեթէ չի գործածուիր
գրական լեզուի մէջ:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ (1878-1945).— Ծնած է Պոլիս՝ կեսարացի
ծնողքէ: Ուսումը ստացած է Պէրպլեթեան եւ Կեդրոնական վար-
ժարաններու մէջ: Ատեն մը առեւտրական գործով գրադիլե ետէ,
նուիրուած է գրական եւ ուսուցչական ասպարէզին: Եղած է խըմ-
բագիր զանազան քերթերու: Գրական ծածկանուններն են Ա-
սուպ, Վահան Տիրանեան, Համշիրակ Բ. եւն.: Գլխաւոր երկերն
են «Հոգեք», «Հրաշալի յարութիւն», «Կէս գիշերէն մինչեւ ար-
շալոյս», «Սէր», «Հայերգութիւն», «Տագարան», բոլորն ալ
ֆեքթուած: Գրած է նաեւ արձակ էջեր: Քննաքննական բանաստեղծ
մըն է, հարուստ զգայնութեամբ եւ բժայիտագիր ճաշակով: Ունի
խնամուած լեզու:

ԹԵԼԱՊՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ինչո՞ւ հեղինակը «Ման-
կութեան իզմ մը» կոչած է իր այս ֆեքթուածը. միայն
մանկութեան յատուկ է «սուրբ» մը ըլլալու իզմը:
Որո՞նք են սուրբի մը յատկանիշները: Տուէ՛ք ֆանի՛ մը
սուրբերու անուններ, որոնք կարեւոր դեր մը կատա-
րած են մեր պատմութեան մէջ: — Ի՞նչ մեղք կը կար-
ծէ՛ք, որ գործած էր հեղինակը: Եւ ինչո՞ւ համարուած
էր մուրացիկի մը ձեռքը: — Ի՞նչ կը նշանակէ «նահա-
տակուած սուրբ», «գալիք կեանք»:

14. Ծ Ո Վ Ա Մ Ա Ր Տ

(Ա. ՄԱՍ)

1

Դեռ արեւը չծաղած, լաստերը պատրաստ ջրի
վրայ էին: Թաղաւորի ներկայութեամբ զինուորները
նետաձգութեան փորձեր էին անում: Նա կամենում էր
ստույգէլ, թէ որո՞նք կա-
րող են պիտանի լինել ար-
շաւանքին, որպէս զի լաս-
տերի վրայ անշահ մար-
դիկ չառնէ:

Իր հարիւր զինուոր-
ներից նա ընտրեց միայն
եօթնասուուն հողի, որոնք
կորովի նետաձիգներ էին:
Դրանց բոլորին տեղաւո-
րեց տասը լաստի վրայ,
խորաքանչիւր լաստին յատ-
կացնելով եօթը զինուոր-
իակ լաստավարներ կարգեց
միաբաններից, որոնք յա-
ջողակ էին այդ գործում:



Ապա իրեն համար ընտրեց մի թեթեւաչարժ նա-
ւակ, ուր լաստավարներից զատ տեղաւորեց նաեւ իր
սպասանի թիկնապահները: Այնուհետեւ հրաման տը-
լաւ կղզում մնացած զօրքին եւ միաբանութեանը, որ
չարտնակ գիտեն իր շարժումը եւ նշան տարուն պէս
բոլորը մէկ, նիզակներով զինուած, ելլեն լաստերի

վրայ եւ առաջանան դէպի թշնամին: Այսպէս պիտի ա-
նէին նրանք՝ ցոյց տալու համար, թէ կղզուց նոր զօրք
է հասնում օգնութեան:

2

Երբ արեւը բարձրացաւ, թագաւորի փոքրիկ նա-
ւատորմը սկսաւ դէպի ծովափ առաջանալ: Արքայի
նաւակը, որ զարդարուած էր դրօշակներով, գնում էր
առջեւից, իսկ լաստերը հետեւում էին նրան զոյգ-
զոյգ: Ձինուորները թէպէտ համակ զրահազգեստ,
բայց ամփոփած ունէին նիզակներն ու վահանները,
որպէս զի կարծել տան թշնամուն, թէ զինուած չեն
պալիս իրենց մօտ:

Հագիւ մի քանի հարիւր զրկաչափ հեռացան նրանք
կղզուց, եւ ահա Բեշիրի գունդերը եկան խոնուեցան
ափերի վրայ՝ հայոց թագաւորի եւ նրա շքախումբի
գալուստը դիտելու: Նրանցից շատերը անդէն էին, ու-
մանք մինչեւ անգամ բոկոտն կամ կիսով չափ հազ-
նուած: Ոչ ոք նրանցից չէր սպասում յարձակման:

Իսկ Բեշիր, Աշոտ-Երկաթի գալուստն իմանա-
լով, հագաւ իր ճոխ դպետները, ծածկեց ոսկէ ցցուն-
քով զարդարուն ապարօշք, կապեց դամասկեան ոսկե-
զարդ սուրը եւ, փառաւոր օթոցի վրայ բազմելով,
սպասեց հիւրին: Նա որոշել էր պատուով պահել թա-
գաւորին մի քանի ժամ, մինչեւ որ հետը բերած ըն-
ծաները նա կը յանձնէր իր դանձապահին, ապա կը
հրամայէր շղթայի զարնել նրան, որպէս զի Սեւանը
առնելուց յետոյ հետիտան տանէր Դուբին:

Այս մտածումներով էր զբաղած Բեշիրը, երբ Աշոտ
արքայի տորմիզը սկսաւ մօտենալ ափին: Հագարացի
հրոսակները աւելի խոնուեցան ծովափի վրայ: Մօտե-

ցող լաստերը, իրենց զրահազգեստ զինուորներով, դի-
տելու գեղեցիկ խաղալիկներ էին թւում նրանց:

Յանկարծ թագաւորը, կապարճակիրի ձեռքից ար-
ծաթէ աղեղը առնելով, գոչեց.

— Ժամանակ է, քաջեր, նետերնիդ տեղացէք...

Ձինուորները մի ակնթարթում վահանները ձեռք
առին եւ լայնալիճերը շարելով սկսան արագ-արագ
նետեր արձակել դէպի հողարացիները:

Մի զարհուրելի աղաղակ ու իրարանցում փրթեց
ծովափին: Հագարացիք, գլուխները կորցրած, սկսան
խրար հրելով եւ կոխկոտելով դէպի վրանները վազել.
բայց քաջածիզ հայերի նետերը հետեւում էին նրանց
եւ շատերին թաւալում աւազուտքի մէջ, ժայռերի վրայ
կամ վրանների առաջ: Ոչ մի նետ ապարդիւն չէր սլա-
նում, ոչ մի ճայթիւն առանց զոհի չէր անցնում:

ՄՈՒՐԱՅԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լաստ.— Իրարու կապուած տախտակներ, որոնք տախտա-
կամածի ձեւ ունին եւ կը ծառայեն իրբեւ նաւակ: Լաստավար՝
լաստը վարող:

Պիտանի.— Պէտքցող, օգտակար:

Ագատանի.— Աղատներու, ազնուականներու գասին պատ-
կանող:

Թիկնապահ.— Թիկն եւ պահել բռներէն կազմուած բարդ
բառ. կը նշանակէ կոնակը պաշտպանող զինուորական:

Նաւատորմ.— Նաւերու տորմ, խումբ:

Ջրահագցեստ.— Ջրահ հագած:

Շխախումբ.— Պատուի համար թագաւորի կամ այլ բարձ-
րաստիճան անձերու ուղեկցող մարդոց խումբ:

Յցումք.— Մաղերու ձեւով հիւսուած փունջ, տեսակ մը զարդ:

Ապարօշ.— Գլխու կապ՝ իբրև զարդ:

Դամակեան.— Դամակոսի մէջ շինուած:

Օքոց.— Ծածկոց:

Սեւան.— Սեւանայ ծովուն մէջ կղզի մը, ուր ժամանակին ունեցած ենք վանք եւ միաբանութիւն:

Հետիոտն.— Ոտքով, քաշելով:

Հագարացի.— Արբաճամ նահապետի աղախին՝ Հագարէն սե-
րած. արար, արարացի:

Հրոսակ.— Աւազակներու խումբ, ասպատակող զօրք:

Կապարճակիր.— Կապարճը նեղ ու երկար անօթ մըն է, որուն մէջ աղեղնաւորները իրենց նետերը կը պահէին հին ատեն: Կա-
պարճակիր՝ կապարճը կրող, զինակիր:

Քաջածիք.— Քաջ եւ ձիւ (նետել) բառերէն կազմուած բարդ
բառ. կը նշանակէ լաւ նետ արձակող, լաւ նետածիք:

ՄՈՒՐԱՅԱՆ (1854-1908).— Բուն անունով՝ Գրիգոր Տէր Յով-
հաննիսեան: Ծնած է Եւզի: Ուսումը ստացած է ծննդավայրի քե-
մական վարժարանին մէջ: Վարած է հաշուապահի պաշտօն, միա-
ժամանակ աշխատակցելով կովկասի հայերէն քերթերուն: Աւաւե-
լաքար գրած է պատմութիւնք եւ վէպեր: Իր գլխաւոր երկերն
են «Անդրէաս երէց», «Ռուզան», «Սպանուած աղանի», «Ենթերը-
դաւոր միանձնուիւն», «Նոյի ագաւը», «Աւաբեալը», «Գեորգ
Մարգարէտունի»: Ունի պարզ եւ անեքեք լեզու: Մեռած է
Թիֆլիս:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը, ծանրա-
նալով մասնաւորաբար Աշու-Երկաթի կեանքին, Բե-
շիրի եւ այլ ոստիկաններու գործած աւերներուն եւ
այդ շրջանին Հայաստանի մէջ տիրող վիճակին վրայ:
— Խօսիլ Սեւանայ լճի մասին: — Աշու-Երկաթ արքա-
յական ո՞ր տոհմին կը պատկանի:

15. Ծ Ո Վ Ա Մ Ա Ր Տ .

(Բ. ՄԱՍ)

1

Բեշիրը, երբ իր բանակին մէջ ծայր տուած զար-
հուրելի աղաղակը լսեց, շփոթած վեր թռաւ տեղից
եւ պատահեց վրանի դրանը սպասող թիկնապահներին,
որոնք յայտնեցին նրան, թէ հայերը յարձակուել են
իրենց վրայ:

— Ի դէ՛ն, — դողաց նա եւ սուրը քաշելով վազեց
առաջ, բայց փախչող զինուորներին հանդիպելով՝ ըս-
տիպուած եղաւ յետ դառնալ:

Սակայն զօրապետը ինքն իրեն չկորցրեց, աշտա-
նակեց իսկոյն իր ամենհի նժոյլը եւ դողաց:

— Հագարացի՛ քաջեր, մի՛ թուլանաք, մի՛ շփոթ-
ուէք: Օ՛ն, հետեւեցէք ինձ: Թշնամին սակաւաթիւ է,
ջարդեցէք նրան:

Բայց զօրապետին քիչերն էին հետեւում, իսկ թիկ-
նապահները դողում էին:

— Թշնամին ծովի վրայ է, տէ՛ր, ի՞նչ կարող են
անել նրանց մեր սուրերն ու նիզակները...

— Օ՛ն ուրեմն, յառա՛ջ. նետածի՛ց քաջեր, ցոյց
տուէք անհաւատներին ձեր բազկի զօրութիւնը, ծովա-
կուլ արէք նրանց, — դողում էր զօրապետը:

Արդարեւ, նետածիկները խմբուեցան նրա շուրջը
եւ սկսան յառաջանալ դէպի ծովափ: Նրանցից շատերը
սկսան քաջաբար աղեղները լարել, նետեր արձակել,

բայց բնութիւնը օգնութեան էր հասնում հայերին : Արեւը նրանց ետեւը լինելով՝ իր հրափայլ ճառագայթներով խաղաում էր հազարացի գինուարների աչքերը . այդ պատճառով նրանք չէին կարողանում իրենց նետերը ուղղել նպատակին , այլ մեծ մասամբ ձգում էին ծովի դատարկ տարածութեան մէջ : Մինչդեռ հայերը , ընդհակառակն , չէին շեղում նպատակից :

Ծովափը հետզհետէ ծածկւում էր դիակներով , եւ սակայն Բեշիրը դիմադրում էր յամառութեամբ , յուսալով վերջ ի վերջոյ վանել ծովի միջից հերոսաբար կռուող քաջերին :

2

Յանկարծ թաղաւորի նաւակի մէջ բարձրացաւ մի կարմիր դրօշ եւ սկսաւ ծածանել օդի մէջ : Դա կղզեցիներից որոշ հրաման տուող նշանն էր :

Իսկոյն կղզու առաջ սկսան երեւալ նորանոր լաստեր , որոնք հետզհետէ դուրս էին դալիս խարակների ետեւից եւ առաջանում դէպի հայոց նաւախումբը : Թշնամին պարզ տեսնում էր , որ նրանք լցուած էին բազմութեամբ : Երկարաբուն նիզակները , որոնք ճօճում էին լաստերի վրայ , ցոյց էին տալիս , որ եկողները նոր զօրախումբեր էին :

Բեշիրի գիւղերները սկսան վախենալ , նրանցից շատերը որոշեցին նահանջել կամ նոյնիսկ փախչել : Զօրապետը նկատեց այդ խլրտումը եւ սկսաւ աւելի խրախուսել նրանց : Ի զուր նա գոռում էր եւ փրփրեբախ նժոյղն այս ու այն կողմը վազեցնում . երկիւղը հետզհետէ պաշարում էր ամէնքին : Համհարզներից մինը մօտեցաւ եւ խորհուրդ տուեց նրան նահանջի փող հնչեցնել :

Այդ միջոցին , նետաձիղների մի խումբ , չկարողանալով այլևս դիմադրել հայերին , երես դարձրեց եւ սկսաւ փախչել :

Փախչողների հոսանքը առաւ իր մէջ Բեշիրի նժոյղը եւ առաջ վարեց : Միւս կռուող խումբերը , որոնք տակաւին դիմադրում էին հայերին , տեսնելով զօրապետը փախչող խումբանի մէջ , կարծեցին թէ նա խոյս է տալիս կռուից , ուստի իրենք էլ սկսան փախչել : Նահանջը ընդհանուր դարձաւ :

Թշնամու նահանջը նոր եռանդ ներշնչեց հայերին , որոնք ընկան փախչող հազարացիների ետեւից : Իրենց միացան մօտակայ դիւղերի հայ բնակիչները : Նրանք թշնամու ցրուած դունդերի մեծ մասը ջարդեցին եւ մնացեալները փախցրին դէպի հեռաւոր լեռներն ու հովիտները :

Դառնալով բանակատեղը , հայ կարիճները հաւաքեցին թշնամու թողած աւարը , որ բաւական հարուստ էր , զբաւեցին ընկածների գէնքերը եւ քակեցին վրանները , որոնց հետ նաեւ Բեշիրի տաղաւարը եւ այդ բոլորը փոխադրեցին կղզի :

Հայերը այս կուում կորուստ չունեցան . վիրաւորուել էին մի քանի հոգի :

Այնուհետեւ հողեւոր հայերը տաճարում մատուցին զուհունակութեան պատարագ , որին ներկայ էին թաղաւորը , թաղուհին եւ բոլոր գինուորները : Ապա տեղի ունեցաւ յաղթութեան խրախմանք :

ՄՈՒՐԱՅԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անհաւատ.— Բառական իմաստով՝ հաւատը չունեցող, փոխարեւարար՝ քրիստոնեայ:

Աշտանակել.— Ձի հեծնել:

Հրափայլ.— Կրակի պէս փայլող:

Խորակ.— Ապառաժ, ժայռ, կարծր քար:

Ծովակուլ անել.— Ծովը թափել, ծովամոյն ընել:

Համարգ.— Ձօրապետի օգնական կռուի մէջ, նիդակակից:

Նահանջ.— Ետ քաշուիլ, փակչիլ:

Տաղաւար.— Եղէգնեքով շինուած հիւղ, վրան:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Ի՞նչ տեսակ գէնքեր կը գործածուէին հնագոյն դարերուն եւ Աշոտ-Երկաթի օրով: Իսկ հիմա՞. Ի՞նչ գէնքերու անուն գիտէք: Բաղդաստիլ հին եւ նոր դարերու մէջ գործածուած գէնքերը իրարու հետ եւ հանել պատշաճ եզրակացութիւն. — Մուրացանի ո՞ր գործէն անուած է «Ծովամարտը»: Կարդացա՞՞ծ էք «Գէորգ Մարգպետունի»ն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ի՞նչ եւ չ գիրերուն կը յաջորդէ *ա* եւ ոչ թէ *դ*. օրինակ՝ բախտ, ուխտ, լախտ, վիշտ, միշտ, կուշտ, հաշտ: Բացառութիւն է միշտ բառը, որ *դ*-ով կը գրուի: Սխալ է գրել բաղդ:

Յօդակապ կը կոչուին *ա* գիրը եւ *ու* շաղկապները եւ կարգ մը նախդիրներ ու նախադրութիւններ, որոնք երկու կամ անիւր բառեր իրարու կը միացնեն. օրինակ՝ գուարեախօս, ասուլիս, ելեւէջ, հետզհետէ, գառ/վայր, գլխ/կոր, տող/ըմէջ, օրըստօրէ, կէտաւակէտ: Այս բառերուն մէջ, ա, ու, եւ, դ, ի, ընդ, ըստ, առ յօդակապ են:



16. Ա Ր Ա Մ

Հայկն եղաւ մեծ Արարաւը, դու՛ վերընկալ Արագածը մեր բարեբեր, ո՛վ երկրորդ պապ: Ընդդէմ չարի, ընդդէմ ձեռքի բիրտ բռնակալ՝ Շառաչեց քո կուռ բազուկը կայծակնաբախ:

Երկրորդ ուսմիկ իշխանն եղար անկողմնակալ, Երկրորդ արի հովուապետը, եւ քո անամպ Երկինքը — մեզ եղաւ այգ ու արեւագալ — Նախնի Ասիոյ խաւարի մէջ ահախարխախ:

Դու՛ գամեցիր աշտարակի ֆակատն ի վեր — Ասորական Նիւբար Մադես բռնակալին, եւ առիւծնիշ դրօշներով, ո՛վ անվեհեր,

Ողջունեցիր քո պարզակեաց ժողովրդին,
Եւ աւանդուեց առաջին այդ մեծ քափօրով,
Որ խաղաղ կեանքը կոփուում է միայն սրով:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՅԻ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերքնկալ.— Յաջորդ, տեղը բռնող, փոխարինող:

Երկրորդ պապ.— Մեր առաջին նահապետը կամ պապը Հայկն է, երկրորդը Արամն է, Հարժայի որդին: Արամ կը կոչուի նաև Հայկեան Արամ:

Կայծակնաթափ.— Կայծակի թափով, ուժով: Կայծակ ու կրակ թափող:

Խամիկ.— Հասարակ ժողովուրդին պատկանող, ժողովուրդէն սերած:

Այգ.— Առտու, առաւօտ:

Արեւագալ.— Արեւուն ծագելը, արեւածագ:

Ահախարխափ.— Վախէն խորխափող, դողացող:

Ատրական.— Ատորի ցեղէն, ասորիներու ցեղին պատկանող:

Նիւբար Մաղես.— Նիւբար՝ մարերու կամ մեղացիներու առաջնորդ զօրավարը, որ Հայաստան արշաւած էր: Արամ յարձակեցաւ Նիւբարի դէմ, զերի բռնեց եւ Արմաւիրի մէջ պարիսպի աշտարակին վրայ ճակատէն դամել տուաւ դայն: Մաղես կը նշանակէ մեղացի, մարացի:

Առիւծնիշ.— Դրօշին վրայ առիւծի նկար:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՅԻ.— Ծնած է Մուշի Կոփ գիւղը, 1904ին: Նախակրթութիւնը ստացած է հօրը մօտ, որ ուսուցիչ էր: 1915ին կ'անցնի Հայաստան եւ կը շարունակէ իր ուսումը Երեւանի համալսարանին մէջ: Իր գլխաւոր երկերն են «Առաւօտ», «Իսրայիլի լեզնդը», «Սերունդների երգը», «Կրակի քառուղիներով» ևն.: Իր գեղարուեստներէն մէկ քանին քարգմանում են ռուսերէնի եւ վրացերէնի:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մեր պատմիչներէն ո՞վ գրի առած է Հայկի եւ իր յաջորդներուն պատմութիւնը: Ի՞նչ յատկանիշներ կը գտնէք Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի մէջ: — Ի՞նչ զգացումներ արտայայտուած են այս գեղարուեստին մէջ: Կարդացա՞՞ծ էք մեր քաղաւորներուն եւ սպարապետներուն մասին ուրիշ գեղարուեստներ:

17. Մ Ե Մ Մ Ա Յ Ր Ի Կ Ս

1

Երբ մեծ մայրիկս առաւօտուն կը հագնէր իր սեւ հագուստը եւ լաճոփի սեւ շալը կ'առնէր ուսերուն վրայ, տնեցիները կը հասկնային, որ եկեղեցի պիտի երթայ: Արդէն ուրիշ տեղ չէր երթար, շատոնց քաշուած ըլլալով ընտանեկան հաւաքոյթներէ եւ այլ զբաղումներէ:

Տարին քանի մը անգամ, գլխաւոր տօներու Մեռելոցին, կ'երթար նաև մինչև գերեզմանատուն, իր հին ու նոր ննջեցեալներուն հողակոյտերը օրհնել տալու համար:

Դեռ հասակը ուղիղ պահած, հպարտ երեւոյթով գեղեցիկ պառաւ մըն էր մեծ մայրիկս: Իմ յիշողութեանս մէջ անիկա



կը ներկայանայ ինծի նոյն անայլայլ եւ խորշոմած դէմքով, որուն վրայ սեւ աչքերը յաճախ խիստ էին, մերթ բարի ու ներողամիտ, երբ տանը մանուկներուն վրայ կը դառնար իր նայուածքը:

Երբ դուրս ելլէր, չէր սիրեր, որ իրեն ընկերանայինք. նոյնիսկ երբ փողոցը հանդիպէինք իրեն, եկեղեցիէն վերադարձին, իր լուրջ ու կշտամբող նայուածքը կը ստիպէր մեզ փախուստ տալ եւ պարտէզին դուռնէն մտնել տուն, չխանդարելու համար իր հանդիսաւոր մուտքը գլխաւոր դուռնէն: Սուրճը խմելէն ետք միայն իր դէմքը կը քաղցրանար եւ նոյնիսկ կը հաճէր մէկ քանի հանդիսաւոր ու խրատական խօսքեր ընել մեծերուն եւ կատակել փոքրերուն հետ:

Իր յարատեւ տխրութիւնն ու քաշուած կեանքը հետեւանքն էին անշուշտ այն զրացումին, որով ինքզինք օտար կը զգար նոր աշխարհի մը մէջ: Իր բարոյական սկզբունքները, վայելչութեան եւ բարի վարքի մասին ունեցած համոզումները կը վիրաւորուէին նոր ժամանակներու ըմբռնումներէն: Ձէինք հասկնար իր վիշտը եւ դարմացած ու երկիւղած կը մնայինք իր սրտմտած դէմքը տեսնելով: Բայց երբ աչքերուն մէջ ժպիտ երեւէր եւ ուզէր դէպի մեր մանկութիւնը հակել, անսահման երջանկութիւն կը զգայինք: Երբեմն, երբ պատրաստուէր դուրս ելլել, առանց առաջուց որեւէ բան ըսելու, վերջին վայրկեանին աչքերը կը դարձնէր դէպի ինձ եւ կը հրաւիրէր զիս իրեն ընկերանալ:

Մինչեւ աճյօր կը յիշեմ ու կը վերապրիմ այդ վայրկեանի ուրախութիւնը, որուն մասնակից կ'ըլլային մայրս ու մօրաքօյրս: Շուտով կը հազցնէին ինծի ամենէն դեղեցիկ հագուստս, կը զարգարէին զիս որքան կարելի էր եւ ճամբու կը դնէին մեծ մայրիկիս հետ: Մինչեւ փողոցին անկիւնը դառնալը՝ դիտէի, որ մեր ետեւէն կը նայէին, բայց արդէն այնքան հպար-

տացած կը զգայի ինքզինքս, որ չէի հաճեր դէպի ետեւ նայուածք մը նետել:

Պէտք չէ կարծել, որ շատ մեծ բան կը խոստանար մեծ մայրիկիս հետ դուրս ելլելը: Անիկա անպատճառ կ'երթար եկեղեցի, ուր կը մնար մինչեւ վերջը, կը համբուրէր պատարադիչ՝ քահանային խաչը եւ հանդարտ քայլերով, մխիթարուած ու խաղաղած, դուրս կու դար տաճարէն: Վերջին անգամ մը, գաւիթին մէջ, Աստուածածնայ պատկերին առջեւ կը խաչակնքէր, ապա իր թառամած շրթները կը մըմնջէին սրտազին հառաչով.

— Փա՛ռք քեզ, Աստուած...

Ի՞նչ բանի համար փառք կու տար, դժուար էր դուշակել, բայց հաճելի էր լսել գոհունակութեան այդ դերպոյն աղաղակը: Սիրտս կը զովանար, ինչպէս եթէ անկարելի իղձ մը իրականացած ըլլար, ու աւելի թեթեւօտն կը քայլէի մեծ մայրիկիս քովէն, որուն դէմքը կարծես լուսաւորուած կ'ըլլար երկնային լոյսով:

Երբեմն, փոխանակ անմիջապէս տուն վերադառնալու, կը բարձրանայինք Աճի Պատէմէն: Աւելի վեր, հեռուն, մոռցուած աղբականներ կը բնակէին, այր ու կիւն Սանդիկեանները: Երկուքն ալ ծեր էին եւ անդաւակ. իրենց տունը տխուր էր դամբարանի մը պէս:

Ամէն անգամուն, ճանճրոյթէս կիսամեռ, անձկալի անհամբերութեամբ կը սպասէի, որ մեծ մայրիկս մեկնումի նշանը տար, բայց ամէն անգամուն ալ արտակարգ ուրախութեամբ կ'երթայի հոն, միշտ յուսալով տարբեր եւ հրաշալի բան մը, որ նախորդ այցելութիւնները խոստացեր, բայց դեռ չէին շնորհեր:

Երկու պառուները կը խօսէին ցած եւ հանդարտ ձայնով, երբեմն միադանկերով, կ'ողեկոչէին անցեալը, որ մեզի համար մեռած էր եւ որ տակաւին կ'ապրէր անոնց սրտերուն մէջ: Ո՛չ մէկ բան կը հասկնայի, բայց կը յուզուէի եւ կեանքի զանազան տեսիլները կ'անցնէին իմ գրգռուած երեւակայութեանս առջեւէն:

Յաճախ նաեւ կը խոսատիէի և կ'երթայի պարտէզ, ծերունի Սանդիկեանի մօտ, որ իր կարկամած ձեռքերով կը շարունակէր խնամել վարդենիները: Ալեւորի իր գեղեցիկ զէմքը հիացում ու ակնածանք կ'ազդէր ինձի. բայց երբ կ'ուղէր հետս խօսիլ, կը փախչէի եւ կը թափառէի պարտէզին խորերը:

3

Այդ հին տան պատկերը կենդանի եւ վառ զօյններով մնացած է յիշողութեանս մէջ: Տարիներ ետք, երկար բացակայութենէ մը վերադարձիս, ուզած եմ կրկին տեսնել այդ տունը, բայց այլեւս չկար մեծ մայրիկիս դողդոջուն ձեռքը, որ զիս առաջնորդէր:

Տարիներէ ի վեր, մեծ մայրիկս կը հանդէժը այն գերեզմանատան մէջ, որուն արահեաններուն վրայէն ա՛յնքան հաւատարմօրէն իր հանդարտ քայլերը անցեր էին մեռելներու այցելութեան համար:

Մեռած էին նաեւ այդ տան բնակիչները, ու մեռած մանաւանդ մանկական երեւակայութեանս, որ ամէն ինչ հրաշալի տեսիլքի մը կը վերածէր եւ ձայն ու շունչ կու տար նոյնիսկ անկենդան իրերուն...

ԶԱՊԷԼ ԵՍՍՅԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լահու.— Փենճաղի (Հնդկաստան) մայրաքաղաքն է, շուրջ 325.000 բնակիչներով: Նշանաւոր են Լահուի մէջ պատրաստուած նուրը չալերը:

Անայլայլ.— Անգոփոխ, անխոով, անվրդով:

Կշտամբող.— Սաստող, յանդիմանող:

Կարկամած.— Կծկտած, քաշուած, շարժելու անկարող:

Ալիւոր.— Մեր, մաղերը ճերմկած:

Ակնածամբ.— Յարգանք, պատկառանք:

Արահետ.— Ճամբայ, ուղի, շաւիղ:

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍՍՅԵԱՆ.— Ծնած է Պոլիս, 1878ին: Նախնական ուսումը ստանալէ ետք կը մեկնի Փարիզ եւ կը հետեւի համալսարանական դասընթացքի: Ունեցած է գրական եւ հանրային գործունէութիւն: Աշխատակցած է բազմաթիւ քերթերու, գրելով պատմութեան, վեպեր եւ արձակ էջեր: 1934ին Հայաստան մեկնեցաւ, ուր մեռաւ բանտի մէջ, 1938ին: Գլխաւոր երկերն են «Շնորհիմով մարդիկ», «Կեդծ հանճարներ», «Աւերակներու մէջ», «Սիլիխտարի պարտեզները», որ լոյս տեսաւ Երեւան եւ որ իր վերջին գործը եղաւ: Մշակած է վիպական սեռը: Մեր կին գրողներուն մէջ ամենէն տաղանդաւորն է:

ԹԵԼԱՂՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ներկայացնել մեծ մայրիկին բնաւորութեան յատկանշական կողմերը: Ինչո՞ւ ան օտար կը զգար ինքզինք իր շրջապատին մէջ եւ ի՞նչ էր իր վերաբերումը շուրջիներուն հանդէպ: Բացարիւ ինքիցնային զգացումները իր մեծ մայրիկին նկատմամբ: Խօսիլ գործող միւս անձներուն մասին: Ո՞ր մասը աւելի հետաքրքրական կը գտնէք այս գրութեան մէջ. ինչո՞ւ: Հեղինակին ո՞ր գործէն առնուած է «Մեծ մայրիկս»: Ուրիշ ի՞նչ կարդացած էք Զապէլ Եսայեանի գործերէն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ .— Համաձայն փոփոխման կանոնին, բարդութեան եւ ածանցման ատեն բառերուն մէջ գտնուած *եա* երկրարբառը կը փոխուի *ե-ի* . օրինակ՝ ատեան — ատենապետ, մատեան — մատենագիր, յորելեան — յորելեական: Իսկ *լա* երկրարբառը բարդութեան կամ ածանցումի ատեն կը փոխուի *ու-ի* . օրինակ՝ հաշիւ — հաշուակալ, պատիւ — պատուաւոր: Նման պարագաներու մէջ *ի-ն* կը փոխուի *ե-ի* . օրինակ՝ մատնի — մատնեմատ, գինի — գինետուն, բարի — բարեսիրտ:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ .— 1. Մեծ մայրիկս կամ մեծ հայրիկս, 2. Այցելութիւն ձեր դրացիներէն մէկուն տունը, 3. Կիրակի օր մը եկեղեցիին մէջ:

18. Ո՞Վ Է ԱՊՐՈՒՄ

1

Շատ դարեր առաջ, Արեւելքում մի փառատենչ իշխան է լինում: Անունը մոռացուել է, բայց դժբը յիշուում է: Շարունակ դաւեր է նիւթել դրացի իշխանների

դէմ՝ դրաւելու նրանց երկիրներից մանր ու խոշոր հողամասեր եւ, դաւերի ու կոխների մէջ յաջողելով, դարձել է բոլորից մեծ ու բոլորից ուժեղ:



Այս կռուասէր իշխանը, շրջապատի իշխանութիւնները փոքրացնելուց եւ հարկատու դարձնելուց յետոյ, ելնում է աշխարհակալութեան:

Ստուար ու հզօր իր բանակին սլուին՝ անցած՝ յարձակում է մի թագաւորութեանից միւսի վըրայ:

Մի անգամ, յանկարծակի խուժելով մի հեռաւոր իշխանութեան սահմաններից ներս, հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռների առաջ: Պաշարում է քաղաքը, բանակը զետեղում է ամրակուռ պարիսպների շուրջը, ինքն էլ նստում է արքայական վրանի մէջ, օր ու դիշեր հնարներ ու դաւեր որոնելով քաղաքին տիրանալու համար:

Մի օր, զօրքի մէջ քննական պտոյտ անելուց յետոյ, վերադառնում է իր վրանը: Ճանապարհը անցնում էք քաղաքի ընդարձակ գերեզմանատան միջով: Հնադարեան այդ մեռելատանը տարածուած էր լայնահիստ դաշտի վրայ եւ ծածկում բլուրները:

Իշխանը քաշեց նոժոյղի սանձը, կանգ առաւ եւ դիտեց անծայրածիր գերեզմաննոցը: Դիտում էր եւ խորհում: Ի՞նչքան յուշարձաններ կան, ի՞նչքան մամուռտած շիրմաքարեր, աւելի՛ բազմաթիւ քան իր գինուորները: Հարկաւ, ամէն մի քարի տակ մի հանգած կեանք կայ, մի մեռած անյայտ եւ անշուշտ նրանց մէջ կան քաջ սպանիկներ, զօրավարներ, իշխաններ, մեծատուններ, գիտուններ:

Սանձը յանձնեց թիկնապահներից մէկին, ինքն էլ իջաւ նոժոյղից: Մօտեցաւ առաջին շիրմաքարին եւ կարդաց արձանագրութիւնը, — անուն, տոհմանուն, մեծահարուստ վաճառական, ծնուեց այս թուին, մեռաւ այս թուին. չապրեց ե՛ւ ոչ մի օր:

Ի՞նչ տարօրինակ արձանագրութիւն:

Կարդաց մի ուրիշը, — անուն, տոհմանուն, հոռակաւոր զօրապետ, միշտ յաղթական, ծնուեց — մեռաւ, ապրեց միայն մի օր: Իշխանը դարմացած շարունակեց ընթերցումը յաջորդ մահարձանի, — մեծափարթամ կալուծատէր, ծնուեց — մեռաւ, ապրեց եօթը տարի:

Մօտեցաւ մի ուրիշ յուշարձանի, — անուն, տոհմանուն, մարդասպան-աւազակ, ծնուեց — մեռաւ, ապրեց երեք տարի: Աւելի դարմացաւ իշխանը եւ, շիրմաքարից շիրմաքար անցնելով, կարդաց մի այլ արձանագիր, — անուն, տոհմանուն, խորիմաստ հեղինակ, ծնուեց — մեռաւ, ապրեց իր կեանքի բոլոր օրերը:

Իշխանը մտայոյղ կանգ առաւ. ի՞նչ կը նշանակէ

այս, ի՞նչ խորհուրդ ունին այս գրութիւնները: Մտածե՛ց, մտածե՛ց, բայց անկարող եղաւ լուծելու այս գաղտնիքը: Հրամայեց դռներ-բերել տեղացի մի մարդ, գիտակ՝ այս առեղծուածին: Յրուեցին թիկնապահները ամէն կողմ եւ մի պահ անցած՝ բերին մի ծերունի, որ բնակուում էր գերեզմաննոցի ծայրին, մի հիւղակի մէջ:

— Կարո՞ղ ես բացատրել ինձ այս տապանագրերի իմաստը, — հարցրեց իշխանը:

— Ես այս գերեզմանատան հինաւուրց պահապանն եմ, ո՛վ մեծ իշխան, եւ ճանաչում եմ իւրաքանչիւր մահացածի, որ փոշի է դառնում այս քարերի ներքոյ:

— Հապա՛ մեկնիր ինձ, ի՞նչ է ուզում ասել, օրինակի համար, այս գիրը:

Ծերուկը, յենուելով ցուպին, առանց նայելու մտանանչուած շիրիմին եւ աչքերը յառելով իշխանի աչքերին.

— Կէս դար է, — ասաց, — դեգերում եմ այս մեռելաքաղաքի բնակիչների մէջ: Այստեղ հանգչում են հայրերը եւ նրանց կողքին՝ իրենց որդիները, խկ թոռները հիմա մարտնչում են քո դէմ: Ես գիտեմ այս մեռելաքաղաքի գործերը: Մահը խիստ եւ հզօր պարտատէր է: Ո՛չ յաղթապանձ իշխանը կ'ազատի այդ պարտքից, ո՛չ պարտուած ստրուկը: Կեանքը սուտ է, միայն...

Իշխանը մեղմով կտրեց ծերունու խօսքը.
— Այո՛, այո՛, բայց խնդրում եմ ինձ մեկնես այս գրերի խորհուրդը:

Ծերունին մի պահ շփեց ճակատը եւ ասաց.
— Հնուց, դարերի մէջ սրբագործուած մի սովորութիւն կայ մեր քաղաքում: Երբ մեռնում է մի քաղաքացի, դատի են նստում քաղաքի իմաստուն ծերու-

նինները: Քաջութիւն, խելք, հարստութիւն անարժէք են, երբ չեն գործածուում ուրիշի համար: Իրենց անձի համար մարդոց ապրած օրերը նժարի մէջ կշիռք չունին, բարիք գործած օրերն են ապրած համարուում: Որովհետեւ կեանքի իմաստը ուրիշի համար ապրելու մէջն է: Եւ այսպէս հաշուում են ննջեցեալի բարիք գործած օրերը եւ թիւը գրում տապանի վրայ:

Եւ, առանց նայելու մասնանշուած շիրմաքարին, ծերունին շարունակեց.

— Այս քարի տակ հանդչում է մեր ժողովրդի հըռ-
չակաւոր իմաստունը: Իր մանուկ օրերից հրաժարուեց նա աշխարհի հաճոյքներից: Զգաց թշուառի եւ զրկուածի տանջանքները, տառապեց քաղցածի եւ կեղեքուածի տառապանքներով: Ամփոփուեց իր աղքատիկ խուցի մէջ, օր ու դիշեր, ամէն ժամ խորհեց թշուառների փրկութեան համար: Գրեց ու երգեց, եւ նրա սրտից բխած խօսքն ու երգը մխիթարեցին տառապողին, ըմբոստացրին լքուածին եւ սաստեցին կեղեքողին ու հարստահարողին: Նա մեր մարդարէն է, իմաստուն առաջնորդը դէպի արդար եւ բարի կեանքը:

— Իսկ այս միւս մահարձանը, — հարցրեց իշխանը:

— Սա մեծ ճանապարհների վրայ կողոպտող եւ սպանող աւազակ էր: Բայց մի օր զղջաց իր ոճիրները, կտորեց սուրը: Հեռաւոր վայրերից աղբիւր տարաւ երկրի ամենից ջրազուրկ ճանապարհի վրայ եւ ինքն էլ աղբիւրի մօտ իր խշտին շինեց: Առաւօտից մինչեւ երեկոյ, դաւաթը ձեռքը, սառը ջուր էր մատուցանում ծարաւի ճամբորդներին: Այսպէս նա ապրեց ուրիշների համար երեք տարի:

«Այդ մասնանշած մեր քաջ զօրապետն է, յաղթողը մեր երկրի թշնամիներին, բայց նրա սխրագործութիւնները հաշուի չառան: Նա պատերազմում մի

անգամ թշնամի մի վիրաւոր զինուորի պատսպարեց իր վրանում, վէրքերը կապեց եւ խնամեց մի օր: Մեր իմաստունները այդ միակ օրը հաշուեցին ապրած օր:

«Իսկ այս մահարձանի տակ պառկած է քաղաքի մեծահարուստներից մէկը: Իր կեանքում նա միայն մի բան դիտէր, — դանձ դիզել: Ո՛չ մի մարդու է՛ւ ոչ մի վայրկեան չկարեկցեց, աննշան բարիք իսկ չարեց է՛ւ ոչ մէկին: Նրա օրերը զուր անցան, ծուխի պէս ունայն: Եւ գրեցին նրա տապանի վրայ. «Չապրեց է՛ւ ոչ մի օր»:

Իշխանը դոհացաւ ծերունու խօսքերից, առատ վարձատրեց նրան եւ հետիոտն, գլուխը կախ, դանդաղ քայլերով գնաց վրանը:

Ամբողջ դիշերը, մինչեւ լոյս, նա ո՛չ քնեց եւ ոչ հանգստացաւ. մտածե՛ց ու մտածեց:

Երբ լոյսը ծագեց, փոխանակ ռազմակոչ շեփոր դարկելու՝ կռիւը վերսկսելու համար, նահանջի հըրաման արձակեց: Պաշարումը վերցրեց, վերադարձաւ իր երկիրը, բանակը ցրուեց եւ ձեռնարկեց բարի ու խաղաղարար գործերի կեանքին մնացած օրերը ապրելով ուրիշների բարօրութեան համար:

Աւանդութիւնը յիշատակում է, որ նա, ամէն առաւօտ զարթնելիս եւ ամէն երեկոյ քուն մտնելիս, կրկնում էր.

— Ես բախտաւոր եմ ~~գործ~~ ապրում եմ հիմա:

Ա. ԻՍՍԶԱԿԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկատու. — Հարկ՝ տուրք տուող, հպատակ:

Աշխարհակալութիւն. — Աշխարհ եւ կալ բառերէն կազմուած է. կը նշանակէ երկիրներ, աշխարհներ գրաւող:

Ստուար. — Մեծ, մեծ թիւով, բազմաթիւ:

Ամբակու. — Ամուր շինուած:

- Մեծիդաստան.— Գերեզման, կ'ըսուի նաև մեռելաքաղաք:
- Մեծայրածիր.— Մայր, սահման չունեցող:
- Մամապատ.— Մամուռ կապած. մամուռը տեսակ մը բոյս է, որ կը հասնի խոնառ տեղերու մէջ:
- Հանգած.— Մորած. փոխարեւարար՝ մեռած, վերջացած:
- Տոհմամուն.— Տոհմի, գերզատանի անուն, մականուն:
- Մեծափարթամ.— Մեծ եւ փարթամ բառերէն. շատ հարուստ:
- Ստեղծուած.— Հանելուկ, մութ, անհասկնալի:
- Գեղերիլ.— Թափառիլ, անտնալ:
- Կեղեքուած.— Չարչարուած, խիստ նեղութիւններու ենթարկուած:
- Խշտի.— Խեղճուկ անկողին, սովորաբար դեանի վրայ:
- Կարեկցիլ.— Մեղքնալ:
- Ունայն.— Պարսպ, դատարկ, աննպատակ:

ԱՅՆՏԻՒԻ ԻՍԱՀԱԿԱՆՆԵՐ — Ծնած է Ալեքսանդրապոլ (Լեհի-նական), 1875ին: Ուսումը ստացած է ծննդավայրից եւ Եջմիածինի Գեորգեան ճեմարանին մէջ, ապա հետեւած է Լառու համալսարանական դասընթացքի, Եւրոպայի մէջ: Մեռաւ Երեւան, 1957 Հոկտեմբեր 17ին: Գլխաւոր երկերն են «Երգեր ու վերքեր», «Արու Լալա Մահարի», «Աշման ծաղիկներ», «Հայրենի ազբիւրից», «Ուստա Կարօ եւ Օրբէ Յարութ» եւն: 1951ին Երեւանի մէջ հրատարակուեցան իր ամբողջական երկերը, իսկ 1955ին տօնուեցաւ իր ծննդեան 80ամեակը: Առաւելաբար երգած է բնութիւնը, հայրենիքը, սէրը, վիշտը:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Նախ պատմելի գիրքը, ապա ըսելի, թէ գրական ո՞ր սեռին կը պատկանի այս գրուածքը: Ներկայացնել Արեւելիի իշխանին փառատենչութիւնը եւ ատոր հետեւանքները: Կրնա՞ք ձեր կողմէ քանի մը օրինակներ տալ այնպիսի մարդերու, որոնք «կ'ապրին» իրենց ամբողջ կեանքը: — Ի՞նչ նշանակութիւն ունի այս գրուածքին եզրակացութիւնը. «Սա բախտաւոր եմ, ես ապրում եմ հիմա»:



19. ՍՊԱՐԱՊԵՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Անօթահար եմ այսպէս մահինի մէջ մեռնելու, Երբ որ մարմինս է անթիւ ըսպիներով ծածկըւած: Կը գգամ, թէ մահն է արդէն գլխուս վերեւ թեւարաց, Եւ պատրաստ եմ, անտրտունջ, բայց կը խորհիմ արտասույց,

Թէ կրնայի ռազմի մէջ խըրոխտ հոգիս աւանդել, Աշտանակուած նրժոյցի վըրայ, աղեղը ձեռքիս, Նիզակներու, սուրերու շկահիւնին ես ընտել. Ի՞նչ տառապանք է հիմա, որ մահը ծե՛ր տեսնէ զիս...

Ա՛հ, բերէ՛ք մօտըս բոլոր իմ գրահներս, վրնջէ՛ք թո՛ղ Դըրան առջեւ, անհամբեր՝ տիրոջ գալուն ըսպասող իմ երիվարըս հրեղէն, եւ զիս տարէ՛ք դեռ արթուն

Լոյսի՛ն, որպէսզի տեսնեմ անոր ծագիլը հեռո՛ւն,
Լեռներուն ծոցը մըռայլ՝ ոսկի հրդեհ մշտաբոց,
Ու մահուան դէմ կանգնիմ ես՝ սպարապետը հայոց...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մահին.— Անկողին:

Սպի.— Վէրքի ձգած նշանը, հետքը:

Ռազմ.— Պատերազմ, կռիւ:

Շկահին.— Սուրբերո թախումէն առաջ եկած ձայնը:

Ընտել.— Ընտելացած, վարժուած:


Երիվար.— Ձի:

Սպարապետ հայոց.— Ակնարկութիւն՝ Մանուէլ Մամիկոնեանի, որ հայոց բանակին սպարապետն էր Չորրորդ դարուն: Ժամանակակից պատմիչը՝ Փաւստոս Բիւզանդ կը պատմէ, թէ Մանուէլի մարմինը ծածկուած էր անհամար վէրքերու սպիներով եւ թէ «դրամի մեծութեան չափ ողջ» տեղ չէր մնացած մարմնին վրայ: Մեռաւ հիւանդութենէ, անկողնի մէջ: Ինք կ'ուզէր մեռնիլ պատերազմի դաշտին վրայ, թշնամիներուն դէմ կռուելու ստեն: Մեռնելէ քիչ առաջ Մանուէլ սպարապետ ըսաւ. «Ինչո՞ւ ես բախտ չունեցայ պատերազմի մէջ մեռնելու»:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ.— Բուն անունով՝ Արսէն Շամխան: Ծնած է Ամասիա, 1893ին: Դեռ հագիւ պատանի՝ փոխադրուած է Գահիրէ եւ յամախած տեղւոյն ազգային վարժարանը: Աւարտած է Փրորանս լիսէն եւ հետեւած Սորպոնի (Փարիզ) գրականութեան ճիւղին: Մեռաւ Մոնթրէալ (Քանատա) 19 Մայիս 1969ին: Գլխաւոր երկերն են «Արեւի եւ մահուան երգեր», «Սոնաքներ», «Երկրպագութիւն», «Արձակ էջեր» եւայլն: Ունի մաբուր լեզու եւ պատկերալից ոգ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Խօսիլ Մամիկոնեան ըստարապետներուն մասին: Անոնցմէ ո՞վ աւելի մեծ դեր կատարած է: — Այս հերթուածին մէջ խօսողը ո՞վ է: Մեր ո՞ր պատմիչը նկարագրած է Մանուէլ սպարապետին մղած պատերազմները: — Խօսիլ մեր արքայական տոհմերուն մասին: Ո՞րն է այդ տոհմերուն մէջ վերջինը: Ի՞նչ գիտէք Լուսինեան թագաւորներու մասին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ — Մեր կարգ մը նահապետներուն, թագաւորներուն եւ իշխաններուն մասին գեղեցիկ հերթուածներ գրած են Վահան Թէֆեեան, Սողոմոն Տարօնցի եւ ուրիշներ: Դասարանին մէջ կարդալ այդ հերթուածներէն մէկ ֆանին:



20. Ա Ր Ծ Ո Ւ Ի Ն

(Ա. ՄԱՍ)

1

Արծուին, որ Վարդանի հետ եկել էր Արտաշատ, թեթեւ նախաճաշելուց յետոյ գնաց նժոյգներին նայելու: Նա սովոր էր անձամբ խնամելու իր եւ իր տիրոջ նժոյգները. ուստի՝ դուրս քաշեց նրանց եւ տարաւ Արաքսի ափը ջրելու: Մտաւ ջուրը:

Գետափին երկու պարսիկ զինուորներ էին պառկել եւ նայում էին կիսաքուն: Նրանց դուր չեկաւ, որ Արծուին ազատ համարձակ լողացնում էր նժոյգները:

— Է՛յ, — ձայն տուեց զինուորներից մէկը, — ո՞վ էս, որ այստեղ ես լողացնում նժոյգները:

Արծուին, առանց ուշադրութիւն դարձնելու, շարունակեց իր դործը:

— Քեզ հետ չե՞ն, — կրկին ձայն տուեց զինուորը:

Միւս պառկածը եւս նստեց:

— Ի՞նչ է, ո՞վ է, — հարցրեց նա:

— Քնձոտտի մէկը, — բարկութեամբ ասաց առաջին զինուորը, — նժոյգ է լողացնում արգելուած տե-



ղը: Է՛յ, խո՞ւլ ես, այստեղ իրաւունք չունես նժոյգով ման գալ, ո՛ւր մնաց լողացնել:

Արծուին ո՛չ իսկ նրա կողմը նայեց:

Այն ատեն պարսիկ զինուորը վերցրեց մի քար եւ շարտեց Արծուի վրայ: Քարը դիպաւ Վարդանի նժոյգին, որ ցատկեց ջրի մէջ եւ քիչ մնաց պարանը պոկէր ու փախչէր:

Արծուին երկու նժոյգները սանձից քաշեց, մօտ եկաւ պարսիկ զինուորին եւ այնպէս քացի տուեց նրա կրծքին, որ սա անշունչ փռուեց գետին: Միւս զինուորը վեր թռաւ եւ գետնից մի քար առնելով նետեց Արծուի վրայ: Արծուին ազատ ձեռքով բռնեց քարը եւ շարտեց զինուորի գլխին: Զինուորը վերաւորուեց եւ արիւնը ժայթքեց նրա դէմքին: Նա գոռաց: Զայնի վրայ պարսպի գլխից նայեցին պարսիկ զինուորները: Ըստ երեւոյթին, այստեղ էր նրանց զօրանոցը:

Նրանք ցատկեցին պարսպից դուրս, ոմանք էլ քաղաքադռնից վազեցին եւ բոլորը մէկ ուղղուեցին Արծուի կողմը:

— Քարջա՛րդ արէք դրան, — գոռաց զինուորներից մէկը եւ մի քար վերցնելով նետեց Արծուի կրծքին:

2

Տեղի ունեցաւ մի ահռելի տեսարան: Արծուին ցատկեց իր նժոյգի մէջքին եւ, միւս նժոյգի պարանը ձեռքին, յարձակուեց զինուորների վրայ ու սկսեց սրմբակների կոխան անել նրանց:

Քաղաքադռնից դուրս թափուեց մի բազմութիւն եւ շրջապատեց կռուողներին: Պարսիկ զինուորները քարերի կարկուտ էին տեղում Արծուի կողմը: Արծուին ճարպիկօրէն խուսափում էր, հսկայական թը-

ուիչքներով պարտուում զինուորների շուրջը եւ յանկարծ շեշտակի գրոհում էր նրանց վրայ: Երբեմն կռանում էր գետին եւ մի քար խելով յարձակում էր սեւէ մէկի վրայ: Նժոյգները կատաղեցին աւելի, քան Արծուին: Ծառանում էին եւ յանկարծ այնպիսի ուժով նետուում զինուորների վրայ, որ սրանք խուրճերի պէս թափուում էին գետին:

Չայներ լսուեցին. «Արծուի՛, բաւական է, հեռացի՛ր»:

Բայց Արծուին շարունակում էր կռուել զինուորների բազմութեան հետ: Պարսպի վրայ յայտնուեց պարսիկ սիպահը:

— Ի՞նչ է պատահել, — գոռաց նա զայրացած:

Նրան յայտնեցին եղելութիւնը:

— Նետահար արէք, — հրամայեց նա:

Չինուորները վաղեցին աղեղները բերելու: Բայց նոյն պահին դուրս եկաւ հայ բերդապահը եւ կատաղի աչքերը յառելով սիպահի վրայ.

— Չյանդգնէ՛ք, — գոռաց:

— Դադա՛ր, — գոռաց բերդապետը աւելի ուժեղ, — եթէ ոչ զօրքը կը բերեմ:

— Բռնեցէք այդ կատաղածին, — գոռաց սիպահը: Սիպահը ձեռքով արեց. աղեղնաւորները վար առին նետերը:

Արծուին շարունակում էր կռուել: Ներքեւից նրան շրջապատեցին քաղաքացիները եւ աղաչում էին դադարեցնել կռիւր: Բայց Արծուին չէր լսում: Նա այնքան կռուեց, մինչեւ որ զինուորներին վստեց սպարէզից: Բերդապետը նշան արեց նրան, Արծուին նժոյգները կրկին քշեց գետը եւ սկսեց լողացնել նրանց, իբր թէ ոչինչ չէր պատահել:

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

Արտաշատ. — Հայաստանի հին մայրաքաղաքներէն մէկուն. սնունն է: Ներկայիս սննչան գիւղ մըն է Երեւանի նահանգին մէջ:

Նժոյգ. — Երիվար, ընտիր ձի:

Դուր գալ. — Հաճելի, ախորժելի ըլլալ: Դուր չգալ՝ Հախորժելի, ախորժելի չըլլալ:

Քննառու. — Խեղճ, ողորմելի, սննչան:

Շայրտել. — Նետել:

Պոկել. — Փրցնել, կտրել:

Բացի տալ. — Աքացել, ոտքով հարուածել:

Բարջարդ (ընել). — Քարով ջարդել, սպաննել:

Պարան. — Հաստ չուան:

Գրոհել. — Յարձակել:

Կռամալ. — Ծռել:

Խուրճ. — Կապոց, տրցակ:

Սիպահ. — Պարսկերէն լատ. կը նշանակէ սպայ:

Նետաւար. — Նետով զարնել՝ սպաննել:

ԴԵՄԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ. — Ծնած է Ախալքալաք (Կովկաս), 1877ին: Ուսումը ստացած է Ժնևըրպալայի պոպային վարժարանին, Էջմիածնի Գեորգեան ճեմարանին եւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին մէջ: Հետեւած է Լաւր Ժըմիի համալսարանին մակալարժական միւլիմ: Գլխաւոր երկերն են «Բանաստեղծութիւններ», «Գառաւտան», «Յովնան Մեծագործ», «Քաջ նագար», «Վարդանանք» պատմական վէպը եւ բազմաթիւ պատմաւեճեր ու արձակ էջեր: Իր գործերէն մէկ քանին քարգմանուած են ուստերներ: Առաւելաբար մշակած է վիպական եւ քաղերական ստեղծումներ: Ունի պատմելու շնորհ եւ պարզ լեզու: Մեռաւ Երեւան, 1956 Դեկտ. 6ին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ .— Պատմել նիւթք ամփոփ ձեռով եւ ըսել, թէ մեր պատմութեան ո՞ր շրջանէն առնուած է ան: Ի՞նչ նշանակելի դէպքեր պատահած են այդ շրջանին. ներկայացնել գլխաւոր դերակատարները: Մեր պատմիչներէն ո՞վ գրի առած է նոյն շրջանի պատմութիւնը:

21. Ա Ր Ծ Ո Ւ Ի Ն

(Բ. ՄԱՍ)

1

Ներքեւում բաղմութիւն կար հաւաքուած: Բերդապահը դիմեց նրանց.

— Ի՞նչ է պատահել:

— Պահակները գիտեն, սեպո՛ււհ, — ձայն տուին ներքեւից:

— Կանչեցէ՛ք պահակները:

Կանչեցին: Պահակները պատմեցին, որ զինուորները արգելել են Արծուիին՝ գետում նժոյգ լողացնելը:

— Դրանք մեզ մի օր հաց ուտելն էլ կ'արգելեն, — կատակեց ներքեւից մի ալեւոր ծերունի:

Բաղմութիւնը ծիծաղեց:

— Եկել են, գլխներիս նստել, մեր ջուրը մե՞զ են խնայում, — շարունակեց ալեւորը:

Բերդապետը մոմոաց եւ ապա սիպահին դիմեց.

— Ի՞նչ էք ուզում բնակչութիւնից: Ինչո՞ւ հանգիստ չէք մնում:

— Մենք արեայ արքայի զօրքն ենք, — պատասխանեց սիպահը, — մեր զօրանոցի սահմանը ուրիշ զինուոր պիտի չմտնի:

Բերդապետի արիւնը գլխին խիեց: Նա, որ արդէն շատ պատճառներով լցուած էր պարսից զօրքի դէմ, բռունցքը թափ տուեց դէպի սիպահը:

— Ահա՛ ձեր սահմանը, մտէ՛ք սրա մէջ, — գոչեց նա, — ձեզ տեղ ենք տուել խելօք նստելու, դուք մեր գլխովն էք ուզում նստել: Եթէ մի անգամ էլ յանդգնէք ոչ թէ սպարապետի ձիուն, այլ մի հասարակ բնակչի աւանակին դիպչել, ձեզ կը շարտեմ պարսպից վար:

Սիպահը գոռոց նայեց նրան եւ չուզեց տեղի տալ: Նա առաջ եկաւ դէպի բերդապետը եւ գլուխը մօտեցրեց նրա դէմքին.

— Դու արեայ արքայի՞ն ես դիմադրում:

Բերդապետը կատաղեց.

— Ի՞նչ, վախեցնո՞ւմ ես: Հիմա դիակդ կը փռեմ: Ներքեւի բաղմութիւնը չարածպիտ նայում էր վերեւ:

2

Այդ պահին քաղաքի կողմից պարիսպ էր բարձրանում պարսից զօրամասի հրամանատարը: Նա գալիս էր դանդաղ եւ յօնքերը խոժոռած: Նրան ճանապարհ տուին զինուորները, որոնց միջով անցաւ նա, նստեց հետու եւ մատով կանչեց բերդապետին ու սիպահին:

Սիպահը վազեց նրա մօտ եւ խոնարհ գլուխ տալով սպասեց: Բերդապետը կանգնած մնաց իր տեղում:

Հրամանատարը դաժան նայեց նրան եւ կրկին մատով կանչեց:

— Ես այստեղից էլ կը խօսեմ, — ապաց նա, — դու ըս խօսքն ասան:

Հրամանատարը կատարեց.

— Ես քեզ հրամայում եմ դալ մօտս հաշիւ տալու: Ի՞նչ է կատարուել:

— Ես քեզ այստեղից էլ կարող եմ ասել, որ զսպես ըս ղինուորներին: Ի՞նչ իրաւունքով են արգելում ըս պարապետի նժոյգը լողացնել այստեղ:

— Ո՞վ է այդ լակոտը, որ սպանել է ղինուորիս:

— Այդ քաջը այնտեղ լողացնում է նժոյգներին: Դա սպարապետի թիկնապահն է:

Հրամանատարը վեր թռաւ նստած տեղից եւ դարձաւ դէպի սիպահը.

— Գնա՛. բռնել տուր դրան:

Բերդապետը շուռ եկաւ եւ ձեռքով արեց հեռու աշտարակների վրայ լցուած հայ ղինուորներին: Այնտեղից փող փչեցին: Անմիջապէս պարիսպների վրայից, տակից, մօտակայ տների այգիներից ու բակերից դէպի բերդապետը վաղեցին հարիւրաւոր ղինուորներ, ղինուած նիզակներով, տապարներով ու նետերով: Պարսիկ հրամանատարը ըստ երեւոյթին չէր սպասում այսպիսի մի յանդգնութիւն եւ յոյս ունէր վախեցնելով գործ տեսնել: Նա ինքը վախեցաւ եւ առաջ դալով դէպի բերդապետը՝ սկսեց աւելի բարկացած ձայնով սպառնալ.

— Քեզ գլխատե՛լ կը տամ: Ի՞նչ ապստամբու՞մ ես արեաց արքայի դէմ:

— Արեաց արքայի հետ գործ չունեմ, ես քեզ եմ խելքի բերում. արեաց արքան դո՞ւ ես:

Հրամանատարի կասկարմիր դէմքը ցոյց էր տալիս նրա դայրոյթը: Բայց երկիւղը զսպեց նրան: Եւ մի կերպ արժանապատուութիւնը պահելու համար սպառնաց.

— Ես այդ չեմ ների քեզ: Սպասի՛ր...

Ու արագ իջաւ պարսպից:

Բազմութիւնը քրքջաց եւ զնայ դէպի գետափ, ուր Արծուին շարունակում էր լողացնել նժոյգներին:

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպուհ.— Ազնուական՝ նախարարական տոհմէ, ազնուական ծագում ունեցող, ասպետ, պայազատ:

Արեաց արքայ.— Արիներու քաջերու թաղաւոր. այս անունը կու տային հին Պարսկաստանի թաղաւորներուն:

Սպարապետ.— Բանակի ընդհանուր հրամանատար, զորապետ: Սպարապետ ըսելով հոս պէտք է հասկնալ Վարդան Մամիկոնեանը:

Տապար.— Կացին: Սփռում էր պիտիւն իր ամբողջ զորքով իր անունով:

ԹԵԼԱԴԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Կանգ առնել այս դասին մէջ յիշատակուած անձերուն եւ գանձնք վարող զգացումներուն վրայ: Ի՞նչ բան կը գնահատէ Արծուիին մէջ: — Խօսիլ արեաց արքաներէն անո՛նց մասին, որոնք սերտօրէն կապուած են մեր պատմութեան հետ: — Ընդհանուր եզրակացութիւն մը հանել այս դասէն:

ՇԱՐԱԴԻՐՈՒԹԻՒՆ.— 1. Մեր հայրենի գետերը, 2. Հաղորդակցութեան միջոցները հիմա եւ հին դարերուն, 3. Շարունակեցէ՛ք այս պատմութիւնը («Արծուին»):



22. ԳԱԶԵԼ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մանկութիւն իմ քննազգին, ես քեզ ի՞նչպէս մտածեմ,
Ցաւով լըցրիր իմ հոգին, — ես քեզ ի՞նչպէս մտածեմ:
Դեռ չըծաղկած թօշնեցիր, հանգար ինչպէս որք

մանուկ,
Կարօտ խիճի կրակին, — ես քեզ ի՞նչպէս մտածեմ:

Պահմտոցիկ խաղ չարիք, թիթեռ, ծաղիկ չտեսար,
Կարկըտահար սոխակ իմ, — ես քեզ ի՞նչպէս մտածեմ:
Փափա՛ք, փափա՛ք մընացիր քեզ ժպտացող աչքերի,
Մայրական ջերմ գգուանքին, — ես քեզ ի՞նչպէս

մտածեմ:

Մըրիկ պայթեց քո գլխին, խնդութեան սով մընացիր,
Վշտի թըրով քեզ զարկին, — ես քեզ ի՞նչպէս մտածեմ:
Ու հիմա, երբ նայում եմ մանկանս անոյշ աչքերին,
Դէմս ես կանգնում անմեկին, — ես քեզ ի՞նչպէս

մտածեմ:

Կուզէի քեզ հանդիպել այս խանդավառ օրերին,
Քեզ արեւ տալ իմ անգի՛ն, — ես քեզ ի՞նչպէս

մտածեմ:

Կուզէի... բայց, ա՛խ, ափսո՛ս, գիտեմ, որ

էլ ո՛չ մի օր

ես չեմ դառնայ դու կրկին, — ես քեզ ի՞նչպէս

մտածեմ:

ՍԱՐՄԷՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գագել. — Ոտանաւորի յատուկ ձեւ մը, որ փոխ առնուած է
արարներէն:

Թօշնիլ. — Թատամիլ, թոռմիլ, խամրիլ:

Խիճիլ. — Ուրախութիւն, խնդութիւն, ցնծութիւն:

Պահմտոցիկ. — Պահմտութիւն (խաղ):

Սով (մնայլ). — Կարօտ մնայլ:

Անմեկին. — Անմեկնելի, անբացատրելի. նաև՝ անբաժանելի:

ՍԱՐՄԷՆ. — Բուն անունն է Արմենակ Սարգիսեան: Ծնած է
1901ին: Այժմ կ'ապրի Երեւան եւ կը գրողի գրականութեամբ:
Իր առաջին գործը, «Գաշտերը ժպտում են», լոյս տեսաւ 1925ին
Լեհիստանի մէջ (Ալեքսանդրապոլ): Իր միւս գործերն են
«Թռիչք», «Երգատան», «Ատղեր», «Հայրենիք», «Ծաղկունք»,
«Սրտի ձայնով» եւն.:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Հեղինակը ինչո՞ւ չի
կրնար մտնալ իր մանկութիւնը: Ի՞նչ բերած է ան ի-
րեն, ցա՞ր քէ ուրախութիւն: Եւ ինչո՞ւ աւելի շատ
տրտմութիւն ու քափիծ կայ այս փերքուածին մէջ:
Ի՞նչ իմաստով ըսուած է «ես չեմ դառնայ դու կրկին»:
— Մանկութեան մասին գրուած ուրիշ փերքուածներ
կարդացա՞՞ք էք. ո՞րն է ամենց մէջ ամէնէն գեղեցիկը:

23. ԿԱՂԱՆԻՒՆՈՒԵՐ

1

Կանաչ ծածկոցով սեղանին առջև, որուն վրայ պզտիկ լամբար մը կը վառէր, գլուխ-գլխի կը նըստէին մայր ու տղայ ամէն գիշեր:

Տիկին Աննիկ, կարի խոշոր ծրարը քովը, ասեղ կը շարժէր անընդհատ, մինչ Վահրամ յաջորդ օրուան դասերը կը պատրաստէր: Մերթ ընդ մերթ կը ձգէին իրենց աշխատանքը, բառ մը ըսելու համար իրարու, յողնութիւն առնելով պահիկ մը իրարու նայուածքի մէջ: Յետոյ յանկարծ երկուքին ալ միտքը հեռու կը փախչէր ներկայէն, մէկունը՝ դէպի անցեալը, միւսինը՝ դէպի ապագան:

Վահրամ ապագայի մասին կը մտածէր շարունակ. մտովի կը հաշուէր այն հինգ տարիները, զորս պիտի անցընէր դեռ վարժարանին մէջ, մօրը ձեռքի աշխատութեամբը ապրելով, անոր աչքի լոյսին, արիւնքրտինքին գինը ուտելով: Եթէ անգամ մը դպրոցէն ելլէ՛ր սակայն... Ինչե՛ր պիտի չընէր իր խեղճ մօրը համար, որ, իր երեսունըհինգ տարեկան հասակին, աշխատանքի բեռան տակ կքած, ծեր կ'երեւար արդէն: Եւ, աչքերը դադադողի գիրքին վրայէն վեր առնելով, կը նայէր անոր այն դորովազուրթ խանդաղատանքի անճառ արտայայտութեամբ, զոր զաւակ մը մօրը համար միայն կրնայ զգալ աշխարհի վրայ:

Մայրը, այդ պահուն անցեալին մէջ մոլորած, իր երջանկութեան օրերը կը յիշէր, երբ ամուսինը ողջ էր տակաւին: Խեղճ կին, իր սիրելիին մահուան վրայ ապատրէն լալու տխուր սիտփանքն ալ չէր ունեցած: Պզտիկ սուգ մը կրցած էր պահել, աղքատի սուգ մը:

Անոր հիւանդութիւնը առեր-տարեր էր իր խնայողութիւնները. եօթը տարեկան զաւակին հետ միս-մինակ մնալով աշխարհի վրայ, ստիպուած էր մէկ կողմէ ժպտիլ անոր երեսին, միւս կողմէ պատուաւոր կերպով պահել իր տունը եւ հարկ եղած դատարարակութիւնը տալ զաւակին: Մէկուն չդիմեց, իր սիրտը մէկուն չբացաւ, բոլոր ուժերը հաւաքեց ու կար կարող եղաւ. կար կը կարէր առտուրնէ մինչեւ իրիկուն, գիշերներն ալ աշխատելով, եւ հազիւ կրնար չոր ասպրուտ մը ճարել:

Օրթագիւղ, խեղճուկ թաղի մը մէջ կը բնակէին: Տղան Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանը ընդունուած էր ձրի. միայն շոգեհաւի եւ ցերեկուան ուտելիքի ծախք կը վճարէր անոր:

Իր չքաւորութեան եւ տառապանքներուն դադանիքը մէկը չէր դիտեր սակայն. դպրոցին մէջ կովիկ հաղուած մաքուր տղայ մըն էր Վահրամ, միշտ փայլուն կօշիկներով, նոր դուլպաներով: Աղքատ տղոց յատուկ վաղահաս արթնութեամբ կը զգար, թէ ի՛նչ կ'արժէին անոնք իր մօրը, եւ հոգ կը սանէր, որ մեղանի կաթիլ մը կամ ցելի փոսը մը չցատկէ վրան:

Հէզ կնոջ մտասեւեռումն էր աւելի դրամ շահիլ: Ի՛նչ փափաքներ ունէր Վահրամին համար. բայց որքան ալ աշխատէր, բան մը չէր կրնար աւելցնել. ի՞նչ ընէր, ի՞նչ ընէր...

— Եթէ մեքենայ մը ունենայի՛ր... — զոչեց յանկարծ բարձրաձայն, ինքն իր հարցման պատասխանելով:

Վահրամ աչքերը վեր առաւ, մօրը նայեցաւ, յետոյ նորէն գլուխը կախեց անխօսուկ: Եթէ մեքենայ մը ունենար, անուշտ այդքան չէր յոգնէր մայրը, աչքերը այդքան չէին տկարանար եւ մատները չէին ծակծրկեր: Ի՞նչ ընէր մօրը մեքենայ մը ճարելու համար...

Երկար ատենէ ի վեր բոլորովին փոխուած էր Վահրամ՝ ալ առջի մտքրասէր, խնամոտ տղան չէր: Ատուները լուսցածին պէս փողոց կ'իյնար եւ իրիկունները մութը կոխելէն առաջ տունէն ներս չէր մտներ: Ամառը՝ փոշիներու մէջ կորսուած, յոյնած, քրանած, ձմեռը՝ միւշուէ կէս մէջքը ցեխերու մէջ թաթխուած, ձեռքերն ու ստքերը ցուրտէն սառած, կոշիկները ջուրերու մէջ տուն կու գար: Ալ դիշերները կանաչ սեղանին առջեւ չէր նստեր մօրը հետ, ու ճաշի ատեն քունը աչքէն կը վաղէր: Շատ անգամ, տուն եկածին պէս, անկողնին վրայ կ'իյնար առանց բերանը պատառ մը բան դնելու: Անդձ մօրը սիրտը կը հատնէր. ո՞ւր կ'երթար այսչափ կանուխ եւ ինչո՞ւ ուշ կը վերադառնար: Ի դուր կը ջանար տղան հարցուփորձ ընել. միշտ անորոշ պատասխաններ կը ստանար:

Տիկին Աննիկ կը զգար, որ ախար բան մը մտած էր իր տղուն կեանքին մէջ: Նախ կարծեց, թէ մանկական քմահաճոյք մըն էր, բայց վեց ամիսէ ի վեր կը շարունակէր կեանքի այս անկանոն ընթացքը: Իր տղուն զգալապէս տկարանալը նշմարելով, սրտին կրակիծէն յանդիմանութիւններ կ'ուղղէր անոր: Յետոյ կը զղջար սակայն, որովհետեւ միշտ առջի խանդակաթ դաւաղն էր Վահրամ, միեւնոյն հողածութիւնը, միեւնոյն գորովոտ վերաբերումը ունէր իրեն հանդէպ: Զայն վերադարձը չէր ուղեր բնաւ, բայց կրնա՞ր անտարբեր մնալ անոր ապրելու կերպին:

Անդամ մը, երբ խտրու կը հարցաքննէր զայն նորէն, տղան սկսաւ լալ: Ուրիշ անգամ մը վերջապէս բերնէն փախցուց, թէ Կաղանդին ամէն բան պիտի իմանար:

Այն ատեն որոշեց սպասել: Կը ճանչնար իր տղուն հաստատամիտ բնաւորութիւնը. ճիշդ հայրն էր: Տարեդլիտուն քանի մը օր միայն մնացեր էր, եւ այդ օրերուն ամենէն աւելի մտատանջութիւն կրեց. իրա՞ւ, բա՞ն մը կար արդեօք:

Սակայն եթէ օր մը անոր ետեւէն երթար աիկին Աննիկ, պիտի տեսնէր, որ փոխանակ Օրթադիւղի շոգեմաւր մտնելու, յամաքի ճամբան կը բռնէր Վահրամ եւ սաքով կ'երթար վարժարան, ճամբու ծախքը խնայելու համար: Զիւնին-բուքին կը քալէր ու կը քալէր, ձեռքերը վերարկուին գրպաններուն մէջ, դէմքը կիսովին թաղած օձիքին մէջ, մերթ կանգ առնելով, ապա նորէն շարունակելով իր տաժանելի ուղեւորութիւնը, շատ անգամ սահելով սառոյցին վրայ:

Երբեմն բուքը այնքան սաստիկ կ'ըլլար, որ կոխած տեղը չէր տեսներ. այն ատեն կը փորձուէր հոնկէ անցնող հանրակառքին մէջ նետուել, բայց յանկարծ կանգ կ'առնէր, դադարնի մտածում մը կը կեցնէր զինք: Ի՞նչ էր այդ դադարիքը. մարդ չէր գիտեր:

Յերեկուան ճաշի ատեն ո՛չ մը դաւաճառին, ո՛չ նարարավաճառին խանութը կը մտնէր հացին հետ քիչ մը ընկոյզ կամ պանիր գնելու համար: Կը նայէր կարմրուկ խնձորներուն, խոշոր նարինջներուն, կլորիկ սերկեւիլներուն, լեցուն նուսերուն եւ թուքը կուլ տալով կը հեռանար, անկիւն մը կը քաշուէր իր ցամաք հացը կրծելու:

Կաղանդին, առտուն կանուխ, երբ աիկին Աննիկ անկողնիէն ելաւ, Վահրամ կը ջնանար տակաւին (սուտ քուն եղած էր ապահովարար): Գորովալից մայրը, ոտքին մատներուն վրայ կոխելով, քովի սենեակը ան-

ցաւ իր սովորական ժողովրդուքը ընելու: Յանկարծ
բան մը զարկաւ աչքին, սեղանին մէջտեղը կարի նոր
մեքենայ մը կար, փայլուն ընկուզենիէ կափարիչով.
վրան ալ թուղթ մը փակցուած էր: Մօտէն նայեցաւ.
իր ազուն գիրն էր. ու կարդաց. «Կաղանդի նուէր՝
մամայիս համար»:

Նոյն պահուն կամայրուկ մը սենեակին դուռը բաց-
ուեցաւ, եւ վահրամ մօրը թեւերուն մէջ ինկաւ:

— Մի՛ սրզողիր, մամա՛ս, — կ'ըսէր, — չողենա-
ւի համար տուած դրամովդ առի. անոր համար իրի-
կունները ուչ կը մնայի...

Ու համայրներով կը ծածկէր իր մայրը, սրբելով
անոր արցունքները, որոնք տաք-տաք այտերն ի վար
կը վազէին:

ՉԱՊԷԼ ԱՍՍՏՈՒՐ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Սփոփամբ. — Միտթարութիւն, միտթարանք:
- Վաղահաս. — Կանուխ հասնող, արթնցող, կանխահաս:
- Մտասեւեռում. — Միշտ բանի մը վրայ մտածել:
- Բուբ. — Ձիւնամբրիկ, սաստիկ հով:
- Սրդողիլ. — Բարկանալ, նեղանալ, վշտանալ:

ԹԵԼԱՊՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Պատմել նիւթը ամփոփ
ձեւով, ծանրանալ մօրը եւ գաւկիմ իրարու հանդէպ
տածած զգացումներուն վրայ: Ո՞վ աւելի կը սիրէր
միւսը. ինչո՞ւ: Մայրական սիրոյ եւ գուրգուրանքի օ-
րինակներ կրնա՞ք տալ ձեր կեանքէն կամ կարգացած
գիրքերէն: — Ի՞նչն էր, որ կը մղէր Վահրամը գոհո-
ղութիւնները յանձն առնելու մօրը համար: Իր տառա-
պա՞նքը աւելի մեծ էր թէ ուրախութիւնը, երբ վեր-
ջապէս կրցաւ կարի մեքենայ մը գնել:

24. Ա Գ Ա Հ Ը

Հին ժամանակ մի հարուստ, շատ հարուստ մարդ
է լինում: Ունենում է ընդարձակ հողեր, մեծ անտառ-
ներ, պալատի նման գեղեցիկ տներ, ոչխարի բազմա-
թիւ հօտեր եւ ուղտերի կարաւաններ: Ունենում է ան-
թիւ — անհամար ծառաներ
ու սպասաւորներ, որոնք
օրն ի բուն աշխատում են
նրա համար եւ նրա տնե-
րը լցնում ամէն բարիքով:



Բայց հարուստը դար-
ձեալ դո՛հ չի լինում. ցան-
կանում է աւելի հարստա-
նալ, ունեցածը կրկնա-
պատկել, տասնապատկել:
Մանաւանդ սիրում է ոս-
կի, գեղին ոսկի հաւաքել,
լցնել իր սնտուկները եւ
զմայլել նրանց փայլով:
Շարունակ մտածում է ու մտածում, թէ ի՞նչպէս ա-
նի, որ հասնի իր նպատակին:

Մի օր լսում է, թէ տարուայ մէջ կայ մի գիշեր,
երբ Լէյլի եւ Մէջնուն բարեկամների աստղերը արեւել-
քից եւ արեւմուտքից գալիս հանդիպում են մի ակըն-
թարթ, ողջագուրում եւ նորից բաժանում: Ու եթէ,
ասում են, այդ գիշեր, այդ պահին, մարդ սրտի ցան-
կութիւնը յայտնի երկնքին, կը ստանայ ինչ ուղում է:

Նրան ասում են, որ այդ գիշերը կոչւում է Համ-
բարձման գիշեր:

Եւ ահա այն օրը, որին պիտի հետեւէր Համբարձման զիշերը, հարուստը ստատրաստում է աղբւրի ջրով լիքը մի թաս ու մի հայելի եւ սպասում զիշերուան:

Երբ օրը մթնում է եւ ժողովուրդը, օրուայ աշխատանքից յողնած, քուն է մտնում. երբ լուսինը բարձրանում է բոլորակ ու պայծառ եւ ամէն կողմ լուսթիւն է տիրում, հարուստը դուրս է գալիս իր տնից եւ մեն-մենակ դնում գաշտ: Ջրով լի թասը եւ հայելին ձեռքին բարձրանում է մօտիկ բլուրի գագաթը, սրտեղից երեւում է ամբողջ երկնակամարը, հորիզոնից հորիզոն աստղերով զարդարուած:

Նայում է հարուստն այդ պատկերին ու զմայլում:

— Բոլոր այդ աստղերը ոսկի դառնային ու իմը լինէին, — մտածում է նա:

Ապա բնորում է յարմար մի տեղ եւ ջրով լի թասը դնում այնպէս, որ լուսինը երեւայ մէջը, իսկ հայելին էլ աջ ձեռքով բռնում է այնպէս, որ լուսնի արտացոլացումը թասից երեւայ հայելում, որպէս զի տեսնէ ամէնը, ինչ կատարուելու է երկնքում այդ խորհրդաւոր զիշերը:

Ու այս բոլորն անելուց յետոյ նա անթարթ աչքերով նայում է հայելուն եւ հետեւում լուսնի ընթացքին: Նրան տեսի էին, որ եթէ այս բաները ճշգրտեթեամբ չկատարի, իր սրտի խնդրանքը չի յաջողուի:

Նայում է այդպէս մինչեւ խոր զիշեր, երբ ամէն ձայն ու շշուէ լուսն է աշխարհում: Նրան թւում է, որ դեպքն անգամ կանց են տեսի ու չեն հստում:

2

Յանկարծ, այդ լուսթեան մէջ, երկնակամարը լուսաւորում է մի պայծառ լոյսով, աւելի պայծառ, քան լուսինն ու աստղերը: Ինուսթիւնը զարթնում է.

լեռներ, բլուրներ, անառներ ու ծառեր, կարծես լեզու առած, ողջունում են միմեանց ու ժպտում այդ պայծառ լոյսի տակ:

Մէկ էլ, երկնքի հակառակ ծայրերից, երկու աստղերը — Լէյլու եւ Մեջնունի աստղերը — կայծակի արագութեամբ գալիս են իրարու դէմ եւ ողջագուրում կարօտով:

Հարուստը, վախենալով որ կարող է յանկարծ կորցնել սրտի ցանկութիւնը յայտնելու վայրկեանը, հայելին պցում է ձեռքից եւ բացագանչում.

— Աստուած, ինչի որ ձեռք տամ, թող ոսկի դառնայ, ոսկի'...

Աստուած, ի հարկէ, կատարում է նրա խնդիրքը, որովհետեւ ճիշդ ժամանակին է ասում:

— Թող այնպէս լինի, — լուսն է մի ձայն:

Եւ հարուստը ուրախ-ուրախ շտապում է տուն, որպէս զի կնոջը յայտնի իր բախտաւորութիւնը:

Բայց նրա ուրախութիւնն այնքան մեծ է լինում, որ, նախ քան մի բան տեսլը, դրկում է իր կնոջն ու համբուրում: Համբուրում է եւ յանկարծ վախեցած եւ ցատկում, ինչպէս օձից խայթուած. կնոջ փոխարէն առջեւը կանգնում է մի ոսկէ արձան: Կինը ոսկէ արձան էր կտրել:

Հարուստը վշտից ուզում է մտղերը պոկել, բայց մտղերը ոսկու են փոխուած եւ խաղի մտղերի պէս ցրցում գլխին:

Այդ տեսնելով՝ հարուստը տիրում, դարտ է անում մի քանի օր, մինչեւ անգամ հրաժարում է ուտելիքից, կերակրից: Բայց, ի հարկէ, երկար չէր կարող սոված մնալ: Մի օր էլ ցանկութիւն է յայտնում, որ մի բան տան ուտելու:

Ծառաները անմիջապէս տեսակ-տեսակ ուտելիք եւ լամիչք են բերում, դնում առաջին:

Նա աղահուլթեամբ վրայ է պրծնում նախ հացին, բայց հացը ձեռք է առնում թէ չէ, տեսնում է՝ հացն էլ դարձաւ ոսկի:

Ձեռ է տալիս միւս ուտելիքներին, նոյնն է կատարում: Թէ՛ ամանները, թէ՛ նրանց մէջի ուտելիքը դառնում են ոսկի: Ինչի որ ձեռը վազնում է, բոլորը ոսկու են փոխում:

Եւ ոչինչ չի կարողանում ուտել:

Ու այդպէս էլ, ամէն կողմից ոսկով շրջապատուած, մեռնում է քաղցից:

ՍՏՁՐԵԱՆ

ԲԱՐԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտացոյում.— Գուրս ցորացնել, լոյսը՝ առարկայի մը պատկերը անդրադարձնել:

Վրայ պրծնել.— Յարձակել, բանի մը վրայ նետուել:

ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ.— Ծնած է Ղարափիլիսէ (Հայաստան), 1890ին: Ուսումը ստացած է ծանդավայրին, այս ատեւ ուսակամ վարժարանի մէջ: Մեռաւ 14 Հոկտեմբեր 1967ին, Երեւան: Իր գրչաւոր երկերն են «Տխուր մարդիկ», «Ցանկապատ», «Առաջին օրեր», «Գրագրարանի աղջիկը», «Ձմրան գիշեր», «Մի կեանքի պատմութիւն», «Պայ քաղաք» եւ «Հայոց բերդը» (պատմական վէպ) եւն.: Առաւելաբար մշակած է վիպական սեռը:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ ծանրանալ հարուստ մարդուն ազատութեան վրայ: Կրքնա՞ք պատմել Լէյլի - Մէջնունի հեփիաթը: — Ի՞նչ խնդրեց հարուստը Աստուծմէ: Բացատրել «դրամը միշոց է եւ ոչ նպատակ» ասացումը: — Հարուստ մարդուն ազատութիւնը պատժուեցա՞ւ. ի՞նչպէս: Գու՞ր ի՞նչ պիտի խնդրէիք Աստուծմէ:



25. ՀԻՆ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Մէկից մի սոյս, մէկից մի հաց գողանում, Գրնում էինք Արփաչայը լողանում:

Սոված, ծարաւ, բոկոսն ընկնում սար ու ձոր, Շրջում էինք անգիտութեամբ քախտաւոր:

Աշխարհն ասես սարի ետեւ վերջանում՝ Իջնող արեւն իրեն հետ էր մեզ տանում...

Չըգիտէինք ո՞վ էր ժըպտում, ո՞վ լալիս, Ո՞վ էր մեզ հաց, ո՞վ մեր աչքին լաց տալիս...

Չըգիտէինք, թէ ո՞ւմ կուրծքն էր զարդարում Չընծաղիկը, որ մենք էինք միշտ բերում...

Չըզիտէինք աշխարհն ի՛նչ էր, մարդն ի՛նչ էր,
Մենք դարտի մէջ՝ չըզիտէինք դարտն ի՛նչ էր...

Ա՛յս, դեռ մանուկ՝ մենք ծերացած գլխիկար
Շրջում էինք անգիտութեամբ բախտաւոր...

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արքաշայ.— Հայաստանի մէջ զեռի մը սնունն է. կ'ըսուի
նաև Ախուրեան:

Սոված.— Քողցած, անօթի:

Ձնծաղիկ.— Ճերմակ ծաղիկով բոյս մը, որ ձիւնը հալելուն
պէս երեւան կ'ելլէ եւ դարձան աւետարեք կը համարուի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ.— Բուն անունն է Յովհաննէս կարա-

պետեան: Ծնած է 1915ին, Ալեքսանդրապոլ (Լեհիմական): Նախ-
նական կրթութիւնը ստանալէ ետք յաճախած է Երեւանի համալը-
սարանը եւ աւարտած անոր պատմագիտական բաժինը: Գլխաւոր
երկերն են «Գարնանամուտ», «Երգերի գիրք», «Հատընտիր»,
«Հայոց տանգէականք», «Անի» եւ այլն: Զգայուն բանաստեղծ մըն
է, աւտելարար երգած է հայրենիքը եւ անձնական ապրումները:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ի՞նչ սեռակ մանկութիւն
ունեցած էր հեղինակը. ինչո՞ւ «առգիտութեամբ
բախտաւոր» կը համարէր ինքզինք: Ի՞նչպէս կ'երեւա-
կայէր աշխարհը: Ի՞նչ կը նշանակէ սա տալը. «Մենք
դարտի մէջ՝ չըզիտէինք դարտն ի՛նչ էր»: Ի՞նչ սգա-
նառներ կը մղեն հեղինակը ըսելու, քէ «ծերացած» էր
դեռ մանուկ վիճակի մէջ: — Բացասելի այս փոքրու-
ածին մէջ սիրող գլխաւոր գգացումը: Մանկութեան
մասին ուրիշ փոքրուածներ կարդացա՞ծ էք. անոնցմէ
ո՞րք աւելի խոր տպաւորութիւն ձգած է ձեր վրայ:

26. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՇԱՏԱԿՆԵՐ

1

Ամբողջ դպրոցական կեանքիս մէջ դժբախտարար
եղած եմ եթէ ոչ ծոյլ, գոնէ բարձրովին թոյլ աշա-
կերտ մը:

Մասնաւոր ատելութեանս առարկայ էր մանաւանդ
թուարանութեան դասը: Առաջին մարդիկը, որոնց հան-
դէպ թաղուն ատելութիւն
ունեցած եմ պատանի տա-
րիքէս, թուարանութեան
դասատուներս եղած են:



Ներքէսեան վարժարա-
նին մէջ օր մը յանկարծ
գնասարան մտաւ թուարա-
նութեան մեր նոր ուսու-
ցիչը՝ Յովնան Փալաղաշ-
եան, սեւ մօրուքով, խո-
ժուր գէմքով եւ ակնոցնե-
րուն ետին վառող սուր
ու սառեցնող նայուած-
քով: Թուարանական ա-
մենաչնչին խնդրի մը առ-
թիւ, յաւելում ըլլար թէ բարձուն կամ բաղձապատ-
կութիւն, սա արտառոց հարցումը կ'ուղղէր մեզի:

— Ինչո՞ւ:

Ինչո՞ւ մի. ինչո՞ւն ինչ է. չորս հինգ ալ՝ ինք,—
ինչո՞ւ: Երեք անգամ չորս՝ տասներկու,— ինչո՞ւ:

Շուտրած, չփոթած եւ կառողած, իրարու երես
սկսանք նայիլ. այս «ինչո՞ւ» որտեղէն եկաւ տնկուե-
ցաւ դիմացնիս: Եւ բոլորս ալ, ծոյլ թէ աշխատասէր,

դինուեցանք այս «ինչուճի» ուսուցիչին դէմ եւ դաս
չպատրաստեցինք:

Որո՞ւն մտքէն կ'անցնէր սակայն, թէ ինչ որ Փա-
լազաշեանի անձին վրայ աղէտ մը նկատած էի, պար-
զապէս տղայական խաղալիկ մըն է եղեր միւս իրա-
կան աղէտին քով, որուն պիտի հանդիպէի քանի մը
տարի ետք, Կեդրոնականի սեմէն հազիւ ոտքս ներս
նետած:

Ինձի համար, առաջին օրէն իսկ, անպատեհութիւ-
նը սկսաւ այդ վարժարանին մէջ: Աղէտը, որուն մա-
սին խօսեցայ, հոն ինձի կը սպասէր: Մտից քննու-
թիւն կու տայի: Ամէն ճիւղի համար մասնագէտ մը
կար, որ միեւնոյն ժամանակ ուսուցիչ էր նորաբաց
այս վարժարանին մէջ:

Ամենէն աւելի թուարանութենէն կը վախնայի:
Սրտատրոփ մտայ Կեդրոնականի ստորին յարկի սեն-
եակը: Իեղին ցից պէխերով, ողորկ ու ճերմկոտիկ
մորթով մարդ մը նստած էր: Նայուածքին չհաւնե-
ցայ: շա՛տ խիստ էր, թէեւ հանդարտ:

2

Անկէ ի վեր քսանեօթը տարի անցած ըլլալով,
չեմ յիշեր, թէ ի՞նչ հարցուց: Սա պիտեմ միայն, որ
հազիւ գրատախտակին վրայ առաջին դործողութիւն
մը ըրած էի, — սխալ կամ ուղիղ, չեմ գիտեր, — «ա-
պացո՞յց, պարոն» պոռաց ձայնով մը, որ անարկու
թուեցաւ ինձի: Եւ երբ շրջապատ իրեն կը նայէի, «ա-
պացո՞յց» պոռաց երկրորդ անգամ:

Ասիկա Փալազաշեանի «ինչու»ին պէս բան մըն
էր, բայց անհամեմատօրէն աւելի անհղ ու ջախջախիչ:
— Ապացո՞յց, — կակաղեցի, ես որ չէի գիտեր, թէ
ի՞նչ կ'ընեմ, բարձումին տեղ թերեւս յաւելում, բաղ-
մապատկութեան տեղ բաժանում:

Բայց արդէն մարդը ինձի սարսափ կ'աղղէր, ինչ
որ բոլորովին կատարեալ ըրաւ շուարումս: Եւ դուրս
ելայ մարմինս ողորուած օրհասական քրտինքով:

— Ո՞վ է ներսի քննիչը, — հարցուցի ուրիշ աշա-
կերաներու:

— Պարոն Յակոբ Պօյաճեան, — ըսին, — Կեդրո-
նականի ուսողութեան ուսուցիչը:

Բացուեցաւ վարժարանը. եւ անհա երկրորդ օրն
իսկ դասարան մտաւ Պօյաճեան: Այն երկիւղը, որով
պաշարուած էի ես, կ'արտայայտուէր ամենուն դէմ-
քին վրայ հաւասարապէս. ու ասիկա մխիթարութիւն
մը եղաւ ինձի համար:

— Ապացո՞յց, պարոն, ապացո՞յց:

Դասարանին եղեմական խաղաղութեան մէջ այս
բառը թնդաց շարունակ, այդ օրէն սկսեալ իմ մէջս
սպաննելով թուանշանի հանդէպ որեւէ համակրական
դրացում, որ դեռ կրնար դոյութիւն ունենալ: Բայց
ասիկա պատճառ մը չեղաւ, որ խորապէս շարժեմ
այդ հոյակապ ու ջերմեռանդ ուսուցիչը:

Կեդրոնականի անդրանիկ կարգին խառնաշփո-
թութեանը մէջ շուտով սկսան անջատուիլ այն դէմ-
քերը, որոնք ետքէն ցեղին փառքը պիտի ներկայացը-
նէին պիտութեան բոլոր ճիւղերուն մէջ:

ԵՐ. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Խոժոռ.— Խիստ, դաժան:
- Բարձում.— Թուարանական չորս դործողութիւններէն մէկը՝
հանում:
- Արտառոց.— Տարօրինակ, արտասովոր, այլանդակ:
- Ողորկ.— Հարթ, խորտուրորտ չունեցող:

Շլմորած.— Շուարած, շիթած, ապշած:

Օրհասական.— Օրհաս՝ մահուան օր, օրհասական՝ մահուան օրը մտեցած, մահաբեր. փոխաբերաբար՝ ճգնաժամային, տագնապալի:

Ուսողութիւն.— Թուարանութիւն:

Եղեմական.— Եղեմ՝ գրախօս, եղեմական՝ գրախօսային:

ԵՐՈՒԱՆԴ ՍՐՄԱՔԷՇԵԱՆԼԵԱՆ (1870-1915).— Ծնած է Պոլիս: Ուսումը ստացած է իր քաղի ազգային վարժարանին եւ Կեդրոնականի մէջ: Եղած է ուսուցիչ եւ խմբագիր: Իր գրական ծածկանուններն են Երուսնդ եւ Երուխան: Գլխաւոր երկերն են «Ամիրային ազիկը», «Կեանքին մէջ», «Հարագատ որդի»: Մեր լաւագոյն արձակագիրներէն է: Մասնաւորաբար ներկայացուցած է խոնարհ դասին պատկանող տիպարներ: Նահատակուած է 1915ին:

ԻՐԵԱՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Իբրեւ աշակերտ ի՞նչ տեսակ մէկն էր հեղինակը: Ո՞ր դասը չէր սիրեր մանաւանդ. ինչո՞ւ: Իսկ ո՞ր դասը կամ դասերը կը կարծէ՛ք, քէ կը սիրէր: Ի՞նչ զգացումներ ունէր իր ուսուցիչներուն հանդէպ: — Դուք ո՞ր դասերը կը սիրէ՛ք ամենէն աւելի. ինչո՞ւ: Ի՞նչ կը նշանակէ մասնագէտ, մասնագիտութիւն: Որո՞նք են ուսողական գիտութիւնները:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Նմանաձայն կը կոչուին այն բառերը, որոնք նոյն հնչումը ունին, բայց տարբեր իմաստ. օրինակ՝ քեւ—դեւ, յաջող—հաջող, դալուկ—քալուկ:

Հումանիշ կը կոչուին այն բառերը, որոնք նոյն նշանակութիւնը ունին, աննշան տարբերութեամբ. օրինակ՝ դանդաղ, յոյլ, ծոյլ, հեղգ: Խոնիմ, զգաստ, զգօն, խոռուն:

27. Տ Ղ Ո Ի Հ Ո Գ Ի Ն Ե Ր

Մայիս 6.— Կեցցէ՛ արեւը: Մեր նախահայրերը բան մը դիտէին հարկաւ, երբ վայն իրրեւ աստուած կը պաշտէին: Իմ սէրս ալ, դէպի արեւը, պաշտամունքէն ընաւ պական չէ: Շարթուան մը պաղէն ու անձրեւէն ետք, անամպ երկինքի մը կապոյտին վրայ կը շողայ արեւը:

Պարտէզիւ վարդենիներուն մթազոյն տերեւները աղօթող ձեռքերու պէս բացուած են արեւին դէմ: Ու տղաս, կիսամերկ, փողոց նետուած է: Մայրը մտահոյ է:



— Պիտի պաղի ու հլանդանայ, — դանդատեցաւ գրեթէ լալով, — հայրն էս, բան մը չընէ՞ս:

— Դուն, որ մայրն էս, ի՞նչ ըրիր դուն, որ ինձմէ բան մը ընել կը սպասես, — ըսի էս լըջութիւն կեղծելով: — Յետոյ՝ ի՞նչ կ'ըլլայ, անոնց արիւնը տաք է, արեւը՝ ջերմ, դիւրին—դիւրին պաղ չեն առներ: Բայց եթէ կ'ուզես, կ'երթամ ստուգելու, թէ ի՞նչ բանի են: Դեռ տունէն դուրս չէի ելած, տղաս ու Հանցը հեւասպառ ներս ինկան:

— Փա՛, բոսք շինենք կոր. մաման ո՞ւր է:
— Ներսն է. ի՞նչ բոսք, ի՞նչ բան. շունչ առ:
— Կէնիւն հեա բոսք շինենք կոր. խոշոր կրակ մը վառեցինք Քանըլիին բակին մէջ. ձէքին հաք—տակերը

բերելու գնաց, ես փաթաթէսները պիտի տանիմ, մոխիրին մէջ պիտի խորովենք. Ճիւնիւրը իրենց խանութէն տուի մը ապուր պիտի թոցնէ, Շորթին գնաց...

— Անգամ մը դուն հոս եկուր, — տղուս խանդավառութեան վրայ ջուր թափեց մայրը՝ ամուր ձեռքով մը անոր վիզէն բռնել ու իրեն քաշելով, — դուն կրակի հետ գործ չունիս: Եթէ հաք-տոկ կամ բոսք կ'ուզես, ես կը շինեմ քեզի համար: Վիզիդ վէրքը դեռ նոր աղէկացուցինք:

— Օ՛, մա՛, փիխ՛գ... շատ դուրս կ'ըլլամ, տղուոր մամաս, աս մէկ անգամ, փիխ՛գ...

Ես աչքով ըրի, որ տեղի տայ:

— Աչքով-ունքով մի՛ ըներ, — նեղացաւ ան, — ինչ կ'ընէք ըրէք, ես չեմ խառնուիր: Եթէ դիտուն փորձանք մը վայ, ինծի մի՛ վազէք: Ես յոգներ եմ հիւանդ ու վէրք նայելէ:

2

Վերջապէս հաշտութիւն գոյացաւ եւ մայր ու տղայ համբուրուեցան: Տիկինը իր ձեռքով փաթաթէսները թուղթէ պարկը դրաւ եւ տուաւ իր տղուն:

— Կրակին շատ մի մօտենար, միան ու փաթաթէսը լաւ եփեցէք, հում չուտէք, վերջը հիւանդ կ'ըլլաք:

— Այո՛, մամա՛ս:

Երբ տղաս ճամբայ ելաւ, Հանցը, մեր շունը, կլոր մարմինը օրօրելով, ինկաւ ետեւէն: Արեւը կը շողար անոր սեւ, ողորկ մուշտակին վրայ, որ արծաթի պէս կը փայլելէր:

— Վերջերս աս շունը շատ կը կերակրեն, չա՛տ է փրփրեր, ուտելիքին մէկ ժու՛ր կտրելու է, — խօսեցայ ես ինծի ու դանդաղ, անհոյժ քայլերով ուղղուեցայ դէպի տղոց դրօսատեղին:

Նոր ծաղկաւորուած վայրի կեռասի ծառին տակ, տղաքը ամբարեր էին իրենց պաշարը եւ կը սպասէին կրակի հասուենալուն: Երջանիկ էին ու անհանգարտ: Մինակ Հանցը տխուր էր. ականջները կախ, պոչը անշարժ, դէմքը ամպոտ, կեցեր էր ծառի շուքին տակ: Փորձեր էր հաք-տոկերը հոտուրտալ: Իր զգայուն, բարակ քիթը մօտեցուցեր էր, որ հոտուրտայ անգամ մը, մինակ մէկ անգամ, բայց տղաքը տեսեր էին, կասկածեր, յանդիմաներ ու վիզէն բռնած անդին նետեր:

— Ասոնք քուկդ չեն, Հանց, անդին գնա:

Ուշադրութենէս չվրիպեցաւ անոր այս ողբալի վիճակը: Քովը դացի, ձեռքս դրի գլխուն ու շոյեցի:

— Ինչո՞ւ այսքան տխուր ես, Հանց. յանդիմանեցի՞նք թէ ծեծեցին քեզ:

Պոչը շարժեց անգամ մը երկուք, ինծի հասկցնելու համար, թէ բան մը չունէր ինծի դէմ: Այսուհանդերձ, հուլին նեղ էր:

— Տղա՛ք, զգոյ՛ջ եղէք, ձեռքերնիդ, ոտքերնիդ չայրէք, դրացիներուն տունը կրակ չձղէք, — աղղաբարեցի ես ու երզի կտոր մը ծամելով դարձայ տուն:

Ճասը բոպէ չէր անցած, տղաս ու Հանցը խոհանոց մտան: Տղուս վրայ ակնարկ մը նետելով հասկացայ, որ շարաղէտ բան մը պատահած էր: Դէմքը մուր, հող ու քրտինք էր: Ստորին շրթունքը կը դողար եւ շապիկին մէկ թեւը չկար: Եթէ իր դիրուկ կլոր ծնօտը սեղմած չըլլար այդքան ամուր, անպայման պիտի լար:

— Հոս եկուր տեսնեմ, տղա՛ս, ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեցաւ, — ըսի ես հանդարտութիւն կեղծելով, — սա քովս եկուր տեսնեմ, ի՞նչ պատահեցաւ:

Շրթները քիչ մը եւս դողացին եւ լուռ՝ գլուխը դարձուց դէպի շունը:

— Հանցը:

— Հանցը, — կրկնեցի ես:

— Հարտակերը կերաւ :

— Չեիա՞ծ :

— Անոր համար ի՛նչ տարբերութիւն կ'ընէ : Չենք գիտեր ե՛րբ կերաւ . մենք զբաղած էինք ապուրով ու փաթաթէսներով, մէկ ալ տեսնենք՝ Հանցը կայ, հարտակերը չկան :

— Ուտելը տեսա՞ք :

— Չէ՛, բայց երբ բերանը հոտուրտացինք, բերնէն հարտակի հոտ կու գար : Յետոյ՝ ուրիշ մէկը չկար հոն իրմէ գաս . . .

— Ուէ՛լ, — ըսի ես ժպտելով, — ուրիշ անգամ մը նորէն կը շինէք : Բայց ա՛լ Հանցը հետդ չես տանիր : Իրր պատիժ՝ հոս կը կապենք զինք :

Յուսահատութեամբ գլուխը շարժեց ժխտական ձեւով :

— Ինչո՞ւ, ի՞նչ եղար որ :

— Երբ տեսանք, որ հարտակերը չկան, վէճ ունեցանք : Ինչո՞ւ կը պահէք զայն, վերջապէս զերմանացի շուն մըն է, — ըսին ընկերներս, — ո՛չ միայն Ամբրիկայի մէջ կ'ապրի ու զոգութիւն կ'ընէ, այլև անունն իսկ զերմանական է դեռ . . . : Պիտի ծեծէին : Կռուցանք : Փաթաթէսի բաժինս առած՝ եկայ տուն :

Հանգստացուցի զինք ու զրկեցի, որ լուացուի, մաքրուի :

Երբ վերադարձաւ, քովը երթալով ձեռքս զրի ուսին .

— Հանցը պիտի պատժենք իր որկրամոլութեան համար, — ըսի, — այս իրիկուն ու վաղը, ամբողջ օրը, ուտելիք պիտի չունենայ : Արդէն շատ է գիրցած . թող հասկնայ, թէ ի՛նչպէս կ'ըլլայ եղեր զոգութիւն ընելը :

Այդպէս ալ ըրինք : Օրը շուտ անցաւ : Հիւրեր չունեցանք : Քիչ մը նստելէ ետք պառկեցանք :

— Արա՛մ, ե՛լ, տունը գող կայ, — փախուքով կէս գիշերին արթնցուց զիս կինս :

— Ի՞նչ, — վեր ինկայ ես, — տունը գո՞ղ կայ : Հապա շունը չհաջե՛ց . . .

— Անօթի ճղեղնու համար քէն ըրած է անպատճառ . լսէ՛, խոհանոցը մէկը կայ :

Սիրտս արագ-արագ կը բարախէր եւ ծունկերս քիչ մը կը կթոտէին :

— «Գողերը կիները չեն սպաններ, դո՛ւն գնա նայելու», պիտի ըսէի, բայց ամչցայ : Անգամ մը երկուք բարձրաձայն հազացի ազդարարելու համար գողին, որ «արթնցած եմ եւ կու գամ, փախի՛ր» : Յետոյ, երկար ժամանակ մուճակներս փնտռեցի : Նրբանցքին լոյսի կոճակը դարձուցի եւ «Հայր մեր, որ յերկինս ես»ը ըսելով յառաջացայ գէպի խոհանոց :

— Յիսուս-Քրիստոս, դուն եղիր օղնական, — աղօթեցի ես ու ասիս սրտիս վրայ դրած՝ աչքս մօտեցուցի դրան բացուածքին :

Սառնարանին առջեւ, կաթին շիշը քովն առած, գիշերանոցով պետինը նստած էր տղաս . իր քովիկը՝ Հանցը, քիթը կոխած մինչեւ բերանը կաթով լեցուն կապոյտ պնակին մէջ, մեծադուկ կը լսէի : Տղաս իր զիրուկ սպիտակ ձեռքը թուրքէն դրած էր անոր մէջքին ու վրան հակած՝ զորովայլի խօսքեր կը փրփրասար ականջին :

— Շա՛տ անօթի էիր, հա՞. վա՛խ եմ ըսեր : Փափան քեզ պատժեց, չար փափան, բայց դուն ալ զոգութիւն ընելու չէիր . . . Կերա՞ր, ուրիշ կ'ուզե՞ս . սպասէ՛, անդին գնա, մի՛ լքեր քիթս-բերանս : Տեսա՞ր, թափեցիր կաթը . սո՛ւս, ձայն մի՛ հաներ, հիմա կ'արթըննայ փափաս . . .

Ուսիս վրայէն մէկը կը շնչէր. գլուխս ետիս դարձրնելով տեսայ, որ «մամա»ն էր, ուշանալուս՝ եկեր էր զիս փնտռելու:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Բոսք.— Անգլերէն բառ. կը նշանակէ խորոված:
- Կէնկ.— Անգլերէն բառ՝ խուճբ, խմբակ՝ նշանակութեամբ:
- Հաք.— տոկ:— Անգլերէն բառ. բառական իմաստով՝ տաք շուն. ամերիկեան երչեկ:
- Փլիք.— Անգլերէն բառ. կը նշանակէ խնդրեմ, եթէ կը հաճիս:
- Ուէլ.— Անգլերէն բառ. կը նշանակէ լաւ, աղէկ:
- Մուռակ.— Տան մէջ հազնեկու սանաման, հողաթափ:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ.— Ծնած է Շապին Գարահիսար, 1900ին: Ուսումը ստացած է ծննդավայրին ազգային վարժարանը, աւելի ուշ յամալսած է Պոլսոյ Կեդրոնականը, բայց առանց աւարտելու մեկնած է Ամերիկա, ուր կ'ապրի ներկայիս: Գլխաւոր երկերն են «Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը», «Յեղին ճայնը» եւ «Պանդոկ»: Ընդհանրապէս գրած է պատմութիւններ: Ունի պատմելու արագ ու հանելի ձեւ եւ երգիծամբի զգայութիւն:

ԹԵԼԱՂԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ ներկայացնել գործող անձերը՝ հայրը, մայրը եւ փոքրիկ տղան, կանգ առնելով իւրաքանչիւրին քնաւորութեան յատկանշական կողմերուն վրայ: — Ինչո՞ւ անգլերէն բառեր գործածուած են այս պատմութիւն մէջ:



28. Ա Ր Ա Ր Ա Տ

Աչք ենք բացել, ու դու մեր դէմ եղել ես, կաս, Արարատ, Բայց ամէն օր մեզնից հեռու ու մեզ անհաս, Արարատ: Ասես մի օր կերտել ենք քեզ, որ մարմարէ քո տեսնով Անհաս տեղի, անյազ սիրոյ արձան դառնաս, Արարատ:

Աշխարհի մէջ ամէն հայի ամէն ծայրից երեւում, Բայց մընում ես հեռո՞ւ, հեռո՞ւ, մընում երազ, Արարատ:

Աշխարհների անապատում ժողովուրդս՝ մի բեղունի, Իմ քափառքի եղբայրների կապոյտ միրած, Արարատ:

Ա՛խ, մեր կարօտն ելե՛լ, դիզուե՛լ, դէմ է առել փէշերիդ, Ու խըռոված՝ դարձել է գետ, դարձել Արագ, Արարատ: Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարօտով ծերացել, Մի՞թէ պիտի մեռնեմք մի օր, քեզնից անմահս, Արարատ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անհաս.— Բան մը, որուն կարելի չէ հասնիլ, անհասանելի:

Բեդուիմ.— Արարերէն՝ պետեւի, անապատի բնակիչ:

Թափառանք.— Թափառում, Թափառիլը. Թափառել եղբայրներ՝ փոխարեքարար կը նշանակէ հայրենիքէն հեռու, տարապիւր ու Թափառական հայեր:

Միրած.— Տրանսերէն բառ. կը նշանակէ օգերեւոյթ, կըրկներեւոյթ, որ տեղի կ'ունենայ մանաւանդ անապատներու մէջ եւ որ հարիզոնէն դուրս գտնուող աւարկաները կը ներկայացնէ օգին մէջ, չըջուած ձեւով: Փոխարեքարար կը նշանակէ խարուսիկ, ցնորական յոյս, անհասանելի երազ:

ՄԻԼՎԱ ԿՍՊՈՒՏԻԿԵԱՆ.— Ծնած է Երեւան, 1919ին, վանեցի ծնողէ: Ուսումը ստացած է Երեւանի կրօնական դպրոցը. աւարտած է նաեւ պետական համալսարանը: Գրած է միայն բանաստեղծութիւններ: Գլխաւոր երկերն են «Օրերի հետ», «Զանգուի ափին», «Այս իմ երկիրն է», «Իմ հարազատները», «Մրտաբաց գրոյց»: Իր ֆերբուսները մասամբ քարգմանուած են ռուսերէնի եւ վրացերէնի:

ԹԵԼԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Խօսիլ Արարատի, Արագ կամ Երասխ գետի մասին: Ուրիշ ի՞նչ լեռներ եւ գետեր կան ներկայ Հայաստանի մէջ: Արարատը այժմ մաս կը կազմէ Հայաստանի: Հեղինակը ինչո՞ւ «հեռու» եւ «անհաս» կը նկատէ մեր սրբազան լեռը: Եւ ինչո՞ւ մանաւանդ «միրած» կ'անուանէ գայն: — Ի՞նչ է այս ֆերբուսածին մէջ տիրող գագառուր:

29. Ա Ր Ե Ք Ն Ա Ջ Ա Ն

(Ա. ՄԱՍ)

1

Շատ հին ժամանակ, երբ աշխարհ լիքն էր հրաշքներով եւ երբ չար ու բարի ուղիները անընդհատ պատերազմ էին մղում իրարու դէմ, ահա այդ ժամանակ Մասիսի ստորոտում ապրում էր մի ծերունի իշխան՝ Արման անունով:

Արմանը ունէր երեք զուակ, մօրից որը մնացած: Նրանցից երկուան աղջիկ էին, մինը միւսից դեղեցիկ: Երրորդը աւելի էւ չքնաղ էր ու չնաշխարհիկ. բարի ուղիները նրա ինչ լինելը թաղցրել էին հողեղէններից: Այսպէն էին կամեցել բարի ուղիները մի որոշ ժամանակով. երբ որ ժամանակը լրանար, նա կա՛մ աղջիկ եւ կա՛մ տղայ պիտի դառնար:



Բայց Արմանը նրան չէր տարբերում աղջիկներից եւ երեքին էլ աղջկայ հաղուստով էր պահում:

— Թող սա էլ աղջիկ համարուի, — ասաց նա, — մինչեւ բարի ուղիների կամքը կատարուի եւ անունն էլ դրաւ Արեգնազան՝ միատեսակութեան համար, որովհետեւ մեծի անունը դրել էր Զանազան, իսկ երկրորդինը՝ Զարմանազան:

Այսպէս անցաւ մի ժամանակ. մէկ օր Արմանը կանչեց իր զուակներին եւ ասաց.

— Ես ծառայում էի մեր բարի թաղաւորին եւ նա շատ էր սիրում ինձ: Ահա այս դաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռին են, բոլորը թաղաւորն է ընծայել ինձ իմ հաւատարիմ ծառայութեան համար: Երբ որ ձեր մայրը վախճանուեց, սաստիկ տխրութիւն եկաւ վրաս: Վեր առայ ձեզ, քաշուեցի այս խաղաղ վայրերը եւ, տխրութիւնս փարատելու համար, գլուխս որսորդութեան տուի: Դուք հիմա մեծացել էք, իսկ ես ծերացել եմ: Դուք այստեղ մեծացել էք, ինչպէս վայրի եղջերուները: Ի՞նչ կը լինի ձեր վերջը, եթէ այստեղ մնաք. ի հարկէ, շատ վատ: Ապագայ թշուառութիւնից ձեզ աղատելու համար ես մտածել եմ, որ ձեզանից մէկին տղայի հագուստով ուղարկեմ թաղաւորի մօտ ծառայելու: Թագաւորը սիրով կ'ընդունի եւ իմ տեղը նրան կը տայ: Ձեզանից մէկը կարող է միւսներին էլ տանել իր մօտ: Հիմա ո՞ր մէկը կ'ուզենաք գնալ:

— Ես կ'երթամ, հայրիկ, — ասաց մեծ աղջիկը:

— Ե՛ս էլ, հայրիկ, ե՛ս էլ, — մէջ ընկաւ միջնակը:

Արեգնազանը լուռ էր:

— Իսկ դու, Նադա՛նիկ, դու չե՞ս կամենալ, — հարցրեց հայրը Արեգնազանին: Կարծես ուղում էր, որ զնացողը նա լինի անպատճառ:

— Ինչո՞ւ չէ, հայրիկ. բայց երբ որ իմ մեծ քոյրն ուղում է, ես ինչո՞ւ արգելք լինեմ նրան:

— Այստեղ արգելքի բան չկայ, հոգի՛ս. ինձ համար երեքը էլ մէկ էք: Միայն չգիտեմ, թէ ձեզանից ո՞րն աւելի յարմար կը լինի:

— Ես ամենից յարմարն եմ, հայրիկ, — ասաց մեծը, — որովհետեւ ես ամենից մեծն եմ:

— Շատ լաւ. ես առանց պայմանի ոչ մէկիդ չեմ ուղարկելու: Եթէ դու կամենում ես գնալ, կը փոխես հագուստդ, կ'ընտրես զէնք ու զրահ եւ առաւօտ շատ վաղ կը հեծնես քո ձին, կը գնաս որսորդութեան: Եթէ դատարկ չվերադառնաս, քեզ կ'ուղարկեմ թաղաւորի մօտ:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չնաշխարհիկ.— Աշխարհի մէջ չտեսնուած, անմահ: Վազ.— Կանուխ:

ՂԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ (1840-1911).— Ծնած է հալէն գիւղին մէջ, Թիֆլիսի մօտ: Ուսումը ստացած է ծննդավայրին եւ Թիֆլիսի Ներսիսեան վարժարանին մէջ: Նախ գրադեցաւ գրաշարութեամբ, ապա մտաւ ուսուցչական ասպարէզը, ուսուցիչ եւ տնօրէնի պաշտօններ վարելով Կովկասի մէջ: Գլխաւոր երկերն են «Արութիւն եւ Մանուէլ», «Անահիտ», «Արեգնագան», «Հեֆիաթներ», «Տոբ Անգեղ» եւն.: Առաւելաբար մշակած է մանկական գրականութիւն, հաճոյքով կը կարդացուին իր հեֆիաթները: Մեռած է Թիֆլիս, 1911ին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ ներկայացնել երեք քոյրերուն եւ իրենց հօր բնաւորութեան ընդհանուր գիծերը: Կրնա՞ք շարունակել այս հեֆիաթը եւ ըսել, թէ ի՞նչ վախճան ունեցաւ ան: Կարդացա՞ծ էք «Արեգնագան»ը ամբողջութեամբ: Ի՞նչ է ձեր կարծիքը հեղինակի լեզուին եւ պատմելու ձևին մասին: — Ի՞նչ եզրակացութիւն կրնաք հանել այս հեֆիաթէն:

30. Ա Ր Ե Գ Ն Ա Ջ Ա Ն

(Բ. ՄԱՍ)

1

Միւս առաւօտ, մեծ աղջիկը, ինչպէս պատուիրել էր հայրը, ճանապարհ ընկաւ դէպի դաշտ՝ մի բան որ- սալու համար: Երբ որ մտաւ մի խոր ձորի մէջ եւ ու- գում էր անցնել միւս կողմը, նրա առաջը կտրեց մի դի- մակաւորուած ձիաւոր, ոտից մինչեւ վրակը զինուած: Աղջիկը, նրան որ տեսաւ, աշնպէս վախեցաւ, որ զիչ մնաց լեղուն կապուէր: Սաստիկ երկիւղից՝ փախչել անդամ չկարողացաւ: Զիաւորը նրան մօտեցաւ ու ա- սաց:

— Ա՛յ տղայ, սիրո՛ւն տղայ,
Ո՞ւր ես գնում այդպէս մեկակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ:

Աղջիկը պատասխանեց կմկմալով.

— Ես... ես... գնում եմ...
Ո՛չ... ո՛չ... չեմ գնում.
Հա՛, հա՛... պիտի գնամ,
Ի՞նչ երեսով յետ դառնամ...

Զիաւորն ասաց սպանալով.

— Դու գնում ես, ո՞ւր ես գնում,
Ո՞ւր ես փախչում դու ձեր գեղից.
Յե՛տ դառ իսկոյն, քէ չես ուզում,
Որ գլուխը քոչի տեղից...

Այս տակալ՝ ձիաւորը հանեց թուրը եւ բարձրա- ցրեց, որ զարկէ աղջկանը, բայց նա բզակեց. «Վա՛յ, վա՛յ, մի զարկիր, մի՛ զարկիր, ես աղջիկ եմ... Ահա՛, պահ՛, յետ եմ դառնում»:

— Որ աղջիկ ես, ուրեմն դնա ձեր տուն, ձեր հա- ւերին կուտ տուր: Տղամարդի հաղուստ ունենալը բա- ւական չէ, պէտք է տղամարդի սիրտ ունենալ: Ելի լաւ էր, որ ինձ պատահեցիր եւ ո՛չ մի ուրիշին... — ասաց ձիաւորը եւ անյայտացաւ:

Աղջիկը դողդողալով վերադարձաւ տուն:

— Է՛, ս՞ւր է բերած որսդ, — հարցրեց հայրը, — ինչո՞ւ այդպէս շուտ վերադարձար:

— Ծանապարհին ջերմո՞ւ բռնեց, հա՛յրիկ. վրակս ցաւում է, — պատասխանեց աղջիկը:

Միւս օրը միջնեկին ուղարկեց: Նա էլ մեծին պա- տահած փորձանքին հանդիպեց. նրա պէս վախեցած վերադարձաւ տուն:

3

Երրորդ օրը Արեղնադանին ուղարկեց: Նրան եւս հանդիպեց միեւնոյն ձիաւորը եւ ասաց.

— Ա՛յ տղայ, սիրո՛ւն տղայ,
Ո՞ւր ես գնում այդպէս մեկակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ:

Արեղնադանը պատասխանեց բարկանալով.

— Բե՞գ ինչ, քէ ես ուր եմ գնում.
Ուր գնում եմ, այդ ես գիտեմ:
Ես չեմ գնում, որ քեզ նրման
Խնդաղ մարդկանց՝ նամբան կտրեմ:

— Ուրեմըն ես աւագա՞կ եմ.
Դո՞ւ ես ասում ինձ այդ բանը:
Այս բոպէիս դու կը ստանաս
Քո այդ խօսքի պատասխանը:

— Այո՛, թէ դու աւագակ ես,
Ցոյց է տալիս քո դիմակը.
Բայց թէ ի՞նչպէս տղամարդ ես,
Այդ թո՛ղ տեսնէ իմ նիզակը...

Եւ Արեգնազանը յարձակուեց նրա վրայ՝ ասելով.

— Դէ՛ն ձգիր դիմակդ, տեսնեմ դու ի՛նչ մարդ ես,
Եթէ ոչ այս բոպէիս կը թոցնեմ գլուխդ:

Ձիւտորն ընդդիմացաւ, վահանով պաշտպանուեց
եւ թրով յարձակուեց Արեգնազանի վրայ: Արեգնազա-
նը նոյնպէս պաշտպանուեմ էր վահանով եւ յարձակուեմ
թրով: Մի ժամ շարունակ տեւեց նրանց կռիւը եւ ոչ
մէկը չկարողացաւ զարկել միւսին. զարկերը վահան-
ներին էին դիպչում: Միայն թէ Արեգնազանը հետզհե-
տէ գորանում էր, իսկ նրա հակառակորդը թուլանում:

Ի վերջոյ Արեգնազանը մի ճարպիկ ուսուցնով
թուաւ իր ձիւտը, հակառակորդի փողպատից բռնելով
վայր գլորեց նրան ձիւտը եւ, հենց այն է, ուզում էր,
որ մի հարուածով գլուխը թոցնէ, նա իսկոյն վեր ա-
ռաւ դիմակը:

— Ա՛խ, հայրի՛կ, հայրի՛կ, — բացազանչեց Ա-
րեգնազանը, — այս ի՞նչ փորձանքի մէջ գցում էիր
դու ինձ. եթէ մի փոքր ուշ վեր առնէիր դիմակդ, ինձ
հայրասպան պիտի դարձնէիր:

Հայրը իր մօտ նստեցրեց Արեգնազանին եւ նրա
վրայ նայելուց չէր կշտանում: Մի փոքր շունչ առնե-
լուց յետոյ ասաց.

— Ապրե՛ս, ապրե՛ս, Արեգնազա՛ն,
Ծըլիս, ծաղկիս, գորանաս.
Հիմա գիտեմ որ իմ տեղը
Դու անպատեալ կը ստանաս:

2. ԱՂԱՅԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բղաւել. — Բարձր ձայնով խօսել, պտուալ:
Փոռպատ. — Օձիք, փողկապ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ի՞նչ պատահեցաւ Արեգ-
նազանին: Ինչո՞վ տարբեր էր ան իր բոյրբերէն: Ներ-
կայացնել հօրը հնարամտութիւնը՝ փորձելու իր աղ-
ջիկներուն քաջութիւնը: Ի՞նչ վախճան կ'ունենար կռի-
ւը, եթէ հայրը նիշդ ժամանակին չհանէր իր դիմակը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Փոփոխման կանոնին հա-
մաձայն, ամանցումի եւ բարդութեանց ատեն կարգ
վը ձայնաւոր գիրեր փոփոխութիւններ կը կրեն. է գի-
րը կը փոխուի ի-ի. օրինակ՝ սէր—սիրել—սիրալիք,
դէտ—դիտել—դիտաւորութիւն: Եայ կը փոխուի է-ի.
օրինակ՝ քրիստոնեայ — քրիստոնէութիւն, գործունե-
այ—գործունէութիւն: Ոյ կը փոխուի ու-ի. օրի-
նակ՝ լոյս—լուսաւոր—լուսատու, յոյս — յուսալ —
յուսալից:



31. ԳԱԶԵԼ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

Մտանում եմ, որ կէս դար
Ապրել եմ ես աշխարհում:
Անհանգիստ ու անդադար
Ապրել եմ ես աշխարհում:

Երբ լացել է երկիրն իմ՝
Ես էլ լացել եմ սրտանց,
Եղել արդար, անարդար, —
Ապրել եմ այս աշխարհում:

Տուե՛լ եմ իմ երգերը
Հովերին ու հաւերին,
Երագներով լուսավառ
Ապրել եմ այս աշխարհում:

Զրքի նման զրնացել,
Աւազի պէս մնացել,
Որպէս յո՛ւշ, ե՛րբ ու բարբառ
Ապրել եմ այս աշխարհում:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաւք.— Թռչուն:

Յուշ.— Յիշատակ:

Բարբառ.— Լեզու:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ.— Բուն անունն է Գուրգէն Անէմեան: Ծնած է Վան, 1903ին: Ուսումը ստացած է ծննդավայրին եւ Երևանի մէջ, չորս-ապաստանած էր 1915ին: Գլխաւոր երկերն են «Մանկութիւն եւ Պատանեկութիւն», «Մրգահաս», «Երիտասարդութեան սեմին», «Լուսեան ձայնը»: Մեծաւ 16 Յուլիս 1969ին: Բնաբերակ բանաստեղծ եւ շնորհալի արձակագիր է, զգայուն լսանումաժողով:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ճշդիւ քանի՞ տարի ապրած է հեղինակը մինչեւ այսօր: Ի՞նչպէս ապրած է: — Բացատրել երկրորդ քառյակին առաջին երկու տողերը: Բացատրել նաեւ «տուել եմ իմ երգերը հովերին ու հաւերին» խօսքը: — Ի՞նչ իմաստ ունին սա պատկերաւոր փոխաբերութիւնները, — ջուրի նման երթալ, աւազի պէս մնալ, ապրիլ իբրեւ յուշ, երգ ու բարբառ:

32. Կ Ո Տ Ր Ե Լ Է Ն Ե Տ Ք Ը

1

Հարկաւ ազնիւ յախճապակի էր այս սուրճի սկահակը իր պնակին մէջ, երբոր նուէր բերին ինծի օր մը:

Տուողը, բարեկամներէս մէկը, որուն պղտիկ ծառայութիւն մը մատուցեր էի, ըսաւ թէ չնչին բան մըն էր տուածը:

Բայց իր երթալէն վերջը, անուշադիր եւ հարեւանցի աչք մը պտրացուցի վրան:

Ասիկա դատեր էր, որպէս զի սուրճս անոր մէջէն խմեմ եւ միշտ յիշեմ զինքը այդ առիթով:

Թափանցիկ խմորը, իրօք, տեսակին աղնուութիւնը երեւան կը հանէր, եւ Սեւրի հռչակաւոր արուեստարանին նշանը վրան էր, կարծիր պղտիկ բոլորակով մը, որուն մէջ 1844 թուականը կը կարդացուէր:

Բաւական առեն գրասենեակիս փոշիներուն մէջ սպասեց, անկինն մը դրուած. ես, որ արուեստական բաներու կարեւորութիւն կ'ընծայեմ, ասիկա իմ գրասենեակիս մէջ ունենալու փառասիրութեամբ բաւակա՛նացեր էի սկիզբը. յետոյ բոլորովին մոռցեր էի զայն. օր մըն ալ այս սուրճի ըմպանակը ծիծաղելի թուեցաւ ինծի իր անօգուտ սպասումին մէջ. խորհեցայ, որ այս լքումէն աղէկ էր, եթէ երբեմն անով սուրճ մը խրմուէր. առի տուն տարի զայն:

Հոն աւելի բախտաւոր չեղաւ. նիւթերն ալ մարդոց կը նմանին քիչ մը, իրենց ճակատազիրն ունին. ոչ ոք երեսը նայեցաւ այս խեղճ սկահակին. մէկ հաստ մըն էր ու նմանը եւ օրինակը չկար, որպէս զի օրական դործածութեան մէջ ընդունուէր:

Պարզ զարդի համար տեղ մը դրինք. քանի մը օր վերջը հոս ու հոն նետուէր էր. անպամ մը պղտիկ դաւկիս ձեռքը տեսայ. հետը կը խաղար. ու ժամանակ կ'անցընէր. օրին մէկն ալ ձեռքէն վար ինկաւ, կտորկտոր-եղաւ:

2

Անցած օր անոր պղտիկ պնակը ձեռքս անցաւ. սրտի նեղութեան մէկ վայրկեանիս, անոր նուրբ գծագրութիւններն ու գունադեղ կիտուածները կը զննէի. ստուգիւ, գեղեցիկ արուեստի մը հրաշակերտն էր. դիժերուն շնորհալի ընդելուզումները, նկարէն երակներուն զիրկընդխառնումները ու շաղրութիւնս գրաւեր էին. յանկարծ իրարու փաթթուած երկու տառեր նշմարեցի, վրան արքայական զինանշանով. ճիշդ դիմացի կողմը շրջանակին, միեւնոյն զինանշանը. ու միեւնոյն սկզբնատառերը:

Այս տառերը Փրանսերէն L եւ P զիրերն էին, եւ ահա լոյսը խեղոյն ծաղեցաւ մտքիս մէջ. Լուի Ֆիլիպի կը վերաբերէր այս սուրճի սկահակը իր պնակով. Սեւրի արուեստարանին նշանին քով Ֆրանսիացոյցի դղեակին անունն ալ կար դրուած, զոր հիմա կը նըշմարէի: Ալ տարակոյս չկար, Ֆրանսայի թաղաւորինն էր ասիկա. իր զարդարուն ու նրբակերտ յօրինուածքը բաւելու էր արդէն, ճանչցողի մը համար, մէկ նայուածքով ճշդելու, թէ ասիկա սովորական մասհանացուի յատուկ բան մը չէր կրնար ըլլալ:

Եւ հիմա սը կտորած-փշրուած էր այդ խեղճ սկահակը, որուն արժէքը չէի կրցած ըմբռնել, երկար տարիներ մնացեր էր քովս, ձեռքիս տակ. հիմա ո՛րքան կը զղջայի ըրածիս վրայ, ո՛րքան կը կշտամբէի ինք-

զինքս քիչ մը հող եւ ուշադրութիւն չդարձնելուս համար արուեստական ու սլաոմական այսքան թանկագին բան մը հասկնալու եւ պահպանելու :

3

Այս սղտիկ դէպքը կը թերագրէ ինծի կարգ մը խորհրդածութիւններ, որոնք այս տողերը կարգացողներուն միտքն ալ պիտի դան հարկաւ :

Ընդհանուր կանոն մըն է, որ մարդիկ իրենց կենդանութեանը մէջ չճանչցաւին ու չգնահատաւին անոնցմէ, որոնց քովն ու մօտը ապրած են շարունակ . մահը, անդարձ կորստուք պէտք է վայ, որպէսզի անաչառ դատաստան մը ու արդար միջև մը ընել կարելի ըլլայ, գերեզմանին անջրպետը պէտք է, որպէս զի մեր ակնարկը կարենայ ճշդիւ տեսնել զիծերը այն դէմքերուն, որոնք անոր միւս եղերքն անցած են հիմա . անոնց վերադարձին անկարելիութեան համոզումը պէտք է մեզի, որպէսզի կուրցած աչուքնիս բացուին ճշմարտութեան, ու զիջանինք խոստովանելու եւ հրապարակելու անոնց առաւելութիւնները, որոնց վրայ անդիտակցարար դուցէ չըշարէինք, ցորչափ կենդանի էին անոնք :

Կը խորհիմ, որ բարեկամութիւնները, անձուիրութիւններն ալ ասանկ են շատ անգամ, ոչ ոք ամենադոյն արժէք մը կու տայ այն սրբաշուն, որոնք յօժարաւորութիւն ու լուս հաւատարմութեամբ իրեն իր սպասան . ու հարկ է, որ այդ սիրտերը խորտակուին, որպէս զի կորուստին մեծութիւնը կարելի ըլլայ զբաւելու եւ չափել :

Այսպէս սրատանկեցաւ իմ սուրճի սկահակիս համար ալ . ես գոյն ճանչցայ . . կտարելէն ետքը :

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յախճապակի.— Ազնիւ տեսակէ կուեղէն, կէս թափանցիկ եւ ազակիի նման :

Սկահակ.— Փոքր դաւաթ (սուրճի) :

Սեր.— Փարթիլի արուարձաններէն մէկը, որ նշանաւոր է իր յախճապակիէ անօթներով :

Արուեստարան.— Արուեստանոց, ուր արուեստի դորձեր կը շինուին :

Արուեստական.— Արուեստով շինուած, ղեղարուեստական : Հիմա այս բառը կեղծի իմաստ ունի . անոր տեղ կը գործածուի գեղարուեստական :

Ըմպանակ.— Ըմպելու, խմելու յատուկ աման, դաւաթ :

Լիւն.— Երեսի վրայ ձգել :

Կիտուած.— Կէտ-կէտ շինուած նկար, զարդ :

Հրաշակիբու.— Հրաշալի արուեստով շինուած, հրաշալի կառուցումք ունեցող :

Ընդիտուգում.— Իրարու կցել կամ հիւսել, շարուածք, հիւսուածք :

Նկարէն.— Նկարուած, գոյնզոյն :

Լուի Ֆիլիփ.— Ֆրանսայի թագաւորներէն մէկը, որ դահէն հրաժարեցաւ 1848ին :

Կշտամբել.— Նեղանալ, յանդիմանել :

Անջրպետ.— Միջոց, հեռաւորութիւն :

Չարիլ.— Գժդոհիլ, ցաւիլ, նախանձիլ :

Ամենադոյն.— Ամենաքիչ, շատ քիչ, գոյզն, քիչ :

ԹԵԼԱՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ .— Խօսիլ յախճապակիի, ապակիի եւ ապակիով շինուած անօթներու մասին : Վեր առնել հեղինակին նուրբ քաշակը : Բացատրել արուեստարան, արուեստական քառերուն առումները : — Ո՞վ է Լուի Ֆիլիփ . Ֆրանսայի թագաւորներէն որո՞նք :

նշանաւոր եղած են: Ի՞նչ կը յիշեցնեն ձեզի Սեւր, Ֆոն-
քենալլօ, Վերսալլ, Լուվր անունները: — Ի՞նչ խոր-
հրրգածութիւններ կ'ընէ հեղինակը սուրճի գաւաթին
առիթով: Ուշադրութիւն ըրի՞՞ք, թէ ո՞րքան շահեկան
կրցած է դարձնել այս պարզ նիւթը եւ ի՞նչ եզրակա-
ցութիւններ հանած է անկէ: Ինչե՞ր պիտի կրնայիք ը-
սել դուք, եթէ ձեր սիրած մէկ անօթը կոտրած ըլլար:

33. Մ Ա Ր Ա Ն Ը

1

Մեծ եզրայրս՝ Յակօրը պահում էր մի արարական
ձի, որ ծնուել էր մեր տանը եւ երբեք չէր տեսել ար-
մաւենի, եւ ոչ էլ նրա սմբակները մխրձուել էին հա-
րաւի տաք աւաղներում: Նրա վրնջիւնի մէջ մենք թզ-
գում էինք անհուն անապատների կարօտը:

Զին, որին Յակօրը Մարան էր կոչում, սեւ էր
ինչպէս սեւ սաթը, փայլուն եւ ողորկ, հաւկթաձեւ
սպիտակը ճակատի վրայ:

Մարանը սանձ չէր տեսել իր կեանքում, նա ազա-
տօրէն ման էր գալիս մեր տանը. մինչեւ անգամ ճաշի
ժամանակ, երբ մեր ընտանիքը բոլորում էր մեծ սե-
ղանի շուրջը, նա գալիս էր, դունչը հանդէսեցնում Յա-
կօրի ուսին եւ սպասում՝ մինչեւ նա շաքար տար. յե-
տոյ դնում էր հօրս ուսին, ապա՝ մօրս:

Մայրս անհուն բարութեամբ եւ ջինջ ժպիտով
տալիս էր վերջին շաքարը ու հրամայում նրան դնալ
պարտէզ:

Մարանը, շաքարը խրախրտացնելով, դնում էր
դէպի պարտէզ, որտեղից մի անգամ վրնջում էր իբ-
րեւ տեղեկութիւն, որ արդէն պարտէզում է:

Այս վրնջիւնի ժամա-
նակ եզրայրս կանգ էր առ-
նում, մինչեւ անգամ պա-
տառը դեռ բերնին չհաս-
ցրած՝ ձեռքը մնում էր օ-
դում, հրճուանքից մարմը-
րում էր եւ շնջում:

— Միրեմ ջրլի:

Ամէն գիշեր Յակօրը
պէտք է վեր կենար, գնար
Մարանի մօտ, մի անգամ
նայէր, շոյէր, համբուրէր
եւ վերադառնար անկողին:
Մարանի սենեակը (ախտ
չէր կարելի կոչել նրա գի-
շերած վայրը) դանում էր հօրս եւ մօրս սենեակի տա-
կը: Կէս գիշերին, երբ յանկարծ լուում էր Մարանի
խրիինջը, մեղմ եւ ջինջ, հայրս ասում էր.

— Ակօրը դնաց սիրականին քով:

2

Ամէն Կիրակի, Յակօրը հերկուած դաշար տանում
էր Մարանին եւ բաց թողնում: Մարանը քամու նման
թռչում էր, սահում հերկուած դաշտի վրայից, ինչ-
պէս սուրացող ալիք:

Քաղաքի երիտասարդները համար մեծագոյն հա-
ճոյք էր հաւաքուել դաշտում, տեսնելու Մարանի վազ-



քը: Ապա վերադառնում էր նա սուրացող ալիքի նման եւ դալիս կանգնում Յակոբի մօտ: Յակոբը փաթաթուում էր նրա վզին եւ համբուրում նրա սեւ ստեւները:

— Գիտես թէ ամպի վրայէն կը թոխ, — ասում էին շատերը:

Յակոբը տուն էր բերում Մարանին: Մայրս պատրաստած կը լինէր մի թարմ ձու: Յակոբն ամէն անգամ Մարանին դուրս տանելուց եւ բերելուց յետոյ՝ մի թարմ ձու էր խփում նրա ճակատին, որպէսզի չար աչքերը խափանուէին:

Յակոբի ամբողջ զրօսանքը Մարանն էր: Երբ միջնակարգն աւարտեց եւ հայրս նրան առաջարկեց զնալ բարձրագոյն դպրոց, նա մերժեց այն մտահոգութեամբ միայն, որ Մարանին չէր կարող տանել հետը Պոլիս կամ Եւրոպա:

Նրա համար ամենէն երջանիկ օրը այն օրն էր, երբ պէտք է գնար արօտները Մարանին հետ: Տանում էր հետը մի վրան, անկողին, եփել-թափելու անհրաժեշտ պիտոյքներ ու գնում էր արօտ:

Յակոբը ժամերով խօսում էր Մարանի հետ, հարց էր տալիս, պատասխան ստանում, ծիծաղում, երբեմն մտերմօրէն կշտամբում նրան եւ անցկացնում ժամանակը:

— Մարան, էսօր աղէկ կերե՞ր ես, — հարցնում էր Յակոբը:

Մարանը վրնջում էր:

— Շուտով տուն կ'երթանք, — ասում էր Յակոբը:

Մարանը պոչը թափ էր տալիս, գլուխը երեքցնում:

— Հը՞, չե՞ս ուղեր: Կ'ուզես հո՞ս կենանք:

Մարանը մօտենում էր Յակոբին, կծում Ֆէսը եւ շարժում օդում:

Այսպէս անփերջ խօսում էին նրանք, երկու մտերիմ ընկերների պէս:

Երեկոները Յակոբը պառկում էր վրանի առաջ եւ աչքերը երկնքին յառած երգում: Մարանը կանգնած լսում էր նրան առանց շարժուելու. այդ մշտապէս անհանդարտ անասունը ո՛չ մի շարժում չէր անում, եւ երբ Յակոբ դադարեցնում էր երգը, Մարանը դուրսը կախում էր ախուր:

— Նորէն խա՞ղ ըսիմ քըզի համար, հա՞, Մարան, — հարցնում էր Յակոբը:

Մարանը, իրբեւ պատասխան, վրնջում էր ոսկեհընչին:

3

Աշնան սկիզբը Յակոբը եւ Մարանը վերադառնում էին տուն: Հայրս ու մայրս դիմաւորում էին երկու ընկերներին: Յակոբը՝ առողջ, արեւից եփած, ինչպէս խաղողի ողկոյղը, իսկ Մարանը՝ դիրացած, ալ-խոյժ եւ աւելի վճիտացած աչքերով:

Երբ Մարանն արձակում էր իր առաջին խրխիւնջը, մեղ թւում էր, որ լուսաւորում էր մօռյլ տունը: Մայրս ասում էր հօրս.

— Հաջի՛ կֆէնտի, կենէ տունը եղաւ տուն:

Տունը տուն դարձնողը Յակոբն էր եւ իր անասուն ընկերը, որի ձայնը կախում էր մեր տան բոլոր պատերից, անկիւններից, առաստաղից եւ պարտէզի բոլոր ծառերի ճիւղերից:

Մեծ դուարճալիք էր մեղ համար, երբ Մարանը գնում էր աւաղանի ափին, նայում էր ջրնջ ջրի մէջ եւ, տեսնելով հոն իր պատկերը, ցատկում էր, նորից նայում, էլի տեսնում, էլի վեր-վեր ցատկաւորում եւ ի վերջոյ դունչը մօտեցնում ջրին, փոշտում, որից ջուրն

ալիքատրուում էր, պատկերը բեկբեկուում, և ուրախանալով, որ յաղթեց ջրի խորքում եղող ինչ որ անասունի, խրինջում և վազում էր դէպի կեռասնինիների ծառուղին, մինչև պարտէզի մութ թաւուտները:

Եթէ պատահէր, որ Յակոբը հիւր գնար, Մարանին հետը կը տանէր. մի ձու էր դնում նրա դաւակի վրայ և այդպէս տանում: Մարանը, որպէս զի ձուն չընկնի, քայլում էր դանդաղ, փոխում էր քայլուածքի ձևը, քայլում էր ալիքանման օրօրուելով: Փողոցում չէր լինի մի մարդ, որ կանգ չառնէր և չզիտէր Մարանի այդ դժուարին խաղը:

Այսպէս էին ապրում երկու ընկերները՝ Յակոբը և Մարանը:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ

ԲԱՆԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սաք.— Դեղնաւուն գոյնով և քարի պէս կարծր բոյս մը. քեհրիպար:

Ոգորկ.— Հարթ, հաւասար, չիտակ:

Ստեւ.— Մազ:

Ձու.— Հաւկիթ:

Միջնակարգ.— Միջնակարգ դպրոց, երկրորդական վարժարան:

Արօտ.— Դաշտ, ուր խոտ կը բուսնի և ուր կենդանիները արածելու կ'երթան:

Կշտամբել.— Յանդիմանել, սաստել:

Կծեի.— Խածնել:

Բեկբեկուիլ.— Կտորտիլ, կտոր — կտոր ըլլալ:

Թաւուտ.— Պուրակ, փոքր անտառ:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ.— Ծնած է հարբերդի Մեգրէ ֆաղաքը, 1889ին (ըստ ումանց՝ 1894ին): Նախնական ուսումը կը ստանայ տեղւոյն Կեդրոնական վարժարանին մէջ, ապա կ'անցնի Պալիս, իսկ աւելի ուշ՝ Ամերիկա: 1922ին կ'երթայ Հայաստան և կը գրադի գրականութեամբ: Գրել սկսած է 1907ին: Իր գլխաւոր գործերն են «Կեանքը հին հռովմէական մամապարհի վրայ», «Բաբու», «Յովնաթան՝ որդի Երեմիայի», «Իսկոտր Բուրբոնեան», «Հրկիզում թղթեր», ինչպէս նաեւ «Հրդեհ» և «Նոր Բիզանդիոն» քատերախոյզերը: Մեռաւ Հայաստանի մէջ, 1937ին:

ԹԵՂԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ խօսիլ կենդանիներու, մասնաւորաբար ձիերու եւ անոնց տեսակներուն մասին: Ներկայացնել Մարանի յատկանշական կողմերը: — Ի՞նչ վերաբերում ունէին Յակոբը եւ տնեցիք՝ Մարանի հանդէպ: — Կրնա՞ք տալ հաւատարիմ կենդանիներու անուններ եւ՝ մանրամասն պէր պատմել անոնց մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բառերուն սկիզբը և զիր չի գար. իրմէ առաջ կու գան ա, ե, ի, ո ձայնաւորները: Իրենց մէջ աւ, եւ, իւ հնչիւն ունեցող բառերը կը գրուին լ-ով եւ ոչ թէ զ-ով. օրինակ՝ աւագ, կեղեւ, կախ: Նոյն ձևով կը գրուին նաեւ օտար բառերը, ինչպէս՝ ժընեւ եւ ոչ թէ ժընեվ, Սեւր եւ ոչ թէ Սեվր, Իւան եւ ոչ թէ Իվան:



34. ԳԵՂՕՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մանկութիւնս յիշելիս՝ սիրտըս դառնում է գինով... Ես մի ընկեր ունէի՝ Լիսօ անունով :

Ինչքան յիշում եմ նրան՝ աչքերիս հանդէպ... Մի նայիրեան տեսարան բացւում է հապնեայ :

Փռնում է դէմքս իսկոյն մի փողոց խաղաղ, ճիւղայր ու Ռե փողոցի անկիւնում — մի վըտիտ տղայ :

Ներիւում է Ղարսը՝ խաղաղ ամառնամուտին... Ինչքան վըտիտ է տղան այդ ոտաբոլակի :

Նա նըստած է մի քարի — տասնամեայ տղան, Ու ներիւում է՝ առաջին — մի ցածիկ սեղան :

Կոք սեղան է ցածիկ, մէջտեղում մի չարիս. Բախտախաղ է մանկական, կոպեկնոց վիճակ :

Տո՛ւր մի կոպեկ ու խըփի՛ր, — թէ բախտո՞ղ բանեց, Մի տուփ լուցկի, կամ մի տուփ քորոց կը հանես :

Կապուտաչեայ այդ տղան, ա՛խ, ի՛նչքան էր չար. Մեզ հետ կուում էր յանախ, ծեծուում չարաչար :

Բախտը ժըպտար եթէ մեզ ու լուցկի հանէր, Նա իր չարխը կը ծըռէր ու կըսէր կ'անէր :

Քնէր բարի նա մի մայր, ծեր ու չըփառը. Միակ նեցուկն էր նա տան, բոլորին պահող :

Ինչքան յիշում եմ հիմա մանկութիւնըս ես, Կապուտաչեայ այդ տղան ելնում է իմ դէմ :

Տեսնում եմ միշտ նրան ես իր չարխի առջեւ... Յետոյ օրեր անցան շատ, սըլացան հապնեայ :

Ու կորցրի ես նրան : — Աշխարհում այնինչ սեղան եկան օրեր հուրիւրան, տարիներ անցինց :

Պատերազմներ եղան մեծ, պայքարներ բազում, Եւ ամբողջ կեանքը փոխուեց, ինչպէս երազում :

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեղօն. — Տեսակ ժը ղովաստանական երգ, սուհասարակ Նը-
ւերուած թաղաւորներու, իշխաններու, հերոսներու և նշանաւոր
անձերու :

Նայիրեան. — Նայիրի հին անունն է Հայաստանի, նայիր-
եան՝ հայաստանեան, հայկական :

Հայֆնայ.— Արագ, Կուսթուլ:

Ներքեւ.— Ննջէլ, քնանալ:

Զարիս.— Իր առանցքին վրայ պտըտող անիւ:

Կոպեկ.— Ռուսական պղինձէ դրամ, ըուբլին մէկ հաիւր-
երորդ մասը:

Քոքոց.— Գնդասեղ:

Զֆաւոր.— Աղքատ, չունեւոր:

Նեցուկ.— Օղնող, օղնական, պաշտպան:

Հուրիբան.— Փայլող, պայծառ, կրակի պէս այրող:

ԵՂԻՇԷ ԶՈՐԵՆՅ (1897-1937).— Բուն անունն է եղիշէ Սո-
դոմոնեան: Ծնած է Պարսկաստանի Մակու քաղաքը 1897ին եւ
մանուկ հասակին ծնողքին հետ փոխադրուած է Կարս (Ղարս):
Ուսումը ստացած է Կարսի մէջ. ապա՝ Մոսկուա: Ատեն մը գրա-
դած է ուսուցչութեամբ, բայց ի վերջոյ ամբողջովին նուիրուած
է գրականութեան: Գլխաւոր երկերն են «Պոեմներ», «Եպիֆանիան
լուսարաց», «Երկիր Նայիրի» (վէպ), «Գիրք Բանասպարհի»: Մե-
նած է բանտի մէջ, 1937ին: Մեր մեծագոյն բանաստեղծներէն է,
հարուստ խառնուածով եւ խոր գգայնութեամբ:

ԹԵԼԱՂՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մինչեւ հիմա կարդա-
ցիք գտնագան ֆերթուածներ, գրուած մանկութեան
մասին: Շարադրութիւն մը գրեցէք եւ ըսէք, թէ ա-
նոցմէ որո՞ւն կ'երթայ ձեր նախընտրութիւնը, ան-
շուշտ ցոյց տալով այդ նախընտրութեան պատճառնե-
րը.— Ներկայացուցէք այս ֆերթուածին գլխաւոր հե-
րուր՝ Լիպոն, կանգ առնելով անոր նկարագրին յատ-
կանչական կողմերուն վրայ: Ի՞նչն էր պատճառը իր
բարկացոտ, կուուզան բնաւորութեան: Տունը պահե-
լու համար ի՞նչ գրադուր ընտրած էր:

35. ԹԷ ԻՆՉՊԵՍ ԳԵՐԻ ԻՆԿԱՅ

1

Գուցէ մտածէք՝ թուրքերու ձեռքը կամ քիւրտե-
րու եւ կամ դերմանացիներու: Ո՛չ, ես դերի ինկայ
կերպասավաճառ Քոչարեանի վաճառատունը:

Որոշեր էի ինծի համար նոր հագուստացու մը դը-
նել. ուստի՝ շուկայ գացի կնոջս ուղեկցութեամբ եւ
մտայ Քոչարեանի վաճառատունը:

— Ի՞նչ կը կամենաք, — դարձաւ ինծի անուր գոր-
ծակատարը:

— Կ'ուզեմ ինծի յարմար հագուստացու մը գնել:

— Ի՞նչ աղուոր մտածում... Եւ անշուշտ ամենա-
լաւ ու ամենէն աժան կերպասը գնելու անխախտ հա-
մողումն էր, որ մեր վաճառատունը բերաւ ձեզ:

— Ո՛չ, ես... այնպէս, պատահմամբ եկայ: Ես
քիչ մը... դաղթական եմ եւ այս քաղաքին օտար:
Այնպէս որ նախընտրութիւն տալ չէի կրնար:

Ըսի ու կեցայ:

— Նախախնամութեան մատը կայ ուրեմն այս
բանին մէջ: Մեր սպրանքները ընտիր են, գինները՝
մատչելի, խաբել բնաւ չկայ եւ, որ գլխաւորն է, գի-
ները վերջնական են եւ առեւտուրը կը կատարուի ան-
սահարկ: Լեւո՛ն, — ըսաւ ձախ կողմը դառնալով, —
պարոնին ցոյց տուր մեր հագուստացուները:

— Ի՞նչ գոյն ըլլայ, պարո՛ն, — դարձաւ ինծի
«Լեւոն»ը:

— Գոյնին համար կանխակալ կարծիք չունիմ, —
պատասխանեցի ես:

Լեւոնը սկսաւ ցոյց տալ ապրանքները :

— Յարմար կտորներ չկան, — յայտարարեցի ես՝ մեզի ներկայացուած բրդեղէնները քննելէ ետք եւ կը պատրաստուէինք դուրս ելլել, երբ աւաղ դործակատարը միջամտեց :

— Ի՞նչպէս, ի՞նչ ըսիք, յարմար ապրանք չկա՞մք : Այս կողմ հրամեցէք, խնդրեմ : Սա ի՞նչպէս է :

— Սեւ... հոգեւորական բլլալու միտք չունիմ, — պատասխանեցի ես :

— Ա՛ն քեզի ճերմակը :

Ես կրկին առանրիկեցի :

— Ա՛ն քեզի սեւ ու ճերմակ խառն :

— Ճաշակիւ յարմար չէ :

— Ի՞նչ կ'ըսես սա կապոյտին :

— Կապոյտը լաւ գոյն չէ :

— Կարմիրը հրամէ :

— Օ՛հ, կարմիրը յեղափոխութեան նշան է :

— Ուրեմն... այո՛, հասկցայ տամ ձեզի մոզական կտոր մը : Ինք որեւէ գոյն չունի, ինչ գոյն ուզես՝ այն կրնաս տեսնել :

Ես կրկին առանրիկեցի եւ ըսպէն յարմար նկատելով՝ դէպի դուռը քալեցի :

— Կ'երթա՞ք, — ձայնեց երրորդ դործակատար մը :

— Այո՛, պիտի երթանք. մեր ճաշակին յարմար բան մը չկրցանք գտնել :

— Ոչ մէկ ճաշակաւոր բա՞ն այս հարիւրաւոր կտորներուն մէջ... :

— Գրեթէ ոչ մէկ : Մնաք բարով :

— Վայրկեան մը : Դարձեալ կ'երթաք. ահա՛ ձեզի սեւ, կապոյտ, մոխրագոյն, նարնջագոյն... :

— Նեղութիւն մի՛ քաշէք, կ'արաչեմ. անգամ մը նայած ենք արդէն :

Գործակատարը սկսաւ քակել բոլոր ծրարները եւ սեղանին վրայ փռել : Կը մտածէի՝ ի՞նչպէս դուրս ելլել վաճառատունէն, առանց բան մը առնելու :

— Կ'աղաչեմ, — կրկնեցի ես, — նեղութիւն մի՛ քաշէք, քանի որ բան մը առնելու չենք :

— Հա՛ այդ տարբեր. եթէ բան մը չառնելու մտքով վաճառատունս եկաք, այն ատեն ինչո՞ւ այսքան նեղութիւն տուիք մեզի :

— Ներողութիւն. ի՞նչ ընենք, որ մեր ճաշակին յարմար բան մը չկտանք, — ըսի ու աճապարանքով դէպի դուռը յառաջացայ :

— Կ'երթա՞ք, — ձայն տուաւ չորրորդ դործակատար մը, ապրանքներու դէզի մը մէջէն դուրս դալով :

— Այո՛, ճաշակաւոր բան մը չգտնելուս... :

— Շատ լաւ, մէկ հոս հրամէ ու գնա, ազատ ես : Մեր պատուին դէմ է, որ յաճախորդ մը դժուհի դուրս ելլէ մեր վաճառատունէն : Ա՛հ, սա կտորին նայեցէք մէյ մը, խնդրեմ. պարզապէս դարունը կը յիշեցնէ : Խիստ զիմացկուն կտոր մը եւ աժա՛ն : Հաւնէ՛ դուն այս գոյնին եւ դարձեալ մի՛ առնիր : Ըսէ՛, կը հաւնիմ ու դարձեալ գնա, Տէր ընդ քեզ :

— Քիչ մը... կը սկսիմ հաւնիլ կարծես, — ըսի ու դրան կողմը նայեցայ :

— Ահա՛, կը տեսնե՞ս, որ դէ՛չ ապրանք չէր քեզի

առաջարկածս: Եղբա՛յր, աղէկին գէշ կ'ըսուի՞, մա-
ծունին սեւ կ'ըսուի՞: Զ'ըսուիր, եղբա՛յր, չ'ըսուիր...
Ո՞րքան պէտք է ձեզի:

— Կարծեմ սուղ է, այդքան կարողութիւն չու-
նիմ...

— Զրի՛, կը հաւատացնեմ՝ ձրի պիտի տամ, —
ըսաւ կանգունը վերցնելով: — Այս հարուստցուն ձեզի
համար վաթսուների պիտի տամ: Ի՞նչ ըսիք, եօթանա-
սունէն մէկ փարս պակաս չէի կընար տալ, եթէ ձեր
տեղը ուրիշ մը ըլլար: Հը՛, չեղա՞ք, յիսունըհինգ
տուէք, ծօ՛ յիսուն տուէք:

— Իրաւ որ ճաշակիս...

— Եղբա՛յր, քառասունըհինգ, քառասուն հա՛, —
ըսաւ աղամները սեղմելով, — ա՛լ բան մնա՞ց առար-
կելիք:

Եւ գործը վերջացած համարելով՝ սկսաւ չափել:

— Մի՛ չափեր դեռ, կ'աղաչեմ:

— Ի՞նչ, կ'ուզես որ ձրի՞ տամ:

— Ո՛չ, անգամ մը դուրս ելլեմ ու դառնամ:

Այդ միջոցին, ճիշդ մուտքի դրան առջեւ, դիմացս
Ելաւ հինգերորդ գործակատարը:

— Պարո՛ն, — ըսաւ, — պատե՛հ առիթը մի՛ փախ-
ցընէք:

Ա՛լ հասկցայ, որ գերի էի խանութին մէջ: Երկու
կաթիլ արցունք վարեցան կնոջս աչքերէն: Ես կարօ-
տով նայեցայ դուրսի անցորդներուն. մէկ ժամ առաջ
ես ալ անոնց պէս աղատ անցորդ մըն էի: Ու կատա-
ղութիւն եկաւ վրաս:

... Մութէն օգտուելով ձեզքեցի գործակատար-
ներուն բանակը, եւ կինս ու ես վաճառատունէն դուրս
նետուեցանք:

Յաջորդ առտու, երկու ստիկան եւ չորս ձիաւոր
հետս առած, վաճառատան մը մօտենալու՝ չորս կան-
գուն հեռուէն կը պոռայի.

— Է՛յ, բարեկա՛մ, յարձար հարուստցու կա՞յ
ձեր մօտ...

ԼԵՌ - ԿԱՄՍԱՐ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախախմամբիւն. — Փոխարեբարար՝ Աստուած:

Անսակարկ. — Ասանց սակարկելու:

Կանխակալ. — Կանխու, առաջունէ կողմուած (կարծիք):

Աւագ. — Գլխուոր, պաշտօնով մեծ:

Գեգ. — Կոյս, իրարու վրայ զիգուած:

Ատամ. — Ակուայ:

ԼԵՌ - ԿԱՄՍԱՐ. — Երգիծարան: Բուն անուն է Արամ Թու-
մաղեան: Ծնած է վառ, ուրիշ 1915ին անցած է Հայաստան: Հոն
սկսած է աշխատակցիլ զանազան քերքերու՝ երգիծական գր-
ուածքներով: 1926ին Երեւանի մէջ այս տեսու իր առաջին գոր-
ծը՝ «Ազգային այրքեհարան»: Բանի մը տարի առաջ կրտարակ-
ուեցաւ նաեւ իր երգիծական պատուածքներու երկրորդ ժողո-
վածուն՝ «Ֆիլիստոններ» անունով:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Նախ պատմել նիւրբ,
ապա բսել, քէ ի՛նչ բան Թուգէ ծաղրիլ հեղինակը:
Ի՞նչ է իր կարծիքը վաճառատան վրայ: — Ո՞ր
է, որո՞ւ ուղղուած է հեղինակը այս գրուածքին մէջ:
— Մեր երգիծարաններէն որո՞նք ծանօթ են ձեզի:
Ո՞րն է անոնց մէջ ամենէն սաղանգաւորը:

36. ԱՐՋԻ «ԱՂԱԶԱՆՔ»Ը

1

Ամառնամուտ էր: Անտառով զննում էի՝ հրացանը
ձեռքիս պատրաստ պահած:

Իմ առաջ մի փոքր ձո-
րակ բացուեց: Այդտեղ սեւ
հաղարջի թփեր կան: Մո-
տեցայ, ձեռքս մեկնեցի նոր
սեւացող ողկոյգներին եւ
զեռ չքաղած՝ խշխշոց լսե-
ցի վերեւում. դրացի, որ
անասուն է անցնում: Հայ-
եացքով շարունակեցի հե-
տախուզել անտառը:



Այդ պահին, ուղիղ իմ
դիմաց, մի ահապին թուխ
արջ երեւաց. աշխատում էր
աննկատելի առաջ գնալ եւ
նետուել յաջորդ ձորակը:
Այդպէս է արջը, — քանի
իրեն չեն նկատել, զսպում է իր տաղնապը, կեղծ
հանդիստ է ձեւանում եւ ջանում անձայն ծածկուել
մարդու տեսողութիւնից: Ու հենց որ դուրս եկաւ որ-
սորդի տեսողութեան դաշտից՝ փախչում է ճիւղ ու
թուփ փշրելով:

Նկատեց, որ տեսայ իրեն: Բայց ձեւացնում է,
թէ՛ հէ՛ջ, իբր ինձ չի նկատել. մի աչքով իմ շարժում-
ներին է հետեւում, ու առաջ գնում: Մեծ, փորձուած

արջ է եւ շատ լաւ դիտէ, թէ ի՛նչ է ձեռքիս, ու դադ-
տադողի հրացանիս է նայում:

Ես անմիջապէս նստեցի ու նշան բռնեցի: Նա ե-
րեսով դարձաւ դէպի ինձ, պղպեց եւ առջեւի թաթե-
րը վեր բարձրացրեց: Դողդողում է սարսափից եւ,
ինձ թւում է, իր արջային լեզուով քան է ասում,
խուււ, աղաչական ձայներ է հանում: Այնպէ՛ս անսո-
վոր է այդ դադանի վարմունքը, որ ես, անակնկալի
եկած, ետ քաշեցի զէնքս եւ շարունակեցի դիտել հե-
տաքրքրութեամբ ու զարմացած:

2

Արջը թաթերն իջեցրեց, նորից դարձաւ չորքոտա-
նի ու առաջ է գնում դիմացի լանջով: Էլի աչքը չի
կտրում ինձանից: Ես ուշքի եկայ եւ արագ նշան բռ-
նեցի: Քիչ էր մնում ձդանը քաշէի, երբ նորից թա-
թերը վեր բարձրացրեց ու առանց խօսքերի պաղատեց.
«Մի՛ սպանի ինձ, մա՛րդ...»:

Այնքան արտայայտիչ էին նրա շարժումները,
հայեացքը, որ ինձ մի պահ թուաց, թէ նա ինձ ուղ-
ղակի ասաց թախանձանքով լի այդ բառերը:

Եւ ինձ նոյնպէս պատեց ահը, որ առաջացաւ ան-
լեզու կենդանու այդ զարմանալի արարքից: Եւ երբ
տեսայ այդքան յաջող որսս ձեռքիցս գնալու է, ինձ
նախատեցի իմ հոյեկան թուլութեան համար ու անմի-
ջապէս արթնացաւ որսորդական կիրքն իմ մէջ: Նորից
նշան բռնեցի: Եւ երբ արջը նորից թաթերը վեր բար-
ձրացրեց, իմ մէջ խղճահարուցութիւնը տեղի տուեց ար-
համարհանքի, — ի՛նչ շատ է մտածում իր կեանքի մա-
սին եւ ինչքա՛ն էլ ստորանում է, մինչդեռ կարող էր
յարձակուել ու քաջութեամբ իր կեանքը պաշտպանել:

Ձէ՛, սա իր կեանքին համար դողացող թուլամոր-
թի մէկն է, — վայրկենապէս եղբայրացիք եւ եւ հենց
այն է՝ ձգանք քաշում էի, գազանը տարօրինակ ձայն
հաննց եւ այդ ձայնի վրայ ինձնից քիչ ցած խշրոնց
լսուեց թփերում: Նայեցի եւ քարայցայ: Նրա քոթոթ-
ները թփուտից, ուր թապնուել էին իրենց մօր հրա-
մանով, գուրս վաղեցին ու թեք լանջն ի վեր շտապե-
ցին նրա մօտ:

Ահա թէ ինչի՞ է կեանք խնդրում ինձնից: Ահա
ո՞ւմ համար է ուղում ապրել:

Կարծես սրտիցս մի ծանր քար ընկաւ: Հրացանը
դողիս դրած, հրձուպից հայեացքով նայում եմ սայ-
թարու, գլխուս ու նորից անճոռնի վաղքով դէպի
իրենց մայրը շտապող քոթոթներին, ու դո՛ւ եմ, որ
ձգանք չքաշեցի:

Եւ երբ ձաղերը հասան իրենց մօրը, եւ կանգնեցի
ու օդում գլխարկս թափահարելով բարձր կանչեցի.

— Գնացէ՛ք, կեանքներդ բաշխում եմ... Բարի
ճանապարհ... .

Արջը շարժուեց, բայց ահով լի հայեացքը չէր
կտրում ինձնից եւ եւ տրամադիր եմ ենթադրելու, որ
այդ պահին նա իր արջային լեզուով օրհնում էր ինձ.

— Շնորհակալ եմ, մա՛րդ, որ խնայեցիր կեանքս՝
ձաղերիս համար...

Ես գլխարկս նորից թափահարեցի, ինչպէս ճա-
նապարհ են դնում ծանօթներէն, եւ նրանք՝ մայր ու
ձաղեր՝ մտան յաջորդ ձորակը ու ծածկուեցին իմ տե-
տողութիւնից:

Ես դո՛ւ էի:

Վ. ԱՆԱՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաղարթ.— Մանր ու թթուաչ պտուղ մը՝ վար կախուած սղ-
կուզածեւ ծաղիկներով:

Հայեացք.— Ակնարկ, նայուածք:

Պպզել.— Ուղի վրայ նստիլ, կկուզ ընել:

Զգան.— Հրացանի բլթակ:

Թախանձանք.— Աղաչանք, աղերսանք:

Քոթոթ.— Արջու ձագ:

Թեք.— Մէկ կողմը ծած, հակած:

Գոգ.— Գիրկ:

ՎԱՆՏԱՆԳ ԱՆԱՆԵԱՆ.— Զբաղումով՝ որսորդ: Ծնած է Գի-
լիջանի Եամախեան գիւղը, 1905ին: Գրել սկսած է 1928ին: Մեր
լուսագոյն արձակագիրներէն է: Գրած է որսորդական կեանքէ
խաղում բազմաթիւ վէպեր ու պատմութեան, որոնք մեծ յա-
փըշտակութեամբ կը կարդացուին: Իր գլխաւոր գործերն են
«Որսորդական պատմութեան», «Մանկութիւնը լուսնուս»,
«Սեւանի ափին», «Լեռնային կածաններով», «Յովազաճարի գե-
րիները» եւայլն:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Անգամ մը ի՞նչ պատա-
հեցաւ հեղինակին անտառին մէջ: Արջը ի՞նչպէս կըր-
ցաւ հասկցնել զինք տագնապի մատնող զգացումները:
Արջերու մասին ուրիշ պատմութիւններ գիտէ՞ք: Մեր
մէջ ո՞ր գրողը ամենէն շատ խօսած է կենդանիներու
մասին: — Ներկայացնել ծնողական զգացումը նոյնիսկ
գազաններու մօտ:

38. Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Վ Ա Ն Ք

1

Հոռմի յիշատակարաններին նուիրուած մի գըրքում զիպուածով կարգացի, ի միջի այլոց, «Հայկական Վանք»: Մի կաթուղիկ կրօնաւոր տալիս է ինձ խնդրածս տեղեկութիւնները եւ հասցէն:

Իուրս է գալիս, որ այտեղ՝ Հոռմում կան մի քանի հայ կաթուղիկ եկեղեցականներ եւ երկու եկեղեցի: Շտապում եմ այցելել հայ կրօնաւորներին: ՍէնՆիկոլա փողոցի վրայ ոստիկանը ցոյց է տալիս ինձ մի կաթուղիկ եկեղեցի եւ ասում.

— Սա է Հայկական Վանքը:

Ֆրանսացի ծառան րաց է անում դուռը, ցոյց է տալիս սեղանները, մատուռը եւ հաւատացնելու համար, թէ հայ եկեղեցի է, իմ առաջն է դնում մի քանի կրօնական դրօքեր հայ լեզուով:

Շէնքը ընդհանուր առումով շատ գեղեցիկ է, բաւական ընդարձակ, կոկիկ մի եկեղեցի, ներքուստ պատած դուռաւոր մարմարով եւ սիրուն նկարներով: Մայր սեղանի վրայ որոշ փոփոխութիւններ են կատարուած հայկական եկեղեցու ձեւին մօտեցնելու համար: Երկու կողմերում խորանի պէս բան կայ:

Շտապից տեղեկանում եմ, որ հայ կրօնաւորները ապրում են կից շինութեան մէջ, եւ դիմում եմ այնտեղ: Եպիսկոպոսը եւ երկու վարդապետները սիրալիր ընդունելութիւն են ցոյց տալիս հեռաւոր երկրից եկած հային:

2

Քացի կրօնաւորներից, վանքում ապրում են նաեւ քսանի չափ հայ աշակերտներ: Երիտասարդ վարդապետը նորից եկեղեցի է առաջնորդում ինձ, ցոյց տալիս նրան կից շինութիւնները, ննջարանը, սեղանատունը, պարտէզը, որ մշակում են աշակերտները, եւ միեւնոյն ժամանակ տալիս է հարկ եղած բացատրութիւններն ու տեղեկութիւնները:

Նա, ի միջի այլոց, ինձ հաղորդում է, որ եկեղեցին իր շրջապատի շինութիւններով մի միլիոնից աւելի արժողութիւն ունի եւ նուիրել է ներկայ Պապը, ի նշան իր առանձին համակրութեան դէպի հայերը:

Ինձ հետաքրքրում է մասնաւորապէս աշակերտների վիճակը. վարդապետը հաւատացնում է, որ նրանք մեծ մագամբ թիւրքահայեր են, կան եւ մի քանի ուսասհայեր: Հայ կաթուղիկ աշակերտներ Հոռմում միշտ եղել են, բայց նրանք նախկին տարիներում սովորել են միայն կաթուղիկ կրօններում եւ զուրկ են մնացել ազգային որեւէ կրթութիւնից: Այս վանքն իր շինութիւններով ձեռք բերելուց յետոյ, այտեղ հիմնել են մի դպրոց, որ կոչում է Լեւոնեան: Քսան աշակերտներ այտեղ ապրում են իրբեւ զիշերօթիկ եւ վարդապետների ձեռքի տակ ուսանում են հայերէն, հայոց պատմութիւն եւ հայկական երգեցողութիւն:

Ես ցաւում եմ, որ աշակերտները բացակայ են եւ անկարող եմ նրանց հետ տեսնուել: Սեղմելով հիւրասէր վարդապետի ձեռքը, մի ուղեկից հայրենակցի հետ հեռանում ենք վանքից:

Փողոցում հանդիպում ենք մի խումբ սեւազգեստ պատանիների: Նրանց վերարկուները արեւելեան ձեւ

ունին, լաճնորք թեւերով, ամէնքն էլ թուխ եւ օտար երկրում մորորուածի մտադբաղ տեսքն ունին: Արեւելցի են, կասկած չկայ, բայց հայե՞ր են արդեօք: Հոսմում արեւելցի աշակերտներ շատ կան զանազան կրօնական դպրոցներում: Նրանք քայլում են իրար յետեւից զոյլ-զոյլ. մենք անցնում ենք նրանց կողքից խօսելով:

— Ծօ՛, հայերէն կը խօսին, — բացադանչում են նրանք լսելով մեր խօսակցութիւնը, վայրկենապէս իրար են խառնում եւ մեզ շրջապատում շտապ. բազմաթիւ ձեռքեր են մեկնում դէպի մեզ:

Վանքի հայ աշակերտներն են:

Այո՛, «հայերէն կը խօսին», իմ խեղճ հայրենակիցներ. ձեր բացադանչութիւնը ո՛րքան դառնութիւն եւ ո՛րքան խոր ազդային ցաւ է պարունակում: Մեր աղիտալի պատմութիւնը, ինչպէս մի աշխարհաւեր մըրիկ, դուրս շարտեց հային դէպի աշխարհի բոլոր ծայրերը, ուր հայ երկրի դաւակը տարաւ իր հետ մի անցողական, ժամանակաւոր սէր դէպի իր լեզուն, մի տխուր, դունատ սէր, որ վաղ մաշուեց օտարի դունրում: Նրա ճակատը կնճռուեց իր երկրի կարօտով, բայց դէմքի մոռայլը երկարատեւ չեղաւ. նա շատ շուտ ընտելացաւ նոր պայմաններին, իր նոր կացութեան, նոր հայրենիքի եւ լեզուի խորթութեանը:

Հայը շատ տեղեր իր հայրենիքից դուրս հայերէն խօսեց եւ անցաւ. այժմ էլ շատ են հայեր, որոնք հայերէն են խօսում Եդիպոսում, դուցէ Հնդկաստանում, Եւրոպայի զանազան անկիւններում, հեռաւոր Ամերիկայում, բայց մինչեւ ե՞րբ, էլի քանի՞ տարի: Լեզուն ապրում է այնտե՛ղ, ուր ստեղծուել է. հայրենիքից դուրս՝ նա արմատախիլ բոյս է, որ մեռնում է թառամած:

Սե՛ղճ պատանիներ. նրանք զոյլ-զոյլ քայլում են Հոսմի Մէն-Նիկոլա փողոցով դէպի վեր, դանդաղ, յողնած քայլերով: Մռայլ են ու դունատ, կարծես ըզդում են, որ օտար են եւ մենակ այս բազմամբոխ քաղաքի մէջ, ուր ոչինչ, ոչինչ չկայ հարազատ, որ խօսէր սրտին, որ սրտամէր մանկութեան երազները, որ հայրենի յիշատակները վարթեցնէր:

Մէկիկ-մէկիկ նայում եմ այս դէմքերին, ինձ ընտանի դէմքերին, ծանօթ ու սիրելի: Հայ ցեղի դրոշմն են կրում վրաները, այդ սեւ յօնքերի տակ փայլող աչքերում վառում է ցեղի կրակը: Նայում եմ, ծանօթ եմ այդ դէմքերին նկարուած պատմական թախիծին, որ դարերն են դրել մեր ճակատին: Այդ յարատեւ մըռայլ ու յարատեւ յուսացող դէմքերը հայ ժողովուրդն են ներկայացնում, տառապանքի ու արցունքի մէջ անսրտչ կերպով յուսացող, հարուածների տակ ճկուն, հարուածելիս մտածկոտ, անվճռական, վարանոտ:

Պատանիներ են կանգնած իմ առաջ, բայց արդէն ծերեր են, մանուկ-ծերեր, որոնք իրանց կեանքի արշալոյսին արդէն ապրել են իրանց ցեղի ապրած ցաւոտ վերջալոյսը եւ կեանքի ճանապարհի հենց սկզբում արդէն յողնած են ու կռացած: Աղգային պատմութեան պակաս թողածը լրացրել է անհրապոյր, դաժան օտարութիւնը, եւ ես ցաւով եմ նայում այս դունատ պատանիներին:

Մենք արդէն բարեկամներ սեք. փոխադարձաբար սեղմում ենք իրար ձեռք մի ջերմութեամբ ու սիրով, որ կարօտի չեղտ ունի: Սօսելով նրանց հետ վերստին բարձրանում ենք դէպի վանքը: Քայլում ենք դանդա-

դուժեամբ, նրանք մեզ վրայ են թափում հարցերի մի տարափ. ամէնքը միասին են խօսում, որովհետեւ ամէնքն էլ խօսել են ուզում, երկար խօսել, հեռաւոր հայրենիքի մասին խօսել, հայ մարդու հետ խօսել:

Նրանք կ'ուզեն, որ մենք վերատին վանք մտնենք, որ ամբողջ օրն անցկացնենք իրանց հետ, մասնակցենք իրանց գրասանքին. այն ժամանակ ո՛րքան շատ բան կը հարցնեն, ո՛րքան շատ բան կ'ասեն, սրտերը կը բանան, դարկրի սրտերը...

Խեղճ ծաղիկներ, դունատ ու թօշնած. մենք անկարող ենք կատարել նրանց ցանկութիւնը, սեղմում ենք ձեռները եւ հեռանում: Նրանք նայում են հեռացող հայրենակիցներին, որպէս հայրենիքի հովիւր, որոնք սուրացին ու անցան, անյազուրդ թողնելով այրող կարօտը:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պապ.— Կաթողիկէ եկեղեցիին պետք, որ կը նստի Վատիկանի պալատին մէջ, Հոռմ: Այս պատմութիւնը գրուած թուականին, Պապը կը կոչուէր Լեոն ԺԳ. (1810 - 1903):

Բազմամբոյս.— Բազում (շատ) եւ ամբոյս (բազմութիւն) բառերէն կազմուած բարդ բառ. բազմութիւնը շատ, խիտ բնակչութիւն ունեցող:

Յարատւ.— Միշտ, շարունակ, տեւապէս:

Կոացած.— Մոած, վար հակած:

Անյազուրդ.— Չյաղեցող, չհշտացող:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ վեր առնել այս գրուածքին մէջ տիրոզ գգացումը: Խօսիլ Պապերու, Վատիկանի, Լեւոնեան դպրոցի մասին. ի՞նչ է անունը ներկայ Պապին: — Ինչո՞ւ ըսուած է «սեւագ-գեստ պատանի»: Ի՞նչ իմաստ ունի այստեղ այդ բառը: Հեղինակը առհասարակ ի՞նչ գգացում կը տածէ Հոռմի հայ աշակերտներուն հանդէպ, ի՞նչպէս կը բացատրէ անոնց կեանքը օտարութեան մէջ եւ ինչո՞ւ «խեղճ ծաղիկներ» կ'անուանէ զանոնք:

39. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ

1

1145 թուականի ամառն էր:

Կիպրոսի Սուրբ Մակար հայ վանքին վանահայրը, վանքի դրան դուրսի կողմը կեցած, կը խօսէր թիկնաւէտ, հաստաբազուկ եւ արեւէն սեւցած երիտասարդի մը հետ եւ շարունակ հարցումներ կ'ընէր: Թէեւ յայտնի էր, որ ախորժելի շէին իր առած պատասխանները, բայց դարձեալ զուարթ դէմքով գնաց ներս իր հիւրերուն ջով, որոնք նոյն առտուն փոքր ու սրննթաց նաւով մը հասած էին Կիպրոս, բիւզանդական պետութեան մայրաքաղաքէն:

Հիւրերուն գլխաւորը քսան-քսաներկու տարեկան երիտասարդ մըն էր. սուր, խոր ու սև, թափանցող աչքերով եւ երկար արտեւանունքներով. ղեռաբոյս ընչացք, Կանգուր մօրուք մը եւ զօրաւոր ու ջղուտ կազմուածք: Հագած էր պարզ ու անուական. իր ամբողջ կերպարանքին վրայ պարզութիւն մը կար դրոշմուած:

Վանահայրը ակնարկով պռանձին սենեակ մը հրաւիրեց իր հիւրը եւ արեւէն սեւցած երիտասարդը անոր ներկայացուց .

— Ահա՛, իշխան՛, այս տղան հիմա կը հասնի Կիլիկիայէն . ես չեմ կարծեր, որ գտնուի մէկը, որ ասոր չափ լաւ ճանչնայ այդ երկրին զանազան կողմերը եւ վիճակը : Եթէ ուզէք դարձեալ ամէն վտանդ դիմազըրաւել եւ երթալ, չեմ կարծեր, որ ասկէ քաջ, ասկէ լաւ եւ ասկէ հաւատարիմ առաջնորդ մը կարենաք գտնել :

Իշխանը ուշի ուշով տղան կը դիտէր, որուն բաց ճակատին վրայ անվեհերութիւն դրոշմուած էր . եւ իր նայուածքը կը յայտնէր, թէ մարդիկը, տարրերը եւ մահը արհամարհել զիտէր :

— Անունդ ի՞նչ է, բարեկա՛մ, — հարցուց :

— Սարգիս ծառայ, — ըսաւ տղան ձեռքը լայն կուրծքին վրայ դնելով :

— Ո՞րքան ատեն է, որ Կիլիկիոյ ափերը թողուցիր :

— Այս առաւօտ :

— Ի՞նչ նաւով էիր :

— Մեր նաւով . պզտիկ նաւ մը ունիմ :

— Դո՞ւն կը կառավարես նաւը :

— Այո՛ :

— Ուրեմն ի՞նչ պէտք ունինք ուրիշի դիմելու, երբ հայր սուրբը քեզ կը ճանչնայ եւ քու քաջութիւնդ ու տեղեկութիւններդ կը դովէ :

— Բայց իմ նաւիս թշնամին շատ է, իշխան՛, եւ բոլոր յոյներուն նաւերը զիս խեղդելու կ'աշխատին . ամէն կողմ զիս կը փնտռեն . ես ալ պահուելու համար հոս անցայ քանի մը օր :

— Զրսե՞ս, որ ընկեր ենք . անոնք զիս ալ կը փնտռեն :

— Այո՛, քեզ ալ կը փնտռեն :

— Ինչէ՞ն զիտես . ո՞վ եմ ես :

— Ես քեզ կը ճանչնամ տղայութենէս . ամէն օր մէկտեղ էինք քու հօրդ Վահկայ բերդը . Թաթուլին Սարգիսն եմ ես : Քիչ մը առաջ, երբ վանքին դուռը տեսայ քեզ, հայր սուրբը դեռ բան մը չըսած՝ «Թորոս իշխանն է» ըսի : Ես քանի տարի է ծովու վրայ ասպատակութիւն կ'ընեմ . հոռոմները իմ երեք նաւս այրեցին . ես անոնց քսանը կազդատեցի ու այրեցի . բայց տասնըհինգ օր մը կայ, որ պահպանութիւնը սաստկացուցին . մեր ծովերուն բոլոր ժայռերը, ծակն ու ծուկը կը քննեն, կը նային . Մամեստիայի իշխանին զօրքերն ալ սեւեւացին, անդամութիւնը շատցուցին . հայր ամէն տեղ կը հալածեն եւ կ'ըսեն, թէ ձեր իշխանը փախեր է բանտէն արքայական քաղաք . ա՛ն կը փնտռեն : «Ձեզ ամէնքդ ալ պիտի ջարդենք» կ'ըսեն : Ուր որ երկայն հասակով, սեւ աչքերով, սեւ յօնքերով երիտասարդ մը տեսնեն՝ կը կապեն Մամեստիա կը տանին . մեր լեռներն ալ այդպիսի մարդիկ չա՛տ . մինչեւ հիմա քսան-երեսուն մը տարին : Թէ որ անգամ մը ոտք կոխես հայրենի հողին վրայ, Աստուած վկայ, ամէնքը ոտք պիտի ելլեն : Բայց ծովեզերքի պահպանութիւնը խիտ է :

— Լա՛ւ, — ըսաւ Թորոս իշխանը զսհունակութեան ժպիտով եւ անոր ուսին հարուած մը տալով, — քո՛ւ նաւդ զիս պիտի հանէ Կիլիկիա : Ե՞րբ կ'ընանք մեկնիլ :

— Վաղը պէտք է, որ դառնամ եւ հոն պատրաստութիւններս տեսնեմ : Եթէ անկարծելի արդեւիք մը չհանդիպիմ, չորրորդ զիշերը հոս եմ . եւ նոյն իրիկունը ճամբայ կ'ելլենք :

— Ինչո՞ւ հիմա ճամբայ չելլենք մենք ալ միասին :

— Ես այնպէս կը կարծեմ, — ըսաւ Սարգիս զան-

դադելով, — թէ դուն չես ուզեր այդ... այդ պատանին, որ քեզի հետ է, հաս թողուլ, ուստի՝ դոնէ մէկերկու ջորի պէտք է ճարել, քիչ մը ճամբու պաշար ժայռերու մէջ տեղ-տեղ ծածկել եւ մէկ քանի տղայ ձգել հոն, որպէսզի որոշուած ժամուն կրակ վառելով մեզի ուղեցոյց ըլլան:

— Ապրի՛ս, դնա՛ պատրաստութիւններդ տես: Կարելի է ստակի պէտք կ'ունենաս, ա՛ռ, — ըսաւ եւ քրտակ մը երկնցուց անոր:

— Ներէ՛, իշխա՛ն, — ըսաւ Սարգիս ետ քաշուելով, — ես, փա՛ռք Աստծու, հարուստ եմ. քանի որ ծովուն վրայ հոռոմի նաւ կը պտըտի եւ ես ալ կը պտըտիմ, ստակի նեղութիւն չեմ դիտեր ի՛նչ է: Ուրիշ աղբի, Աստուած վկայ, դպած չունիմ: Անոնք մեզի ինչե՛ր ըրին եւ ինչե՛ր կ'ընեն:

2

Քանի մը օր ետք մուծը կոխեր էր արդէն, երբ վեց-եօթը հողինոց խումբ մը վանքէն ծովեզրը կ'իջնէր: Թորոս իշխանն էր եւ իր կիներ, որ այդ մարդու հաղուստներուն մէջ թարմ պատանիի մը կը նմանէր. անոր քովէն անբաժանելի Բարզէնը, Թորոսի հօր հաւատարիմը, որ Թորոսի ծառան, հոգատարը, ընկերը եւ հայրը եղած էր. անոր բանտարկութեան երկար տարիներուն: Անոնց հետ էր Կոստանդինը, Վահկայ բերդի երբեմնի բերդակալը, որ այդ բերդին դրաւումէն ետք իրրեւ գերի ծախուեր էր արաբներուն, փախեր էր, դարձեր էր Կիլիկիա, անցեր էր Պոլլիս եւ, երկար արկածներէ ետք, եկեր ու միացեր էր Թորոս իշխանին: Հիմա այդ խումբին կը միանար նաեւ վանահայրը եւ ծովահէն Սարգիսը:

Նաւը արդէն պատրաստ էր. եւ երբ ամէնքը մտան, բոլոր առապատները պարզեցին, եւ յաջող հովով նաւը սկսաւ սուրալ ծովուն վրայ: Չայն չկար ամենեւին, բացի Սարգիսի ձայնէն, որ երբեմն կարճ հրամաններ կուտար նաւաստիներուն, զեկին գլուխը նստած:

Կէս դիշերը անցած էր, երբ յանկարծ Սարգիս տեղէն ցատկեց.

— Տղա՛ք, — ըսաւ, — պատրա՛ստ կեցէք. նաւ մը կը տեսնեմ մեր ճամբուն վրայ. իջեցուցէ՛ք առապատները:

Անմիջապէս առապատները իջեցուցին. ճախարակներուն ձայնը հաղիւ կը լսուէր, այնչափ խնամով իւզուած էին: Թորոս կը նայէր, ըսոյց բան մը չէր տեսներ եւ ինքնիրեն կ'ըսէր, թէ մարդ պէտք է գիշերային թռչունի աչքեր ունենայ Սարգիսին պէս այս մութին տեսնելու համար:

Նաւը անցաւ հեռուէն, եւ շարունակեցին իրենց ճամբան անվտանգ: Լուսնալուն հաղիւ մէկ-երկու ժամ էր մնացեր եւ ահա՛ Սարգիս «փա՛ռք Աստծու» դռչեց. եւ երբ Թորոս պատճառը իմանալ ուզեց.

— Կը տեսնե՞ս սա դիմացի լոյսը, — ըսաւ, — որ մերթ կը տատանի խաչածեւ, ահա՛ մեր նշանն է. թըչնամի չկայ եւ մենք ալ մօտ ենք ցամաքին: Հա՛, տղա՛ք, թիւրուն ո՛ւժ տուէք, բացէ՛ք բոլոր առապատները:

Ամէնքը արթնցան. լոյսի առաջին ճառագայթները աղօտ լոյս մը ձգեցին ծովուն վրայ: Կէս ժամ ետք նաւը կը խրէր աւազին վրայ եւ վեց կերովի տղաք կը շրջապատէին դայն: Սարգիս, ծայրը կեցած, «սանդուխը դրէ՛ք» ըսաւ: Անմիջապէս սանդուխ մը դրուեցաւ նաւուն վրայ:

— Իշխա՛ն, — ըսաւ Սարգիս, — ահա՛ հայրերուդ երկիրը. քեզի կը վայելէ նախ ոտք դնել հոն:

— Յանուն ամենակարող Աստուծոյ,— ըսաւ թուրոս եւ ցատկեց դուրս: ձեռքը տուաւ կնոջը, որ սանդուխին դուռին էր:

Եւ հո՛ն, աւազին վրայ, այն փոքրիկ խմբակը, եկող ու դիմաւորող, ամէնքը մէկ իրենց ձեռքերը երկինք բարձրացուցին, հաւատարմութեան երզում ըրին Աստուծոյ անունով՝ մեռնի՛լ հայութեան եւ թորոսի համար:

ԾԵՐԵՆՑ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Թիկնաւաւ.— Լայն կոնակ ունեցող, լայնաթիկունք, թիկն՝ կոնակ:
- Հաստարագուկ.— Ամուր, ուժեղ րեզուկ ունեցող:
- Մայրաբաղաւ.— Բիւզանդական պետութեան մայրաքաղաքն է՝ Բիւզանդիանը, այժմու Պուլսը: Մայրաքաղաքին կ'ըսեն նաեւ արքայապահան, արքայանիստ քաղաք:
- Արանտանուկ.— Աշքին թարթիչները:
- Ընչաց՝.— Պէր:
- Դիմագրաւի.— Դէմ երթալ, դէմ դնել:
- Անվեկերութիւն.— Քաջութիւն, անվախութիւն:
- Ասպատակութիւն.— Արշաւանք եւ յարձակում կատարել կողպակու, թաւանելու նպատակով:
- Անկարծելի.— Ձկարծուելիք, անսպասելի:
- Ուղեցոյց.— Ուղի եւ ցոյց բառերէն կազմուած բարդ բառ էր. կը նշանակէ՝ ճամբայ ցուցնող:
- Բերդակալ.— Բերդը կառավարող ու պաշտպանող:
- Ծովահէն.— Ծովու վրայ ասպատակութիւն ընող:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւթը եւ ներկայացնել գործող անձերուն նկարագիրը, հետեւութիւններ հանելով անոնց խօսքերէն ու գործերէն: — Խօսիլ կիլիկեան շրջանի մեր գլխաւոր քաղաքներուն եւ կաթողիկոսներուն մասին. խօսիլ մահաւանդ թորոսի կեանքին եւ կատարած գործերուն մասին: — Քանի՞ դար տեսց մեր քաղաքութիւնը կիլիկիոյ մէջ. ո՞վ է անոր հիմնադիրը, վերջին քաղաւորը: — Ծերեցիցի ո՞ր վէպէն առնուած է այս կտորը: Ուրիշ ո՞ր հայ հեղինակները պատմական վէպ գրած են:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.— Ծովային նամրոդութիւն մը:

40. ՅԱՐԴԸ ԳՆՈՒՄ Է...

Նստած էի եւ մի օր մեր շեմին,
 Քեռիս ցորեն էր էրնում մեր կայում.
 Սարից փըշում էր աշնան գով քամին,
 Քամին քըշում էր ու յարդը տանում:

— Քեռի՛, — ասացի, — էդ ի՞նչ ես անում,
 Մեր ամբողջ յարդը տընեցիր քամուն:
 — Բան չըկայ, բալի՛կ, ի՞նչ ես վըշտանում,
 Յարդը գընում է, ցորենն է՛ մընում:

Ամէն քանի մէջ ես ամէն ժամին
 Քամին էրնում է ու յարդը տանում,
 Մեզ էլ էրնում է աշխարհի քամին,
 Յարդը գընում է, ցորենն է՛ մընում:



Մենք ողջ աշխարհն ենք էրնում լոյսից լոյս,
Յարդ ու ցորենը տալիս ենք քամուն.
Ու ես յիշում եմ խօսքերը քեռուս.
«Յարդը գընում է, ցորենն է մընում»:

էրնում եմ ես էլ երգերըս հիմի,
Իմ ամբողջ կալը բռնել եմ քամուն,
Ինչ որ չի մընայ, կը տամի քամին.
Յարդը գընում է, ցորենն է մընում...

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երանի.— Կամ երնել, ձեռնած կալը քամիին տալ ցորենը
յարդէն դատելու համար:

Բալիկ.— Փաղաքչական՝ որդեակ, որդի. կ'ըսուի նաեւ բա-
լայ, բալամ:

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ.— Բուն անունն է Խաչիկ Տոնոյեան: Ծը-
նած է 1910ին: Գլխաւոր երկերն են «Երգերի գիրք», «Գարնանա-
յին երգեր», «Բոց», «Տիգրան մեծ» (քառերախաղ 5 արար),
«Նուրիկան»: Ունի նաեւ անգլերէնէ թարգմանութիւններ: Զգա-
յուն բանաստեղծ է:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ինչի՞ մասին կը խօսուի
այս ֆերթուածին մէջ: Ի՞նչ ըսել կ'ուզէ հեղինակը
«յարդը գնում է, ցորենն է մնում» խօսքով. ի՞նչ փո-
խարեակամ իմաստ կայ այս բացատրութեան մէջ:
Ո՞րն է «աշխարհի քամին»: Ի՞նչպէս կ'ըլլայ «երգերը
էրնել». արդեօք երգերուն մէջ՞ ալ յարդ ու ցորեն
կայ. ո՞րն է յարդը այս պարագային եւ ո՞րն է ցորենը:

41. ՆԱՊԱՍՏԱԿԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

1

Առաւօտ կանուխ դուրս ելայ: Ստորուն, ծառե-
րուն փաթթուած, կաղամբի գոյնով, մատղաչ արեւ մը
կար: Արեւը հոտուըտացի, ետ առաջ երկնցայ, շա՛ուփ-
շա՛ուփ ականջներս իրարու զարկի: Զգո՛յճ, ազմուկ
մը: Իսկոյն տունս մտայ ու հսկեցի: Ոչինչ, թերեւ
տերեւ մըն էր վար ինկաւ: Նորէն դուրս ելայ, չորս
դէս նայեցայ ու հո՛ւփ, ցատկեցի բանջարանոցը:

Այս թռչունները ո՛րքան շաղակրատ են, Աստուած
իմ. հոս կը թռչին, հոն կը թռչին: Կըտ կըտ, կտուցնին
հոս կը զարնեն, հոն կը զարնեն ու թեւ-թեւի չզիտես
ո՛ր աշխարհը կը թռչին: Սիրտս դող կ'եւլէ, երբ անոնց
ստուերները յանկարծ ջովէս կ'անցնին, երբ ծառերէն
պտուղներ, թը՛փ, վար կը ձգեն:



Ո՛րքան կը սիրէի ես
 ալ ուրիշ աշխարհներ տես-
 նել: Է՛՛հ, եթէ ես ալ թըռ-
 չունի պէս թեւեր ունենա-
 յի, ունենայի նաեւ սա
 բանջարանոցի աքաղաղին
 ձայնը... Ի՞նչ կ'ըլլար,
 սա զեղեցիկ, արծաթեայ
 սնուչտակիս վրայ երկու
 լայն թեւեր ըլլային: Կը-
 տուց ունենալ չէի սիրեր.
 Իմ պոչս ճերմակ ծաղիկնե-
 րու փունջին չափ զեղեցիկ
 է: Կ'ուղէի լսիլ զո՛րք մը
 լայն թեւեր՝ բարձրէն թըռ-
 չելու եւ աքաղաղի զիւ ձայնով
 երգելու համար...

Հի՛, հի՛... Խնդուք չեմ կրնար
 զսպել, երբ սա
 անձոտ անձեղին ձայնը կը
 լսեմ: Իր փոքրիկ զոտոտ
 ձագուկները, բոյնէն զուրս,
 սա տանձենիին չորցած
 ճիւղերուն վրայ կը շարէ,
 ու ինք՝ մէջտեղը կեցած՝
 կը սկսի երգել — խէ՛, խէ՛:
 Երգած պահուն մարմինը
 ետ առաջ կը շարժէ,
 վիզը այնքան կ'երկնցնէ
 ու կը պո-
 աայ, որ կարծես կրկորդին
 մէջ խոշոր կեռաս մը
 կայ:

Հի՛, հի՛... Խնդուք կու
 վայ ամէն անգամ,
 երբ սա անձեղը կը տեսնեմ:

2

Կէսօր է: Ամէն դի խաղաղ:
 Մեղուները տակաւին
 աստղածեւ դդումի
 ծաղիկներուն շուրջ կը
 դառնան: Գլխուս վերեւ
 մժեղները պար կու
 ցան: Հեռուէն կը լսեմ
 միայն փայտփորին դըդ-
 — դըդ ձայնը ու ես,
 ա- կանջներս ետ առաջ
 ձգած, երեք ոտքերս
 ծալած ու

ետելի մէկ ոտքս
 երկնցուցած, դդումի
 լայն տերեւներուն
 տակ, աչքերս բաց,
 քնայայ:

Չգիտեմ ո՛րքան քնայայ:
 Յանկարծ ականջներէս
 կախուեցայ օդին մէջ:
 Ա՛հ, Աստուած իմ,
 բանջարավաճառին
 փոքրիկ տղան էր:
 Յնցուեցայ, ոտքերս
 լուրարու խառնեցի,
 վերջապէս ձեռքը
 խածի ու փախայ:
 Տղան սկսաւ լալ:
 Ա՛հ, այդ փոքրիկ
 դեւին ձեռքէն հա-
 դիւ ազատեցայ:

Այս առաւօտ կանուխ,
 տունէս քիչ հեռու,
 բանուկ ճամբուն
 վրայ տեսայ լեռներու
 պէս ետեւէ ետեւ շար-
 ուած ուղտերու կարաւան
 մը: Ամէն անգամ
 որ կ'անցնին անոնք,
 ինձի այնպէս կը թուի,
 թէ հսկայ ամպերն
 են, որ վար կ'իջնեն,
 ոտքի կ'ելլեն ու
 կարաւան կը կաղմեն:
 Սակայն ի՞նչպէս եւ ո՞ր
 տեղէն, նորէն վիզը-
 նին անկած եւ առջեւի
 երկու ոտքերնին ծալած,
 ետեւի ոտքերուն
 վրայ թափով դէպի
 երկինք կը ցատկեն:

Այդ հսկաները առանց
 թեւի ի՞նչպէս պիտի
 թըռչին, Աստուած
 իմ:

3

Գիշեր: Լուսնկան
 ո՛րքան լայն ու կլոր է,
 ա՛յնքան նման
 բանջարանոցի խոշոր
 դդումին: Արդեօք
 դդում մը չէ՞:
 Քիչ մը անօթի էի.
 ուղեցի Աղբար
 Թորիկենց բան-
 ջարանոցը մտնել:
 Կամաց մը պատէն
 վար նետուեցայ,
 ինձի հետ վար
 ձգելով ականջները
 անկած խղունջ մը:

Ուռենիի մը տակ,
 կլոր ու լայն սունկի
 մը վրայ պղզած՝
 տեսայ, որ կանաչ
 դորտ մը, աչքերը
 դուրս ձգած,
 լուսնկան կը դիտէր:
 Չի՞ն որ տեսաւ,
 սունկին տակ
 կորսուեցաւ յանկարծ:

Չգո՛յ՛, հեռուէն շատ
 մութ բան մը
 անցաւ ա-

րադ: Թերեւս ողի մըն է: Թուրքերուն տակէն անցայ կամաց: Հը՛ւշ, վտանգ կայ: Բանջարավաճառին կինը ճրագը դեռ նոր կը մարէր:

Այսօր արեւին տակ կը քալէի, երբ տեսայ, որ սեւ ու այլանդակ ոգնիի պէս բան մը ինծի կը հետեւէր: Սկսայ փախչիլ արագ: Ա՛հ, Աստուած իմ, անտառին ծառերը հսկայ բանակներու պէս ոտքի ելան ու հալառակ ուղղութեամբ սկսան արշաւ մը:

Այդ մութ կենդանին ո՛րքան արագ կը վազէ, ճիշդ ոտքերուս քովէն: Կանդնեցայ յանկարծ. կենդանին ալ կանդնեցաւ: Հոս ցատկեցի, հոն ցատկեցի, մինչեւ վերջապէս ստուգեցի, որ այդ այլանդակ կենդանին ուրիշ բան չէր, եթէ ոչ իմ ստուերս...

ՀԱՄԱՍՏԵՂ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Մատաղ.— Դեռատի, նոր ծագած (արեւ):
- Շաղակրատ.— Շատախօս, պարագ բաներ ըսող:
- Լոկ.— Միայն:
- Անձոտ.— Անիծ ունեցող. անիծը ո՛չիլին հաւկիթն է:
- Դի.— Կողմ. կը նշանակէ նաեւ դիակ:
- Փայտփոր.— Սեւ ու սպիտակ փետուրներով թռչուն մը:
- Կ՛ըսուի նաեւ ծառկոտիկ:
- Սառնկ.— Հովանոցի ձեւով անպտուղ բոյս մը, որ կ՛աճի խոնաւ տեղեր: Սունկեր կան որ կ՛ուտուին, կան որ թունաւոր են:

ՀԱՄԱՍՏԵՂ.— Բուն անունն է Համբարձում Կելեան: Երբնա՞ծ է Խարբերդի Փերչեմն գիւղը, 1895ին: Ուտումը ստացած է Խարբերդի մէջ, ապա մեկնած Ամերիկա, ուր հետեւած է հա-

մայաբանի: Գլխաւոր գործերն են «Գիւղը» եւ «Անճրեւ», «Այծեւտամար», «Աղօթարան», «Առաջին սէրը», «Քաջ Նագար եւ 13 պատմութիւններ»: Գրած է նաեւ վէպ մը՝ «Սպիտակ ճիւղերը», որ երկու հատորով հրատարակուեցաւ: Մեռաւ 27 Նոյեմբեր 1966ին, Մ. Նահանգներ: Մեծ յաջողութեամբ ներկայացուցած է գիւղը եւ գիւղացին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Կենդանիները օրագիր կը պահե՞ն. ինչո՞ւ ըսուած է հապա «Նապաստակի մը օրագիրը»: Ինչե՞ր կը պատմէ նապաստակը իր «օրագիր»ին մէջ: — Եթէ նապաստակին տեղ գայլ մը կամ վագր մը բլլար, ի՞նչ պիտի գրէր: — Ի՞նչ տեսակ կենդանի է նապաստակը. ո՞ւրտը, փի՞ղը, շո՞ւնը: Որո՞նք են այս կենդանիներուն գլխաւոր յատկանիշները: — Դուք օրագիր կը պահե՞ք:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Ներկայացուցէ՛ք մեր մէկ շարքումն կեանքը օրագրիի ձեւով:

42. Ո՛Ր ՏԱՅՐ ԻՆՁ...

1

Հայրս զինուոր դացած էր:
Աքսորի այն սեւ տարիներուն, կատուի ձագերու պէս մօրս փէշերուն կառչած, ես ու փոքր եղբայրներս կը թափառէինք թրքական գիւղակներու մէջ, Սեւ ծովուն եղերքը:
Ես ի վերջոյ Ատափաղար ինկայ:
Այստեղ էր, որ առաջին անգամ զգացի տան կաթոր. ի՛նչ կրակ էր այդ, ի՛նչ կրակ, որ կը խանձէր մատղաչ Հոգին:



Գիշերները կը քնանայինք կիսաքանդ տուներու մէջ: Ոստիկանութեան աչքէն հեռու տուներէն էին ատոնք, միակ ապաստանը, ուր կրնայինք մտնել պատասպարուելու համար գիշերը:

Երբեմն ցերեկները կը մտնէինք ամառի տուներէն ներս, կը խուզարկէինք դարակներն ու պատուհանները: Մէկ տարին լրացած չէր տակաւին աքսորը սկսուելէն ի վեր: Եւ հացին հո-

տը կը յամենար դեռ սենեակներուն մէջ: Երբեմն թեթեւ դիմաւորութիւն մը կը պատճառէին ուրիշ մտերիմ հոտեր, պահուած պտուղներու կամ սնտուկը դրուած թանկագին զգեստներու հոտեր:

Փակ պատասպարանի մը զրկանքը իմ մէջս հետըզհետէ կը սրէր տարօրինակ կարօտ մը տունի:

Կարօտս իր լրումին հասաւ, երբ սկսանք յաճախել յունական թաղը:

Երեք ընկերներ էինք, երեք «անապատան»ներ, որ միացիւր էինք փայտահատութիւն ընելու համար յունական փողոցներու մէջ: Մեր «ընկերութիւն»ը կազմուած էր հետեւեալ պայմաններով.

Երկու ընկերներս փայտ պիտի կտրէին, ես ալ բեռնակրութիւն պիտի ընէի՝ կտրուած փայտերը փոխադրելով տուներէն ներս: Աշխատանքի այս բաժանումը անո՛ր համար, որովհետեւ երկու ընկերներս կացին ունէին, իսկ ես չունէի: Յետոյ, — կ'ըսէին ընկերներս, — ես վարժ չէի փայտ կտրելու, շատ տա-

շեղ կը հանէի, ինչ որ դժուարութիւն կը պատճառէր: Ասկէ՛ դատ՝ կացինը քարին կը զարնէի եւ բերանը կ'աւրէի, մինչդեռ իրենք կացինի քանի մը հարուած կու տային եւ փայտը երկու կտոր կ'ընէին: Վերջապէս, «տիրացու» մը շատ-շատ կրնայ փայտ շալկել:

Ինծի «տիրացու» կ'ըսէին տեսակ մը հեղնանքով, որովհետեւ զարոց պայած էի:

Իրենք, երկու ընկերներս ալ, նախկին հովիւներ էին, մէկը՝ Միրական կը կոչուէր, բայց մենք սովոր էինք զինք կանչելու՝ կրկնելով իր անունին վերջին վանկը, կակապելու ձեւով մը, որովհետեւ կը կակապէր քիչ մը: Արդէն Կահան կը կոչուէր իրենց ամբողջ զերգաստանը:

Միւս ընկերս մեծղի էր քիչ մը, ոսկրուտ, քարսիրտ եւ անզուլ: «Ղաղ» կը կոչէինք զինք, թերեւս կարծեցնելու համար իր անունը, որ Ղազարոս էր, բայց աւելի շատ՝ բնորոշելու համար իր նկարագրը, որովհետեւ անզոյց եւ կենդանական բան մը ունէր:

Առաւօտները կանուխ կանցնէինք յունական թաղէն, զորձ փնտռելով փողոցներուն մէջ: Եւ ատոր համար պէտք էր պոռալ պատուհաններուն առջեւ:

«Ղաղ»ը ո՛րքան կը վայեցնէր իր ձայնը.
— Օտուն ֆեսէ՛ր...

2

Ինծի համար հաճոյք մըն էր, այդ շրջանին, անօթի փորով երթալ զխտել ծխանի ծուխը Սըրա Ռանբուռ տանիքներուն վրայ:

Կաղանդի առաւօտ մըն էր, կը յիշեմ դեռ:

Անձրեւ էր եկեր գիշերը: Թրջուած են ցանկապատերը, ծառերը: Յուրա հով մը կը խածնէ երեսներս: Թրքական դերեզմանին պատին տակ կծկտած՝ կը դի-

տեմ ծխանի ծուխը, որ կը խաղայ տանիքներուն վրայ: Տարօրինակ դիտովութիւն մը անդամալուծեր է դիւ, կը մերժեմ դործիս երթալ. թող մնամ այսպէս, թող մնամ, կ'ըսեմ ինք իրենս: Թէեւ ջուրի մէջ են ոտքերս, սակայն հաճելի ջերմութիւն մը կը շատնայ մարմինիս մէջ:

Ու կը մտածեմ հայ թաղաւորին մասին, որ ինձի պէս երգեց կարօտը համեստ տան մը ծխանի ծուխին եւ նաւասարդեան առաւօտին.

Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի...

Ահա, թաղաւորս իմ, նաւասարդեան այս առաւօտուն, քեզի պէս կարօտն ունիմ ծխանի մը ծուխին:

Անտուն եւ անապաստան, զրկուած՝ իմ բնակարանէս, իմ երգիքէս, իմ հողերէս, իմ հարստութենէս, իմ ծննդավայրէս, շատ բան չեմ ուզեր հիմա, ո՛վ Կաղանդ, տո՛ւն մը կ'ուզեմ միայն հանդիստի եւ աշխատանքի համար, երազի եւ ստեղծագործութեան համար, տո՛ւն մը ծաղիկներով բեռնաւոր եւ հորովէլներով թրթռուն, տո՛ւն մը՝ որ մերն ըլլայ եւ ուրկէ ոչ ոք կարենայ վռնտել մեզ, տո՛ւն մը ճարճատուն օջախով, որուն բոցերուն դէմ նստէի եւ դիրս գրէի, ցեղիս ստեղծագործութիւնները կարգայի, տո՛ւն մը՝ սերկեւելի անուշահոտութեամբ լեցուն եւ նոան դինիով յորդուն, տո՛ւն մը, ուր սեղան շտկենք ցորեն հացով եւ արդար իւղով:

Տո՛ւն մը տուր, Կաղանդ, տուն մը, որուն պատուհանին առջեւը, ոչխարի մորթի մը վրայ նստած, արեւին դէմ կուրծքս բացած, երգէի նաւասարդեան առաւօտներուն փառքը:

Տո՛ւն մը տուր, Կաղանդ, տո՛ւն մը տուր մեզի կամ վերադարձուր մեր տունը...

ՇԱՒԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ո՛ր տայր ինձ.— Արտաշէս Բ., օտարութեան մէջ մեռնելու ատեն, կը յիշէ հայրենիքը, հայրենի օճախը եւ կ'ըսէ. «Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի» եւ այլն:

Ահար.— Ակնարկութիւն հայկական տարագրութեանց, 1915ին, Թուրքիոյ մէջ:

Յամեմալ.— Ուշանալ, ուշ մնալ:

Լրում.— Լմնալ, լրանալ:

Օտուն քեւեր.— Թուրքերէն բառ. փայտ կը կտրէ:

Մխան.— Մինելոյդ:

Նաւասարդ.— Հայկական տոմարի առաջին ամիսը, որով կը սկսէր նոր տարին: Հին ատեն նաւասարդը կը տօնէին մեծաւուր հանդէսով:

Հորովէլ.— Արտը վարելու ատեն երգուած երգ, որուն մէջ յաճախ կը կրկնուի հորովէլ բառը իբրեւ յանկերգ:

ՇԱՒԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ.— Բուն անունն է Շաւարշ (Ասամազ) Այվազեան: Ծնած է Արմաշ (Թուրքիա), 1898ին: Ուսումը ստացած է ծննդավայրին եւ Ատափազարի կեդրոնական վարժարանին մէջ: Իբրեւ բժիշկ վկայուած է Փարիզի բժշկական համալսարանէն: Խմբագիրն էր «Հայ բոյժ» ամսաթերթին: Գլխաւոր երկերն են «Մեղեդիաներ», «Մեղեդիաներ...», «Նրուսադե՛մ, նրուսադե՛մ...», «Բաներ», բաներ, ի՛նչ բաներ...», «Կանաչ բաժակով», «Ջրվեժ» եւն.: Մեռաւ 25 Յուլիս 1968ին, Մարտլի: Ունի մահուր ու խնամուած լեզու եւ առոյգ ու ինքնատիպ ոգի:

ԹԵԼԱՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել ճիշդը եւ ներկայացնել հեղինակին ապրումները, թափառական կեանքը, ապրուստ մը մարելու համար կատարած աշխատանքը: Խօսիլ իր ընկերներուն մասին, գծելով անոնց բնատրուքեան յատկանշական կողմերը:— Յիշել Արտաշէս թագաւորի վերագրուած խօսքերը եւ անոր

մասին Գողթան երգիչներու յօրինած երգերը: Կարգալ աչդ երգերը եւ խօսիլ Գողթան երգիչներու մասին: — Ի՞նչ կը խնդրէ հեղինակը Կաղանդէն. ինչո՞ւ այնքան խոր է իր մէջ տան կարօտը: Նոյն բանե՞րն են տան սէրը եւ տան կարօտը:

Ծանօթ.— Ահա Արտաշէս Բ.ի վերագրուած խօսքը ամբողջութեամբ.

*Ո՞ր տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվաղելն եղանց եւ զվաղելն եղջերուաց.
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք,
Ինչպէս օրէն է թագաւորաց:*

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հակամիշ կը կոչուին այն բառերը, որոնք իրարու հակառակ նշանակութիւն ունին. օրինակ՝ ֆաղցր – լեղի, մեծ – պզտիկ, լայն – նեղ: Բազմամիշ կը կոչուին այն բառերը, որոնք նոյն ձեւով կը գրուին, բայց տարբեր նշանակութիւն ունին. օրինակ՝ սան – սան (աշակերտ), հաւ – հաւ (մեծ հայր):

43. ԼԵԶՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

Լեզուն, որով գրեցի, երկրի երեսը փչեք
Կը կարգային զայն արդէն ու պակսեցան անոնք ալ...
Հարիւր տարի վերջ միայն, իր այս ձեւով, այս սքիսալ
Կամ նիշդ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անոյշ, գոր խօսեք
Էին անոյշ սղափներ, գուցէ խօսող չունեմայ.

Եւ ֆերթուածները, որոնց մէն մի բառին ու վանկին
Վըրայ եւ սիրտ հասցուցի, գուցէ անկիւն մը պառկին,
Առանց որ մէկը դընէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...

Տէ՛ր, ցաւ մ'ալ ա՛յս է հիմա, ցաւերէն ետք անհամար,
Որոնց մէջէն անցնելով, որոնցմէ շիք մ'ստանելով
Եւ կազմեցի այս ստղերն ու հոս դըրի ֆոյլէ ֆոյլ...

Զի եքէ միշտ եւ միայն երգած եմ եւ ինձ համար,
Զիս ըստփած եմ նաեւ՝ մըտածելով, քէ խոցուած
Հոգիս կրնայ իր երգով ըստփե՛լ սիրտը ումանց...

ՎԱՀԱՆ ԹԷՔԵՆԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շիք.— *Կաթիլ:*
Խոցուած — *Սոց՝ վէրք, խոցուած՝ վիրաւորուած:*

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Շեշտել հեղինակին անհուն սէրը հայ լեզուին հանդէպ: Ո՞րն է իր մեծ ցաւը. բայց ի՞նչն է, որ կը սփոփէ զինք: Պէ՞տք է յոռետես ըլլալ հայ լեզուի ապագային մասին: Ի՞նչ պայմաններ պէտք են, որպէսզի լեզու մը ապրի եւ զարգանայ:

44. ԹԱԹՈՒԼ ԵՒ ՏՈՒՂՐԻԼ

Աշխարհը մե՛ծ է, — հիւսիսից հարաւ, եւ արեւելքից արեւմուտք, եւ երկրից երկինք:

Աշխարհում ապրում էր մի ժողովուրդ, որ կայ ե՛ւ հիմա:

Լեռնայիններում նա ցանում էր հաց, դաշտերում՝ խաղող, երգ էր հիւտում պանդուխտ հայի մասին եւ երկաթաղորով շարադրում էր իր անցած ճանապարհի երկար պատմութիւնը:

Բայց աշխարհում ապրում էր Տուղրիլ սելճուկ արքան, որ սուր էր ճօճում ճամբամիջին եւ տէգ էր խաղացրնում կեռ մատները մէջ. ասպատակում էր աշխարհում հիւսիսից հարաւ, եւ արեւելքից արեւմուտք, եւ փոշին ամպ դարձած բարձրանում էր երկրից երկինք:

Հնարանները նրան կոչում էին մե՛ծ, կոչում էին տէ՛ր եւ արքայ, եւ բախտաւոր էին համարում Տուղրիլ արքային:

Քաղաքից քաղաք եւ գիւղից գիւղ էր մտնում զօրքը Տուղրիլ արքայի, եւ զօրքի առջեւից քայլում էր որդին Տուղրիլ արքայի, — միակ որդին, որ հօր հետ անցնում էր բոլոր կռիւների միջով:

Աշխարհը մե՛ծ է շինականի համար, սակայն չընչին է, երբ արքան է անցնում ուղի աշխարհով:

Ու երբ նեղ եկաւ աշխարհը Տուղրիլ արքային, նա թեքեց ճանապարհը, եւ մարտի փող հնչեցրեց եւ մըտաւ Հայաստան:

Անցնում էր զօրքը Տուղրիլ արքայի Հայաստան երկրով. այլու՞մ էր հացը լեռնալանջերում եւ դաշտերում արորում էր խաղողը, մարում էր երգը պանդուխտ հայի մասին, որով խոցուածի համար սպեղանի էին շինում համափիւռ ծաղկից, եւ կուում էին վահան, ե՛ւ տէգ, ե՛ւ սուսեր...

2

Ու երբ պահը հասաւ, կանգնեց Թաթուլ սպարապետը հայոց զօրքի առաջ, եւ կուռի կոչ արեց, եւ տալաւ նրանց Տուղրիլ արքայի ընդդիման:

Լանջ — լանջի եկան ղիսուորներն իրարու, կիրճից կիրճ անցան եւ դաշտից դաշտ, եւ գլորուեց կռիւը քաղաքների կողքով եւ շամբուտների միջով, եւ հասաւ ճամբաների վերջին:

Այստեղ մարտն էլ վերջին: Հեռում դեռ ծխում էին աւերուած քաղաքները, եւ աւաններն արդէն անպարիսպ, եւ գիւղերը, որոնց անուաններն էին մնացել Հանդող կրակների ներքոյ:

Էլ չէր գիտնում սիրտը Թաթուլի. դէմից կանչում էին օջախները հանդած, եւ զօրքը յետեւից առաջ էր մղում Թաթուլին, եւ սուրը պարզում էր մի վերջին դարկի համար:

Ու երբ իրիկունն իջաւ, Թաթուլն ընդդէմ կանգնեց Տուղրիլ արքայի որդու, եւ սուրը Թաթուլի մըրուեց կոթերձը Տուղրիլ արքայի որդու, եւ փշուռեց այնտեղ...

Փլուեցին հօր սրտի կանդուն ու կուռ ամբուսիւնները. սիրտը դարձաւ անպարիսպ մի քաղաք, որ թշնամին կարող էր ամէն կողմից խուժել եւ գրաւել: Տնքաց ծեր սելճուկը, եւ ծեծեց գլուխը, եւ սեւ

Թաշկինակ փաթաթից թուլացած բազիլին, մինչ սիրան ամբացաւ յոյսով, թէ կենդանի կը մնայ որդին:

Այն ժամանակ նետեց իր արկանը Տուզրիլ սելճուկ արքան, եւ արկանը փաթաթուեց կրծքին անդէն Թաթուլի, ուրբուեց եւ տապալեց գետին:

3

Տուզրիլ նահանջեց:

Թռչում էր ծուստուած զօրքը Տուզրիլ արքայի, անցնում էր ինչպէս ստուեր, տանում էր տիրոջ վերաւոր որդուն, եւ քարշ էր տալիս հետիտան, շղթա-յակապ Թաթուլին:

Ձին ձուռն էր պարանոցին կապուած շղթան եւ ցաւեցնում էր սէլ պարանոցը Թաթուլի, եւ քարերը մաշում, արնոտում էին մերկ ոտքերը Թաթուլի, արիւնը լերդանում էր բարկ արեղակի տակ, փոշու մէջ, բայց յաղթողի հպարտ քայլուածքը անպակաս էր մնում նրանից:

Ու երբ զօրքը ելաւ Հայաստան երկրից, շունչ առաւ Տուզրիլ արքան, եւ վիրաւոր որդուն ցած բերեց Թամրից, եւ հրամայեց հանդոտանալ, եւ հրաման արձակեց իր մօտ բերել Թաթուլին:

— Հասաւ ժամը մահիդ, Թաթուլ, — ասաց արքան:

— Զարդուեց, փախաւ քո զօրքը, եւ փախար դու, Տուզրիլ, եւ մնաց աղատ իմ ժողովուրդը, — պատասխանեց Թաթուլը:

— Իմ ձեռքումն է քո կեանքը, Թաթուլ, — ասաց Տուզրիլ արքան, — եւ եթէ ապրի որդիս՝ շուտ եւ հեշտ մահու կը տամ քեզ. թէ մեռնի՝ հպարտ տանջանքի միջով, հպարտ մահի մէջ կը թաղեմ հպարտ մարմինդ:

— Ե՛ս եմ խոցել որդուդ, — պատասխանեց Թաթուլը, — եւ եթէ իմն է զարկը, ապրելու չէ:

Եօթնադանեայ դնդանում փակեցին Թաթուլին, եւ դամեցին շղթաներով ոտքերն ու ձեռքերը Թաթուլի, մինչ երկաթը կերաւ մաշկը եւ խրուեց մարմնի մէջ:

Անցաւ նորից մի ցերեկ, եւ կրկին մի դիշեր, եւ վերստին մի օր, մինչև իջաւ մթնշաղը, եւ դիշերը նայեց չար աչքի պէս:

Յետոյ սեւ ու մութ ամպեր կուտակուեցին, եւ հեռում անձայն փայլատակեց ամպրոպը, ապա մօտենալով՝ ճեղքեց երկինքը հորիզոնից հորիզոն, մինչ յորդեց հեղեղ անձրեւը, եւ քամու հետ մոլեգնած՝ հանգ-ցրեց դեռ բոցկլտացող խարսիկները կրակները:

Անձրեւը կտրուեց, եւ օդը յտակացաւ, եւ ամպերն անէացան լուսաբացի տօսջ:

Ու երբ առաւօտը բացուեց, մեծ հարիւրապետը դնաց Տուզրիլ արքայի մօտ, եօթն անգամ ծոնկի եկաւ իր տիրոջ առջեւ, եօթն անգամ եօթը կեանք եւ եօթը բիր յաղթանակ մաղթեց արքային, եւ երբ եօթն անգամ խոնարհուեց մինչև նրա մաշկինների ծայրը, շտկեց կեռացած մէջքը եւ ասաց.

— Ո՛վ արքայ, հղօ՛ր Տուզրիլ, աւելի լաւ է այս կեանքից զէնքի խոցով հեռանալ, քան հանդարտ մահով: Անմահ են պատերազմում մեռնողները... Որդիդ մեռաւ այս դիշեր...:

Կուչ եկաւ Տուզրիլ արքան, եւ ցնցուեցին դիմադծերը, եւ մի աչքն անվերջ խաղաց, փոքրացաւ եւ դարձաւ կիսափակ, եւ միւս աչքը ձուռեց եւ բացուեց սառն ճերմակութեան մէջ, լայնացաւ եւ մնաց լճացած ու անթարթ:

Իսկ վրանի առաջ երդում էին հպատակները, եւ մեծ էին կոշում նրան, եւ կոշում էին տէ՛ր եւ արքա՛յ, եւ բախտաւոր էին համարում Տուզրիլ արքային:

4

Այդ ժամանակ, տիրոջը սիրտիկուց ցանկութեամբ, հարիւրապետը մետաքսի մի փաթեթ նետեց Տուզրիւ արքայի ստեղծի առաջ, եւ ծալ առ ծալ ետ տուեց աւարտէ ծոյկերը, եւ բացեց մինչեւ վերջ...

Սրով հատուած մի բազուկ էր մետաքսի մէջ, կուշ եկած երկաթէ մատներով, ասես՝ նա ինքն էր, որ դեռ սուր էր պահում այդ մատներով:

Եւ հարիւրապետը նայեց տիրոջ ծամածուռող դէմքին, եւ խոնարհուեց նրա առաջ, եւ ցոյց տալով հատուած ձեռքը, տասց.

— Մի թարուիր, արքայ, թոյլ եւ վախկոտ չէր այն մարդը, որի ձեռքով մեաւ քո որդին: այս դեպագուն բազուկն էր նրան սպանողը:

ՎԻԳԷՆ ԽԵՉՈՒՄԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարուլ վանանդեցի.— Գաղիկ Արբասեան թաղաւորին ըստ պարտաւոր, որ պատերազմի մէջ վիրաւորած էր պարսից Ասուրան իշխանին որդին: Տուզրիւ կտրել տուաւ թաթուլի աջ ձեռքը եւ դրկեց Ասուրանին՝ ըսելով. «Որդիդ վատ բազուկէ մեռած չէ»: Հեղինակը փոխած է պատմութիւնը եւ Ասուրանի որդին կը ներկայացնէ իբրեւ Տուզրիւի որդին:

Տուզրիւ.— Սելճուկեան թուրքերու իշխան, որ վերականգնեց պարսից թաղաւորութիւնը 1021ին: Հայաստան արշաւեց Գաղիկ Բ.ի օրով եւ աւերակ դարձուց երկիրը: Մեռաւ 1063ին:

Հաց.— Այստեղ գործածուած է ցորեն իմաստով:

Տէգ.— Նիզակ, մկուռ:

Կեռ.— Ճանկի ձեւով, ծալրը կոր, ծուռ: Կեռացած՝ ծուռ:

Թեկի.— Մռել, շեղել:

Մարտ.— Կսիւ: պատերազմ:

Տրտրել.— Ճմլիկ (սաքոյ): կոնկուտել:

Համափիւ.— Ամէն կողմ ստրածուած:

Բնագիւման.— Գէմ, ընդգէմ:

Շամբուս.— Երկնայեալ. կ'ըսուի նաեւ շամբ:

Արկան.— Հաստ շուտն, սրտուն:

Խուստուած.— Կտար — կտար, պատուա — պատուա, ցղիկ — րղիկ եղած:

Զգիւ.— Այստեղ կը նշանակէ քաշել:

Սէգ.— Հպարտ, գոտղ:

Պարանոց.— Վիշ:

Մաշկ.— Մտրի՛, կաշի:

Մաշիկ.— Կօշիկ:

Ծոպ.— Երփո:

Հոտուած.— Կտրուած:

ՎԻԳԷՆ ԽԵՉՈՒՄԵԱՆ.— Ծնած է 1916ին: Կ'ապրի երեսն է կը գրադի գրականութեամբ: Միջին սերունդին լաւագոյն արձակագիրներէն է: Առաւելարար մշակած է վիպական սեռը: Իր գլխաւոր գործերն են «Ջուարբնոց» (պատմութեամբ) եւ «Մեզ մօտ հարաւուր» (վէպ) երայն:

ԹԵԼԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել նիւրը ըստ հեղինակին եւ ըստ հայոց պատմութեան. ցոյց տալ տարբերութիւնները: — Վեր առնել թաթուլի եւ Տուզրիւի յատկանշական կողմերը: Խօսիլ այն շրջանի մասին, որ տեղի կ'ունենային այս գրուածքին մէջ յիշատակուած դէպքերը: Այս առթիւ ընթերցումներ ընել հայոց պատմութեան:

45. Կ Ո Վ Ո Ի Ն Գ Լ Ո Ի Խ Ը

1

— Հերի՛ք ուտէք, տուն աւրողներ, հերի՛ք: Յարդր ձերը չէ նը, մարա՞դն ըլ ձերը չէ:

— Այա՛, բրդոն մ'ըլ տուր, Ի՞նչ կ'ըլի:

Երկու տղաք են. եղբայրներ: Հասակինն թիղ մը, շատ — շատ՝ թիղ ու կէս:

Ո՛չ դպրոցին ճամբան կը ճանչնան, ո՛չ ալ ժամուն:

Ամառ ատեն, ատառ կէսօր, փողոցին անկիւնը կամ դրացի առուին մէջն ու քովերը կը խաղան:

Շարաթը անգամ մը երկուք, երբ սաղարին ձայնը աննեն տունին ներսերէն, խօսքերնին մէկ, մտքերնին մէկ, քը՛ստ, դուռնէն ներս կը սողան ու մօրերնուն քովն ի վեր կը բուսնին:

Տանտիկինը, նստուկ, դըզըր — դըզըր միս կը ծեծէ կոճղին վրայ: Հուճա՛, սիւնին մօտ, սեւ կատու մը նստած է, պեխերը սրած, աչուրներն ու ախորժակը լարած:

Սաղարին դըզըրտոցը կը կտրի յանկարծ: Տանտիկինը կոճղին մատ քերուքը գնդիկ կ'ընէ ու կատուին ճանկը կը նետէ: Վայրկեան մը կ'անցնի. տանտիկինը պղտիկ տաշտին առաջը կը նստի ծունկերուն վրայ: Թեւերը սթառուած են, արժուկները կը շողան:

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած



Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

Տղաքը սուր աչուրներով կը դիտեն նոր ծեծուած

միսին կարմրուկ գունդը, որ տաշտին յատակը կը հանդէի պահ մը, կրիայի մը պէս, որուն գլուխն ու տոտիկները պատեանէն ներս քաշուած են: Յեցկուած ստի ու մազտանոս, սաթի զոյնով եւ աւազի պէս բարակ պուլղուր եւ ջուրի վայրկենական տարափ մը իրարու ետեւէ տաշտին դերկը կը տեղան անա:

Տանտիկինին ջղուտ ու ճկուն մատները արագ-արագ կը խառնեն տաշտին միջուկը, բուռնցքները կը շողեն ու կը ճմլեն վարպետ շարժումներով, կլորիկ, դիրուկ կոնակը կը ծոխ ու կը շտկուի շտրհալի ելեւէջներով: Ու խըյման զոյն կ'առնէ, կը բլրանայ:

Տղոց բերուրնուն ջուրերը կը վազեն, աչուրները կը կայծկլտան: Մէկը միւսը կը մխտէ կոնակէն...

— Էս անգամ ըլ գո՛ւն ուղէ:

— Չէ՛, գո՛ւն ուղէ:

Լուսթիւն մը, որ ակնթարթ չի տեւեր: Մանկական ձայն մը կը թռչի նորէն, այս անգամ աւելի անհամբեր, աւելի աղաչական.

— Այա՛, քչիկ մը խըյմա կու տա՞ս:

Այան քարէ սիրտ չունի շիտակը: Թըյմայի բրդոն մը կը փրցնէ, մատներուն մէջ կը սեղմէ, երկուքի կը բաժնէ եւ կը տեղաւորէ հացի կտորներուն վրայ, զոր մանկական զոյք մը ձեռքեր իր քթին տակ բռներ են յամառ ու սրտառուչ կարկառումով մը:

— Նորէ՛ն տուր, այա՛, նորէ՛ն:

— Ինձի պակաս տուիր էս անգամ:

2

«Եթէ էսպէս երթայ», կը մտտայ տանտիկինը շուարած, «տաշտ մը խըյման ամբողջ փորերնին պիթիսն ու վա՛յը պիտի փաթթեն իմ գլխուս»: Այային անոյշ աչքերուն մէջ քացախ կը քմեն յանկարծ, ձայնը կը կծուընայ:

— Հերիք չեղա՞ւ, շան բուտեր, յարդը ձերը չէ նը, մարս՞ոյն ըլ ձերը չէ:

Անկուշտ ակորժակը խօսք չի հասնիսք սակաջն: Եւ տանտիկինը, ճարահատ, նոր դիւտ մը կ'ընէ:

— Եթէ իր յամն շատ ուտէք, կոյժը փորերնուդ մէջ կը պոսոյ հա՞: Ինծի չէք հաւատար նը, դացէք հեղ մը սեյէին տոկ նայեցէք, սեյէին տա՛կ:

Տղոց մտքին մէջ փշոտ կտակած մը կը բուռնի ու վախը իր սեւ ու սուր ճանկերը կը գայարէ յամբօրէն: Կը փութան կողովին մօտ, որ ղլխիվար պառկեր է մառանին մէջտեղը: Երկու գոյլ մանր ձեռքեր կամա-ցուի մը կը վերցնեն կողովին թանճը պակուսքը: Ու ի՞նչ տեսնեն ազէկ. կոյի ղլուխ մը, իրաւ, կալի ղլուխ մը, քօփն ալ չորս հատ տատիկ: Գլխուս սեւ ու կիտա-բայ աչքերէն ահարկու մթութիւն մը կը հոսի, փշոտ լեզուն գուրս ինկեր է կողմնակի, ակտաներուն ուրջու-նը զայն սեղօներ ու կղզիներ է պինդ մը: Հաստիկի վիզը արկնատ մաղկերով շաղախուած է, եւ կոտոշները ըս-պառնական սրտոջիներ կը տնկեն:

Տղաքը ստքի վրայ գամուած կը գիտեն: Աչքեր-նուն տակ, ի՛նչպէս կ'ըլլայ, կոյին ղլուխը շունչ կ'առ-նէ կարծես: Տատիկները իրենց անդերը կը բռնեն: Ա-կանջները կը շեշտուին, կոտոշները կը ցնցուին: Ծը-նօտներուն քար կապանքը կը քակուի ահռելի փեռեկ-տուժով մը, եւ ամբողջ նախիր մըն է, որ հող, մա-ռանին ստուերտտ առիջին տակ, ստքի կ'ելլէ ու կը յառաչէ մէկ բերան. — մմօօ'օ...օօ'օ...

Տղաքը տունէն դուրս կը նետուին ու ճինի պէս կը ցնդին: Տանտիկինը զթին տակէն քրքր՛ւր — քրքուր կը խնդայ, ղլուխը կ'երեքցնէ վեր ու վար եւ քիւֆթէ-ները կը կտրէ հատիկ-հատիկ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այա.— Մեծ մայր կամ մայր:

Բրդոն.— Հացի կամ միսի մանր պատտ, կտոր, բրդուն:

Սաղըր.— Թուրքերէն բառ. միս ծեծելու լայնաբերան դանակ:

Հունա.— Գաւառական բառ, հոն:

Յեցկուած.— կտոր — կտոր եղած, մանր մասերու բաժնը-ւած, սոխ ցեցկել՝ սոխ շարդել:

Շաղիլ.— Շաղուել, ձմել:

Կարկառում.— Ձեռքը երկարել, երկնցնել:

Բմիլ.— Քամիլ. քացախ քամել աչքերուն մէջ կամ երեսէն քացախ վազել՝ փոխաբերար կը նշանակէ թթուած երես:

Բուս.— Անասուններու կեր, ուտելիք: Շան բուս՝ փոխա-բերար կը նշանակէ շունի կեր ըլլաք, շունը ուտէ ձկն:

Սելէ.— Թուրքերէն բառ. լայնաբերան կողով:

Աքցամ.— Կամ աքծան, երկաթէ դործիք՝ բան մը ամուր բռնելու կամ դուրս քաշելու համար:

Պարոյլ.— Ոլորակ, եղջիւր՝ օղի ձեւով:

Փեռեկտում.— ձեղքուել, պատուիլ:

Առիւ.— Առաստաղ, ձեղուն:

ԲՆԵՆԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ.— Ծնած է հարբերդի Հիւսեմիկ ցիւղը, 1897 թուականներուն: Ուսումը ստացած է ծննդավայրին մէջ, ապա Ամերիկա՝ Նիւ Եորքի Գորմպիա համալսարանը: Խմբագրած է «Նոր գիր» գրական պարբերաբերքը: Իր գլխաւոր գործն է «Այգեկութ»: Անգլերէնէ թարգմանած է «Իշխանն ու մուրացիկը» վէպը: Ունի նաեւ ուրիշ գրուածքներ եւ թարգմա-նութիւններ, որոնք հրատարակուած չեն առանձին հատորով: Իր լեզուն կը կրէ գաւառիս դրոշմը:

ԹԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Պատմել հիւրք եւ եր-կայացնել գործող անձերը: Գիւղի բարբեր ու սպորու-րիւններ սրուած են այս գրուածքին մէջ: Պահուած են հիմա այդ բարբերը: — Նկարագրել կովին գլուխը: Վերլուծել տղոց միասնութիւնն ու սնահաւատութիւնը:

46. Զ Ո Ի Ր Ծ Ա Խ Ո Ղ Ը

Ձեռին բռնած կուժ մի պուճուր՝
Ջուր կը ծախէր, միշտ սառը ջուր,
Այն քույս ու ժիր տրդամ պուճուր:

Եւ օրն ի բուն մըտած շուկայ՝
Նըրա ձայնն էր միշտ ղոզանջում,
Ծարաւներին ջրրի կանչում:

Ա՛խ, այդ ջրրի ձայնը վըկայ,
Եւ էլ էի այդպէս կանչում,
Բայց իմ ձայնը չէր կարկաչում:

Խըմում էին ու... փող չըկա՛յ,
Գդակս էին գըլխիս քաշում,
Ծաղրի աչքով սիրտըս մաշում:

Բայց... արցունքիս կուժն է՛լ չըկա՛յ,
Ու չի կանչում տրդամ պուճուր.
— Է՛յ, հաց տըւէ՛ք, ջո՛ւր տամ, պաղ ջո՛ւր:

ՅՈՒՂ. ՇԻՐԱԶ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուժ.— Սափոր, ջուրի աման:

Պուճուր.— Պղտիկ, փաշը:

Ղօղանջի.— (Ձայնը) ալիք — ալիք տարածուել օդին մէջ,
Թրթռալ:

Կարկաչի.— Հոսող ջուրին հանած մեղմ ձայնը կը կոչուի
կարկաչ. կարկաչել՝ մեղմ ձայն հանել: Կը գրուի նաեւ կար-
կաջ, կարկաջել:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Զփաւոր ընտանիքի գա-
ւալ՝ հեղինակը ունեցած է տխուր մանկութիւն մը.
ջուր ծախած է հացի դրամ շահելու համար: Այդ տը-
խուր ու մռայլ օրերը կ'ոգեկոչուին այս քերթուածին
մէջ: Ի՞նչ վերաբերում ունէին մարդիկ այս փոքրիկ
տղուն հանդէպ, եւ ի՞նչ կը զգար ինք, երբ գլխարկը
կը քաշէին, կը ծաղրէին, դրամ չէին տար: — Ի՞նչ կը
նշանակէ «արցունքիս կուժն էլ չկայ»: Ո՞րն է այս
քերթուածին մէջ տիրող զգացումը: — Ուրիշ քերթ-
ուածներու մէջ հեղինակը կը յիշէ միշտ իր մանկու-
թիւնը, մայրը, հայրը, անոնց վիշտն ու արցունքը.
ախա՛ քառեակ մը, ուր զգալի է յուզումը.

Մօրըս սըրտի հետ աշխարհն եմ չափել,
Էլի մեծ էր նա, մեծ էր ու անդին.
Նա աշխարհով մէկ արցունք է թափել,
Գիշերներ հաշուել իմ խեղճ օրոցքին:

Փորձեցէ՛ք դուք ալ շարադրութիւն մը գրել ձեր
մօրը մասին, կամ քանի մը դրուագներ յիշել ձեր ման-
կութենէն:

47. ԱՐԻՍՏՈՂՈՍ ԱՂԱՅԻՆ ԲԵՌՆԵՐԸ

1

Բեռնակիրները, դուռնէն ներս մտնելով, բեռները
զետին ձգեցին եւ սկսան իրենց քրտինքը սրբել:

— Արիստղոմ աղայինը ըլլալու եւ ասոնք, այն-
պէս չէ՞, — հարցուց թխագէմ տիկինը:

— Անունը չըսաւ մեզի, — պատասխանեց բեռնա-
կիրներէն մին եւ շարունակեց սեւ թաշկինակովը դը-
խուն քրտինքը սրբել:

— Ի՞նչ տեսակ մարդ էր:

— Խոշոր թիկնոց մը հագած էր:

— Ի՞նչ գոյնով էր, ճերմա՞կ թէ՞ թուխ:

— Ո՛չ, սեւ էր:

— Սե՞ւ էր:

— Այո՛, բայց աղուոր:

Տիկինը, բեռնակիրին տուած բացատրութենէն
պո՛հ, հրամայական եղանակով մը ըսաւ.

— Սա անկողինն ու սնտուկները վեր հանեցէք:

Բեռնակիրները, հնազանդելով, բեռները նորէն
վերցուցին եւ, հաղիւ թէ ասնդուխին առաջին աստի-
ճանին վրայ կոխած էին, տիկինը պոռայ.

— Լեռնէ՞ն եկաք դուք:

— Ո՛չ, մեծ փողոցէն եկանք:

— Գիտեմ, որ մեծ փողոցէն եկաք. այդ ոտքի
ամաններով վեր կ'ելլուի՞, տեսէք ի՞նչ ըրիք տախտակ-
ներս. ես այսօր սրբեցի պանոնք եւ հողիս բերանս եկաւ:

— Ի՞նչ ընենք, ուրիշ ոտքի աման չունինք:

— Ինչո՞ւ կ'այնք երեսս կը նայիք, չհանէ՞ք տը-
ւոնք:

— Մի՛ պոռար, տիկին, մի՛ պոռար. կը հանենք:
Եւ հանեցին իրենց ոտքի ամանները, սրոնք աւելի
մաքուր էին, քան իրենց ոտքերը:

— Ա՞յդ ոտքերով վեր պիտի ելլէք, — կրկնեց տի-
կինը:

— Աւրիշ ոտք չունինք, այս ոտքերով պիտի ել-
լինք, — պատասխանեցին պանդուխտները այնպիսի
խեղճուկ կերպով մը, որ կարծես թէ իրենց աղքատու-
թեան պատճառաւ երկու ոտքէն աւելի չէին կրցած ու-
նենալ եւ իբր թէ հարուստները չորս, հինգ կամ վեց
ոտք ունեցած ըլլային:

— Վա՛ր իջէք, չեմ ուղեր, զետինը ձգեցէք, ես
կը տանիմ:

— Ատանկ աւելի աղէկ կ'ըլլայ:

— Ա՛խ, ես ի՞նչ ըսեմ իմինիս, որ գործի չեր-
թար եւ առտուրնէ մինչեւ իրիկուն սրճարանները կը
նստի. աղբային գործերու վրայ կը խօսի, զիս ասանկ
խեղճ կը թողու եւ ես կը ստիպուիմ տունս մարդ դը-
նել, — մրմռաց ինքնիրեն տիկինը եւ ասնդուխին ա-
ռաջին աստիճանը սրբել սկսաւ:

— Տիկին, մենք սպասե՞նք պիտի...

— Եթէ խելքը գլուխը մէկը ըլլար, — շարունակեց
տիկինն ինքնիրեն, — ես հիմա թաղուհիի պէս կեանք
կ'անցընէի. դաւակ չունիմ, բան չունիմ, բայց ի՞նչ
ընեմ, որ խելքը-միտքը թաղական ընտրելու եւ թա-
ղական վար ստանելու վրայ է: Աստուծմէ պանսն այն
թաղականներն ալ, որ ամենուս խեղճութեանը պատ-
ճառ կ'ըլլան կոր: Ինչու՞ր պէաք քուկին, սնաչէ՛ն,
ուզողը նստի, չուզողը չնստի. դո՞ւն մնացիր այս ալ-
զին գործերը շփող...

— Տիկին, մեր իրաւունքը տուր, որ երթանք,
պարսպ տեղը չսպասե՞ք հոս, — ըսին բեռնակիրները:

— Վաղը եկէք, — պատասխանեց տիկինը, եւ բնո- նակիրները, որոնք «վաղը» բառը ամէն օր լսելով վարժուած էին, տիկնոջ պատասխանին վրայ դուռնէն դուրս ելան:

?

Տիկինը դեռ ընդուցած չէր իր զխտորութիւննե- ըրը, եւ ահա եօթանասունի մօտ մարդ մը ժպտելով ներս մտաւ եւ բարեւեց տիկինը: Այս մարդը տիկնոջ ամուսինն էր: Հաղիւ թէ զրան սեմէն ներս ոտք կո- խած էր, կինը հարցուց.

— Ո՞ր էիր մինչեւ հիմա, մա'րդ Աստուծոյ:

— Ձեռ ըսեր, կնի'կ, թաղականին զործն ալ այ- սօր ընդուցինք: Կիրակի օրը քուէարկութիւն պիտի կատարուի, եւ բոլոր անդամները պատուաւոր մար- դիկ պիտի ըլլան: Թորոս աղան ինծի քանի մը օղի խմցնելով ետեւէս ինկաւ, որ իր ուղած մարդոցը քուէ տամ: Բայց ես իմ մարդոցս տուի, վասն զի իմ մար- դիկս ինծի ամէն գիշեր օղի կը խմցնեն եւ բարի ու պատուաւոր մարդիկ են...:

— Այդ խօսքերուն ատենը չէ հիմա, շուտ դնա կտոր մը միս ա'ւ:

— Թորոս աղան քիչ մը սրղողեցաւ եւ ասկէ վերջ հետս սխաւպիլ պիտի չխաղայ. թող չխաղայ...:

— Ես քեզի ի՞նչ կ'ըսեմ կոր... շո'ւտ ըրէ, դնա':

— Ես ալ տիրացու Մարտիրոսին հետ տամա կը խաղամ ասկէ ետքը:

— Այդ խօսքերը վերջն ալ կ'ընենք, Մանու'ւկ ա- զա, հիմա մասվաճառէն քիչ մը միս առ ու բեր:

— Այս գիշեր անպատճառ միս պէ՞տք է:

— Հապա՛, Աբիսողոս աղային անկողինն ու սըն- տուկները բերին, ինքն ալ հիմա կու գայ:

— Իրա՞ւ կ'ըսես, կնի'կ:

— Սուտ ինչո՞ւ պիտի խօսիմ:

— Շատ աղէկ ուրեմն, երթամ պատուական միս մը առնեմ ու գամ:

Մանու'ւկ աղան անմիջապէս տունէն դուրս ելաւ եւ հաղիւ թէ քանի մը քայլ առած էր, կինը ետեւէն պո- ռալ սկսաւ.

— Մանու'ւկ աղա, Մանու'ւկ աղա...:

Մանու'ւկ աղա ետ դարձաւ:

— Միսը ինչո՞վ պիտի եփենք, — հարցուց կինը:

— Կ'ուզես գետնախնձորով եփէ, կ'ուզես լուբիա- յով:

— Աս չէ իմ ըսածս, ամուխ չունինք, քիչ մըն ալ ամուխ առնէիր:

— Շատ աղէկ, — պատասխանեց Մանու'ւկ աղան եւ սկսաւ քալել:

— Մանու'ւկ աղա, Մանու'ւկ աղա, — կանչեց տի- կինը նորէն:

Ես դարձաւ Մանու'ւկ աղա:

— Աղէ'կ ա, մինակ մ'եսով չ'ըլլոր, քիչ մըն ալ բրինձ առ, որ ապուր մըն ալ շինենք:

— Աղէկ ըսիր, կնի'կ, քիչ մըն ալ բրինձ առնենք: Մանու'ւկ աղա այս անգամ վաղելով սկսաւ երթալ. փողոցը դառնալու վրայ էր, երբ կինը ամբողջ ձայն- վը դասն կանչեց:

— Մանու'ւկ աղա, Մանու'ւկ աղա... Ման...:

Կանդ առաւ Մանու'ւկ աղա եւ վերստին ետ դար- ձաւ, այս անգամ դէմքին դուռաթուրեթեան վրայ քիչ մը վեղչ ընելով:

— Ի՞նչ կ'ուզես...:

— Մա'րդ Աստուծոյ, չոգեկառքի պէս կը վաղես, ձայնս մարեցաւ: Սոխ չունինք, աղ չունինք, քիչ մըն

ալ կազ առնելու է, որ վաճենք, մարդը մութի՞ն պիտի նստեցնենք:

— Աղէ՛կ ա, ամէնը մէկէն ըսէ, որ նպարավաճառին երթամ եւ պէտք եղածները առնեմ:

— Զուրի շիշ ալ չունինք... դու ինչ կապելու բան մը չունիմ, ոտքս հագնելու կօշիկ չկայ, այս վիճակին մէջ ի՞նչպէս Արիստոյոմ աղային դէմը ելլեմ:

— Հիմա ուտելիքը առնենք, վազն ալ հագնելիքը կը մտածանք, — ըսաւ Մանուկ աղա եւ զուռը ուժով մը քաշելով դուրս ելաւ:

— Մանուկ աղա, Մանուկ աղա...

— Ուղածիդ չափ պրուա, ա՛լ ետ չեմ դառնար, — մըմոսայ Մանուկ աղա եւ ճամբան շարունակեց:

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիկնոց. — Վերաբիւ:

Սրգողի. — Բարկանալ, նեղանալ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ո՞վ է այս պատմութեան մէջ յիշուած Արիստոյոմ աղան: Ո՞րն է Մանուկ աղայի բնատրութեան յատկանշական կողմը, իսկ իր տիկնո՞ջը: Ի՞նչ տեսակ այր ու կին էին այս երկուքը: — Տեսնուած պատրաստութիւնները որո՞ւ համար էին ուրկէ՞ պիտի գար հիւրը, ի՞նչ ընելու: — Կրնա՞ք լրացրնել այս պատմութիւնը: — Յակոբ Պարոնեան գրականութեան ո՞ր սեռը մշակած է մասնաւորաբար ուրո՞մք եւ ի՞նչ բան ուզած է ծագրել:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ. — 1. Կայարանին մէջ՝ տեղ մը երթալու կամ տեղէ մը վերադառնալու ատեն, 2. Բեռնակիրը, 3. Կառապանը:

48. Մ Ր Յ Ո Ւ Մ Ը

(Ա. ՄԱՍ)

1

Կօշիկակարի աշկերտաց «Այգաժամարտ» եւ կօշիկի ներկարարներու «Գոյամարտ» Փութպոլի խումբերուն մըցումը տեղի ունեցաւ խառնեքամ հանդիսականներու... բացակայութեան:

Գերեզմաններու ետին տարածուած բաց դաշտը ամէն յարմարութիւն կը ներկայացնէր խաղալայր մը դառնալու: Պէտք ունէր կարգ մը յարգարանքներու, — մաքրել քարերը, չտակել տեղ-տեղ շէտուած ելեւէջները, տնկել բերդին ձողերը եւ դծել սահմանները:



Բերդին ձողերը իսկոյն փոխարինուեցան քարակոյտերով, եւ ոտնաչափը ճշդեց իւրաքանչիւրին հաւատար բացուածքը: Կը մնար բարձրութիւնը, սրուն պայմաններուն չափանիշ որոշուեցաւ բերդապահներու վեր յատկելու կարողութեան տարիճանը:

Իրաւարարը պատկառաղբու մէկը կ'երեւէր իր անծախս դէմքով եւ դանդաղ շարժումներով: Երկու խումբերուն ալ վստահութիւնը շահած էր, սրովհետեւ ո՛չ կօշիկակար էր, ո՛չ ներկարար: Արհեստով դերձակ

էր, հետեւաբար չէրոք դօտիի մտրդ: Պատճառ մը չու-
նէր խումբերէն մէկուան կամ միւսին կողմը բռնելու:

«Ազատամարտ»ի եւ «Գոյամարտ»ի մարդիկներէն
իւրաքանչիւրը տեսակ մը հազուադէպ կը կրէր: Ոմանք
կարճ տաբատով էին, ուրիշներ՝ երկար. ոմանք հա-
նած էին տարատները, ուրիշներ վարի մասը սոթամած
եւ դուրպային մէջ խոթած: Կային խաղացողներ, ու-
րոնք ճերմակ թաշկինակ մը կապած էին իրենց ճակա-
տը, Փութպոլը գլխով աւելի լաւ հարուածելու համար
անշուշտ: Կային խաղացողներ ալ, որոնք դուրպայ
չունէին: Իսկ կօշիկներու այլազանութիւնը ցուցա-
հանողէս մը կրնար լեցնել:

Արսէն ծանր կիսակօշիկ մը ամբացուցած էր սա-
քին, մասնաւոր կապերու միջոցաւ: Աւետիս եւ Սեդ-
րակ իրենց սովորական կօշիկներով էին, իսկ Վահան
ճարած էր թեթեւ ու ծակոտկէն սանտալ մը, այն
պարզ պատճառով, որ կօշիկը շատ խոշոր ըլլալուն
ոտքէն կ'ելլէր միշտ:

2

Մարդիկները վազելով դաշտ իջան, քով քովի շար-
ուեցան մէկ գծի վրայ, պատուի կեցան բացակայ հան-
դիսականներուն առջեւ, «հուռոտ» կանչեցին եւ յետոյ
միայն դրաւեցին իրենց տեղերը: Խումբերը բազկա-
ցած էին եօթնական հոգիէ:

Խմբապետները — Արսէն եւ Մանուկ — արծաթ
դրամ մը օդը նետելով ճշգրեցին բերդակողմերու ընտ-
րութիւնը եւ, զնդակին հարուած տայէ առաջ, վե-
հանձնօրէն սեղմեցին իրարու ձեռք, յանուան «Ազատա-
մարտ» եւ «Գոյամարտ» մրցորդ խումբերուն:

Արսէն ստանձնած էր կեդրոնապահի դժուարին
պաշտօնը, ամէն ուղղութեամբ վազելու իրաւունքով:

Աւետիս յետապահներէն մէկն էր, իսկ Սեդրակ եւ
Վահան կը դռնուէին յոռաջապահ գծին վրայ:

— Տղա՛ք, մեռնիլ կայ, յաղթուիլ չկայ, դիտցած
եղէք, — դռնեց Արսէն ու խաղը սկսաւ բռնան թափով:

Աւետիսը է ըսել, թէ խաղը կանոնաւոր չէր ընթա-
նար. կոշտութիւններ տեղի կ'ունենային. զնդակին
վրայ յարձակելու տեղ՝ խաղացողները երբեմն իրարու
վրայ կը նետուէին. կարգի ու կանոնի ըմբռնում չկար:

Արսէնին ձայնը, ուրիշներու կարգին, տեւաբար
կը հնչէր, մերթ քաջաբերելով զնդակը լաւ հարուա-
ծող մը, մերթ հայհոյելով անճարակի մը:

Մ. ԻՇԽԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ֆութպոլ.— Հայերէնը՝ ստանդարտ:
- Յարդարամբ.— Զարդարանք, վայելուչ ձեւ մը տալ, կար-
գաւորել:
- Իրաւարար.— Իրաւունքը ճշգրտ, արդար դատաստան ընող:
- Պատկառազդու.— Պատկառանք ազդող, խիստ յարգելի:
- Ծախտակէն.— Մանր ծակեր ունեցող, ծակ-ծակ կօշիկ:
- Սանտալ.— Հողաթափի ձեւով պարզ կօշիկ:
- Յետնապսի.— Խաղի ատեն կտէր կեցող, ետեւի կողմը՝
թիկունքը պահող: Հակամիւր՝ յոռաջապահ:

Մ. ԻՇԽԱՆ.— Բուն անունն է Մուշեղ ձեկտէրեկեան: Ծնած
է Սիվրիհիսար (Թուրքիա), 1913ին: Ուսումը ստացած է Դա-
մասկոսի, Կիպրոսի եւ Պէրոսի հայկական վարժարաններում
եւ Պրիւսէի համալսարանին մէջ: Կը գրադի ուսուցչութեամբ
եւ գրականութեամբ: Գլխաւոր երկերն են «Տունբու երգը»,
«Կրակը», «Հայաստան», «Կեանք եւ երազ», «Ողջոյն քեզ կեանք»,
«Տառապանք» եւ որբերու կեանքին ստեղծած երկու վեպ՝ «Հացի
եւ լոյսի համար» եւ «Հացի եւ սիրոյ համար»: Ունի մաքուր ու
խնամուած լեզու:

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ներկայացուած է փութպոլի խաղ մը, որուն կը մասնակցին որք տղաք: Այս առթիւ խօսիլ մարգանքի, մարգական խաղերու եւ մարգական շարժման մասին: Տալ չորս բնկերներուն բնաւորութեան գլխաւոր գիծերը: Անոնցմէ ո՞վ ամենէն աւելի կը գրաւէ ձեր համակրանքը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Կորուսման կանոնին համաձայն, կարգ մը ձայնաւոր գիրեր բոլորովին կը կորսուին ածանցումի եւ բարդութեանց առեւ. օրինակ՝ լուս - լոսի - լուսիւն, լուր - լրագիր - լրաբեր, սիրտ - սրտագին - սրտոտ, գիր-գրել-գրաւոր:

ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — 1. Ընկերական հաւաքոյթ մը դաշտին մէջ. 2. Ներկայացուցե՛ք ձեր ծնողքը. 3. Վէ՛ն մը՝ ձեր դասարանի տղոց հետ:

49. Մ Ր Յ Ո Ւ Մ Ը

(Բ. ՄԱՍ)

1

Առաջին կիտախաղը վերջացաւ մէկ առ մէկ հաւասար արդիւնքով: Գաղարի պահուն երկու խումբերուն մրցողներն ալ դոհունակ եւ յուսալից երեւոյթ մը ունէին: Խմբապետները, մրցող տղաքը իրենց չուրջ հաւաքած, թերիները մատնանշեցին եւ թելադրանքները ին խաղի մնացեալ մասին համար: Անոնց խօսքին ու ձայնին մէջ զգալի էր փորձ ուղղման գետի ինքնավստահութիւնը. կը բաւէր այսպէս հարուածել, այնպէս դիրք բռնել, եւ հակառակորդը ծունկի կու գար:

Երկրորդ կիտախաղը սկսաւ աւելի բուռն թափով: Իրարանցումի պահէ մը օգտուելով՝ Սեղրակ յանկարծ զնդակը առաւ եւ առաջ սուրաց: Արիւնը կ'եռար երակներուն մէջ. վաղքի թափը կարծես թեւեր կու տար իրեն: Արագ նայուածք մը նետեց չորս դին. դաշտին մէկ կողմը իբրեւ հանդիսատես կեցած էին քանի մը բոկոտն լաճեր, իսկ միւս կողմը կարդով շարուած էին երկվեցեակ մը ներկատուներ: Ուրիշ ոչ մէկ դիտող:

Սեղրակ անդուսպ եւ անդիմադրելի դարձաւ: Վրան յարձակողները մի առ մի տապալեցան կամ ընկրկեցան եւ ինք, զնդակը ոտքին առջեւ, մինակ մնաց հակառակորդի բերդին դիմաց: Բերդապահը աջ ու ձախ կ'երթեւեկէր տաղնապահար: Ո՞ր անկիւնէն պիտի գար արդեօք հարուածը: Սեղրակ մօտեցաւ, ականթարթ մը չափեց բերդապահին շփոթ դիրքը եւ ուժեղ հարուածով մը զնդակը տեղաւորեց բերդէն ներս:

«Գոյամարտ» յաղթական էր մէկի դէմ երկու արդիւնքով:

Մեծ եղաւ խանդավառութիւնը. ընկերները համ-
բուրեցին զինք: Մրցումը շարունակուեցաւ նոյն թա-
փով. բայց, շատ չանցած, պատահեցաւ աղէտը. «Ա-
զատամարտ» հաւատարեցաւ երկրորդ կէտով մը:

Այնուհետեւ խաղը դանդաղեցաւ, ու տիրեց չիտի
կայութիւն: Արտէն ամէն տեղ էր, պոռալով, հեւալով
կը վազվզէր զնդակին ետեւէն, լեզուն դուրս ինկած:
Ի՞նչ օգուտ, ընկերները ընկեր չէին որ... մանաւանդ
սա Վահանը, անպէտք շուք մըն էր պարզապէս:

Մրցումը աւարտելու քանի մը վայրկեան մնացած
էր, բայց հաւատարութիւնը կը շարունակուէր: Պէտք
էր շարժիլ, պէտք էր բան մը ընել, պէտք էր դերա-
զոյնը փորձել:

— Վահան, ինչո՞ւ չես վազեր, կերածդ յա՞րդ է,
ի՞նչ է, — պոռայ Արտէն հետուէն:

Ո՛չ, Վահանի կերածը յարդ չէր. բայց այն օրե-
րուն, երբ մարդ ջիզ ու մկան կը կապէ, Վահան յարդն
իսկ չէր գտներ Տէր-Չօրի անապատներուն մէջ: Ու
հիմա սնամէջ եղէզներու պէս կը դողային իր սրունք-
ները մրցադաշտին վրայ:

Սակայն յանկարծ սթափում մը ունեցաւ Վահան,
արտահարդ ճիզ մը ըրաւ, խլեց զնդակը, չվախցաւ
վրան յարձակողներէն, ճարպիկութեամբ ճեղքեց պա-
շարման շղթան եւ, ո՛վ հրաշք, զնդակին հետ միասին
ներս մտաւ հակառակորդ կողմի բերդէն:

Անհաւատալին իրագործուած էր. «Գոյամարտ»
յաղթական էր երկուքի դէմ երեք արդիւնքով:

Քրտնաթուր եւ փոշեթաթախ, մրցորդները հա-
ւաքուեցան իրարու քով եւ «հուռոտ» պոռային: Սեդ-
րակ ձեռքը վեր բարձրացուց եւ յայտարարեց հանդի-
սաւոր շեշտով մը. — «Ազատամարտ»ները կրնան պար-
տւել, բայց «Գոյամարտ»ը՝ երբե՛ք»:

Երբ աղաքը շալկեցին իրենց ներկատուները եւ
պատրաստուեցան խաղավայրէն մեկնելու, տեսան, որ
Վահանը չկար: Վերջին գրոհով մը խումբին պատիւը
փրկող հերոսը անայլայլ նստած էր հեռուն, քարերու
կոյտի մը վրայ: Չայն տուին, բայց ան չչարժեցաւ
տեղէն. գլուխն իսկ չբարձրացուց: Սեդրակ, տխուր
նախազգացումէ մը մղուած, վաղեց քովը:

— Ի՞նչ ունիս, Վահան, ինչո՞ւ նստեր ես:

Վահան չպատասխանեց: Մեռելի պէս սոգոյն էր:
Թաշկինակը բերնին՝ կ'աշխատէր խեղդել կուրծքը
չարչրիող սովորական հաղը:

— Վահան, ի՞նչ ունիս, ո՞րտեղդ վերաւորեցիր.
Թաշկինակը ամբողջ արիւն է, — բացաղանչեց Սեդրակ:

Վահան փորձեց պատասխանել, բայց ներքին կրծ-
կում մը պատճառ եղաւ, որ թաշկինակը աւելի ամուր
սեղմէ բերնին:

— Սա ձեռքդ քաշէ, որ բան մը տեսնենք, ահու-
յէ՞ղ է արիւնը թէ շրթունքէդ:

— Ո՛չ, ո՛չ, սրտեղէն է, սրտեղէն, — շնչեց վեր-
ջապէս Վահան, ձեռքը կուրծքին դնելով:

Սեդրակ նշան ըրաւ, եւ միւս ընկերներն ալ հա-
ւաքուեցան: Չուր փնտռեցին Վահանի երեսն ու բե-
րանը լուալու համար, բայց այդ կողմերը Չուր չկար:

— Բան մը չէ, կ'անցնի. երեւի՝ կոկորդէդ է, —
ըսաւ Աւետիս:

— Տեսա՞ր ինչպէս յաղթեցինք, — վրայ բերաւ
Արտէն, — Աստուած զօրաւորներուն հետ է:

Վահան ժպտեցաւ, աւելի ճիշդ՝ ջանաց ժպտիլ,
ըսել ուզելով կարծես. «Յաղթեցինք, բայց նայէ՛ վի-
ճակս»:

Մութը կոխած էր. դաշտը ամալացաւ ամբողջո-

վին: Չորս հաւատարմ. ուխտակիցները հոն էին դեռ ու կը սպասէին, որ իրենց հիւանդ ընկերը ուժերը վերադառնէ քիչ մը: Յոգնած էին բոլորն ալ, բայց չէին զգար իրենց յոգնութիւնը: Խանդավառուած էին իրենց յաղթանակով:

Վահանի արիւնահոսութիւնը դադրեցաւ քիչ-քիչ եւ դէմքին վրայ կրկին խաղաց թեթեւ կարմրութիւն մը: Աւետիս իր սնտուկին հետ շալկեց նաեւ Վահանի ներկատուփը, Սեդրակ թեւը մտաւ եւ դանդաղօրէն յառաջացաւ դէպի որբ խցիկը իրենց որբ ընկերոջ:

Մ. ԻՇԽԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թագաւագէտ.— Թաղմ (պատերազմ) եւ դէտ բառերէն կազմուած բարդ բառ. կը նշանակէ կռիւի, պատերազմի ծրագիրը կազմող եւ անոր դործադրութիւնը ղեկավարող:

Լաճ.— Մանչ աղայ:

Երկվեցեակ.— Երկու վեց, տասներկու:

Ընկրկիլ.— Ետ քաշուիլ:

Տագնապահար.— Տաղնապի, դժուար կացութեան մատնուած, չփոթած:

Սնամէջ.— Սին (պարսպ) եւ մէջ բառերէն կազմուած, մէջը պարսպ:

Արտակարգ.— Կարգէ դուրս, արտասովոր, անսովոր:

Գրոհ.— Յարձակում. գրոհել՝ յարձակիլ:

Ամայամալ.— Ամայի՝ անրնակ դառնալ, պարպուիլ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Կրնա՞ք ըսել, թէ ի՞նչ կանոններ պէտք է յարգել փութպուլի մրցումներու ատեն: — Այդ կանոնները յարգուած են երկու խումբերու մրցումին մէջ: Ի՞նչ կը նշանակէ առաջին կիսախաղ, երկրորդ կիսախաղ: Ի վերջոյ ո՞ր խումբը յաղթական ելաւ: — Ի՞նչ կրնաք ըսել Վահանի մասին:

50. Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ

Շոյ ու շրաշյ աշս աշխարիում,
Հրայրքներում, հմայքներում,
Սրտիդ խորունկ խորքում ընկած՝
Քո Հայաստան աշխարհն եմ ես:

Շքեղ լեզուով ինչքան կանչեմ
Ու կախարդեմ շրաշյ խօսով,
Քո վշտին՝ քոյր, քո ցրտին՝ հուր —
Քո մայրեցի բարբա՛ռն եմ ես:

Ինչքան գերեմ քեզ ուսաններն
Ու պալատները մարմարի,
Պահած մեր ոգն ու մեր ոգին՝
Հայոց ազնիւ խաչքարն եմ ես:

Հազար գետ կայ, հազար ծովեր,
Ովկիաններ կան հրգօրաշունչ,
Թէեւ փոքրիկ, բայց խո՛րն ու վեր՝
Քո մաքրաջուր Սեւանն եմ ես:

Ո՛ր էլ լինես, ո՛ր երկրի մէջ,
Գիտեմ, կը գա՛ս, իմ հեռաւո՛ր,
Չէ՞ որ դարձիդ մամբին մայոց,
Խոր կարօտած քո վանն եմ ես...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Հրայրբ.— Կարօտ, սէր, տենչանք:

Ոստան.— Մեծ քաղաք, մայրաքաղաք:

Խաչքար.— Քար, որուն վրայ քանդակուած կ'ըլլայ զարդարուն խաչ մը:

Մաքրաչուր.— Մաքուր, յստակ ջուր ունեցող:

ԹԵԼԱՂԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ի՞նչ զգացումներ արտայայտուած են այս ֆերբուածին մէջ Հայաստանի, հայ լեզուի, հայրենի բնութեան եւ քաղաքներու մասին: — Կը յիշե՞՞ք, թէ ո՛ր ծնած է հեղինակը. ո՞ր քաղաքէն գաղթած էին իր ծնողքը: — Կարդացա՞՞ծ էք Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» խորագրով ֆերբուածը:



Ն Ի Ի Թ Ե Ր ՈՒ Ց Ա Ն Կ

Հեղինակ	Դ Ա Ս	Էջ
1. Յովհ. Թումանեան	Հին օրհնութիւն	3
2. Ծերեմնց	Հերոսին մահը	6
3. Գր. Զօրբալ	«Ռ հեռատանէ»	13
4. Ռ. Որբերեան	Գիւղիս ճամբան	17
5. Յ. Պարսեան	Մանուկ աղային պատմածը	20
6. Ա. Ահարոնեան	Դատաստանը	26
7. Դ. Վարուժան	Կարօտի նամակ	34
8. Մ. Սվանեան	Մանիշակի թաղարը	38
9. Շիրվանգաղէ	Դէպի պանդխտութիւն	41
10. Սիպիլ	Հայ լեզուին	47
11. Ստ. Կուրտիկեան	Արարատ (Ա. մաս)	50
12. Ստ. Կուրտիկեան	Արարատ (Բ. մաս)	56
13. Վ. Թէֆէեան	Մանկութեան իղձ մը	61
14. Մուրացան	Մովսմարտ (Ա. մաս)	63
15. Մուրացան	Մովսմարտ (Բ. մաս)	67
16. Ս. Տարօնցի	Արամ	71
17. Զ. Եսայեան	Մեծ մայրիկս	73
18. Ա. Իսահակեան	Ո՞վ է ապրում	79
19. Արսէն Երկաթ	Սպարապետ Մամիկոնեան	85
20. Դ. Դեմիրճեան	Արծուին (Ա. մաս)	88
21. Դ. Դեմիրճեան	Արծուին (Բ. մաս)	92
22. Սարմէն	Գաղել մանկութեան մասին	96
23. Զ. Ասատուր	Կաղանդի նուէր	98
24. Ստ. Զօրեան	Ազահը	103
25. Յովհ. Շիրազ	Հին մանկութիւն	107
26. Եր. Սրմախչեան	Դպրոցական յիշատակներ	109
27. Արամ Հայկազ	Տղա հոգիներ	113

ՀԵՂԻՆԱԿ	Գ Ա Ս	Էջ
28. Ս. Կապուտիկեան	<i>Արարատ</i>	110
29. Ղ. Ազայեան	<i>Արեղնազան (Ա. մաս)</i>	121
30. Ղ. Ազայեան	<i>Արեղնազան (Բ. մաս)</i>	124
31. Գ. Մահարի	<i>Գաղել Հաշտութեան</i>	128
32. Գր. Զօհրապ	<i>Կոտրելէն ետքը</i>	130
33. Վ. Թոքովեց	<i>Մարանը</i>	134
34. Նիկիտ Զարեմց	<i>Գեղոն մանկութեան մասին</i>	140
35. Լեռ - Կամսար	<i>Թէ ինչպէս զերի ինկայ</i>	143
36. Վ. Ամանեան	<i>Արջի «աղայանք»ը</i>	148
37. Արմէն Անայշ	<i>Մանկութիւն</i>	152
38. Ա. Անարոնեան	<i>Հայկական վանք</i>	154
39. Մերեմց	<i>Հայկական հողին վրայ</i>	159
40. Խ. Դաշտեմց	<i>Յարդը գնում է...</i>	165
41. Համաստեղ	<i>Նապաստակի մը օրագրերը</i>	167
42. Շ. Նարդունի	<i>Ո՛ր տայր ինձ...</i>	171
43. Վ. Թէֆէեան	<i>Լեզուն, սրով գրեցի</i>	177
44. Վ. Խեչուեան	<i>Թաթուլ եւ Տուղրիլ</i>	178
45. Բ. Նուրիկեան	<i>Կովուն գլուխը</i>	184
46. Յով. Շիրազ	<i>Ջուր ծախողը</i>	188
47. Յ. Պարոնեան	<i>Աբխազոմ աղային բեռները</i>	190
48. Մ. Իշխան	<i>Մրցումը (Ա. մաս)</i>	195
49. Մ. Իշխան	<i>Մրցումը (Բ. մաս)</i>	199
50. Ս. Կապուտիկեան	<i>Հայաստան աշխարհ</i>	203

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ

Լ. Ո.

1. ՀԱՅԿԱՐԱՆ, Նախագատրաստակամ	10
2. ՀԱՅԿԱՐԱՆ, Ա. տարի	10
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Բ. տարի	10
4. ՀԱՅԿԱՐԱՆ, Գ. տարի	12
5. ՀԱՅԿԱՐԱՆ, Դ. տարի	14
6. ՀԱՅԿԱՐԱՆ, Ե. տարի	16
7. ՀԱՅԿԱՐԱՆ, Զ. տարի	18
8. ՀԱՅԿԱՐԱՆ, Է. Ը. տարի	20

ԳԻՆ՝ 16 Լ. Ո.

Կեդրոնատեղի

LIBRAIRIE HAMASKAÏNE
10, Rue Hussein Beyhoum
Zokak el Blatt
Beyrouth — Liban